

# ԷՋՄԻԱԾԻՆ



1968

ՈՒՆ-9410.

ՌՆԺԷ  
ԻԴ ՏԱՐԻ  
Յ ՈՒՆՈՒՄԻ


# ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ա

1968

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԳՐԱԳՐԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԳՐԱԳՐԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ




Ի Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—ԱԵցճող տարին	էջ 3
Ամառոտի և Փրկչի հրաշափառ և սուրբ ՄՃԵղյան տաների առթիվ Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Խորհն Սուրբ Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Երավպետի կայսր, Խորհն Վեճափառություն Հայր Սեղաթի Ա-ի միջև փոխանակված հեռագրերը	5
Փրկչի հրաշափառ և սուրբ ՄՃԵղյան տաների առթիվ Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Խորհն Սուրբ Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Գույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողբույցի հեռագրերն ու գրությունները	0
Ամառոտի և Փրկչի հրաշափառ և սուրբ ՄՃԵղյան տաների առթիվ Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Խորհն Սուրբ Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և ճվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողբույցի հեռագրերն ու գրությունները	13
Հանդիսավոր սուրբ պատարագ և հայրապետական բարոզ Փրկչի հրաշափառ ՄՃԵղյան տանի առթիվ Մայր տաճարում	16
Պաշտոնականե՞ք	18
Հայրապետական արդար վճիռ	20
Ամառոտը հոգևոր հեմարանում	22
Մայր Աթոռի միտքան, Մեծի Ցանն Կիլիկիա հոգևույս Տ. Տ. Գաբրիել Ա Հովսեփյանց կաթողիկոսի ծննդյան հարյուրամյակի առիթով հանդիսություն հոգևոր հեմարանում	25
Ստեփանավանդան ձեռնադրություն ս. Ատեփանեսոսի տանի առթիվ	27
ԽԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ	28
Հայ Եկեղեցին սփյուռքում	31
Ա. ՀԱՏԻՏՏԱՆ—Համառոտ ակնարկ Մայր Աթոռ ս. Էջմիածնի պատմության վրա	32
Հ. ձ. ՍԻՐՈՒՆԻ—Կոմիտասի հետ	43
Ն. ԹԱՀՄԻՋՏԱՆ—Հուլիանականների հետհերով	49
Գ. ԱՐԳԱՐՑԱՆ—Շեքեամբ տաճարի շահիսիմեայ	57
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՎՈՒՑ	62

Հանձնված է արտադրության 27/XII 1967 թ.: Ստորագրված է տպագրության 29/I 1968 թ.:  
Տպագրական 4 մամուլ, Թուղթ 60x84/8, պատվեր 950

ԽՄԲԱԳՐՈՒՔՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ  
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒՔՅՈՒՆ  
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».  
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.  
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1968 թ.



Հ Բ Ա Մ Ա Ն Ա Ի

**Տ. Տ. Վ Ա Ջ Գ Ե Ն Ի Ա Ռ Ա Ջ Ն Ո Յ**

ՎԵՂԱՓԱՌ ԵՒ ՍՐԵԱՋՆԱԳՈՅՆ ՄԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### Ա Ն Ց Ն Ո Ղ Տ Ա Ր Ո Ն

Պատմության գիրկն անցավ ևս մի տարի՝ 1967 թվականը, թե՛ ողջ աշխարհի և մարդկության և թե՛ մեր եկեղեցու և մեր ժողովրդի համար, լարված աշխատանքով, իրադարձություններով և հաջողություններով հարուստ մի ժամանակահատված: Պայծառ զգացմունքներով և սրտագին երախտագիտությամբ ենք փակում 1967 թվականը:

Եվ ահա 1968 տարին է արդեն, որպես նոր կյանքի սպիտակ մատյան՝ բացված մեր արաջ:

Նոր տարին սկսել նորոգված հույսերով, թարմացած գալիք օրերի խոյանքով ու հնքով, անկոտրում հավատքով ու լավատեսությամբ, մաքուր խղճմտանքով ու ձեռքերով, համերաշխ մարդկանց և Աստուծու հետ:

Ապրելու զգացումին մեջ, ամեն տարի թարմանում, նորանում է մարդը և վաղվա նկատմամբ վառ հույսի, անկոտրում հավատի մեջ է, որ աշխարհը ավելի է զեղեցկանում, և զգացվում է կյանքի վեհությունն ու նպատակադրությունը, կյանքի երածոջտությունն ու հավերժի բերկրանքը:

Մարդու կոչումն է ժամանակն ու կյանքը լցնել ազնիվ գործերով, աշխատանքով:

Աստված միայն է հավիտենական, իսկ մարդը՝ սահմանավոր, նրա կյանքի օրերը համրած:

Սաղմոսերգուն իր փորձառությամբ շեշտում է կյանքի վաղանցիկ բնույթը:

Մարդու կյանքի օրերը, ամիսներն ու տա-

րիները «ընդ առաւօտս որպէս դալարի զընուարճացին և ծաղկեսցին, ընդ երեկոյս թարշամեսցին, չորացին և անկցին» (Սաղմ. 90՝ 8—7):

Քրիստոնեական մտածումի մեջ ներդաշնակվել են ժամանակի ու կյանքի խորհուրդները:

Նոր տարին ժամանակի տոնն է, իսկ Ծնունդը՝ կյանքի վերածննդի տոնը:

Այսպիսի սրտագին խոհերով ու զգացումներով, ինչպես նաև քրիստոնեական վառ հավատով ու լավատեսությամբ, հայ ժողովուրդը թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքում դիմավորում է նոր տարին և ս. Ծնունդը:

Ազգնող տարին մեր եկեղեցու, մեր ժողովրդի և մեր վերածնված հայոց աշխարհի համար եղավ աղոթքով, աշխատանքով, բարի արդյունքներով հարուստ ու պատմական մի տարի:

Ազգաիմ-եկեղեցական տեսակետից 1967 թվականը հիշատակելի տարի հանդիսացավ նրանով, որ Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ և հովանու ներքո, շարունակեց իր նախախնամական առաքելությունն ու դերը մեր ժողովրդի կյանքում:

Արդի աշխարհի հասարակական, քաղաքական պայմանների մեջ, սփյուռքում մանավանդ, հայ եկեղեցին է միակ հուսալի կովանը, ուր կարելի է իրագործել մեր հոգե-

վոր-ազգային միասնականությունը, անաղարտ պահելով նրա հովանու տակ մեր եկեղեցական ոգին ու նկարագիրը:

Սփյուռքում հայ եկեղեցին մեր օրերին, ի զից հուսադրիչ երևույթների և սրտազին ջանքերի, ապրում է իր պատմության հերոսական ու ծանր շրջաններից մեկը: Բայց կենդանի է մեր ժողովրդի մայր զանգվածը ու հայ հոգևորականության հուսալի ջոկատը, իրենց քարեպաշտության ու հավատքի, եկեղեցական ուխտապահության ու հայրենասիրության մեջ:

Այս ոգական ուժն ու վճռականությունը ունեցել են միշտ և ունեն նաև այսօր՝ 1968 թվի սեմին, մեր եկեղեցին ու հայ ժողովուրդը:

Անցնող տարվա հուլիսի 10—13 օրերը Վեհափառ Հայրապետի այցելությունը ԺՆՆ՝ եկեղեցիների համաշխարհային խորհրդի հաստատության կենտրոնին, Մայր Աթոռի գործունեության կարևոր իրադարձություններից մեկն էր:

Հայոց Հայրապետի այցելությամբ ամրապնդվում էր Մայր Աթոռ ս. Էջմիածնի՝ որպես հայ առաքելական եկեղեցու միակ ու պատմական կենտրոնի և այլ քրիստոնեական եկեղեցիների քարեկանապատկան կապերը էկումենիկ ոգով, հետագա ավելի սերտ համագործակցության ցանկությամբ:

Անցնող տարին ազնիվ հպարտության զգացմունքներով լցրեց ճշմարտապես հայրենասեր յուրաքանչյուր հայ մարդու սիրտը:

Հայ ժողովուրդը իր հայրենի սրբազան հողի վրա, ստեղծագործ և խաղաղ աշխատանքի պայմաններում նշեց իր ազգային, հոգևոր, մշակութային վերածննդյան 47-ամյակը:

Արդարև, 1967 թվականին մեծ ու պատմական եղանակով մեր հայրենիքի ու ժողովրդի նվաճումներն ու ձեռք բերած հաջողությունները: Մի տարի ավելի աճեց, մեծացավ ու հարքստացավ մեր ժողովուրդը, առնականացավ նրա ստեղծագործ ոգին:

Հայ ժողովուրդը իր խաղաղ ու ստեղծագործ աշխատանքներում չնոսացավ նաև իր նահատակներին և անցնող տարվա նոյեմբերի 28-ին Ծիծեռնակաբերդում՝ 1915 թվականի Ապրիլյան եղեռնի միլիոնավոր զոհերի հիշատակին կանգնեցրեց հավերժական, վեհաճիստ հուշարձան, որպես խորհրդանիշը նաև մեր վերածնած հայրենիքին ու ժողովրդին:

Վեհափառ Հայրապետը 1968 թվականի հունվարի 8-ին Մայր տաճարում խոսած ս.

Ծննդյան Իր գեղեցիկ քայրզում շեշտում էր. «Եվ խաղաղության ու ապահովության պայմաններում մեջ պիտի շարունակեն աճել և զարգանայ նաև մեր ժողովուրդը ամենուրեք, պիտի շարունակեն զորանայ ու ծաղկիլ նաև մեր վերածնած հայրենիքը՝ Հայաստան, արդար ուրախությունը և հպարտությունը անխտիր բոլոր անոնց, որոնք ճշմարտապես հայտ սիրտ սը կկրեն իրենց կործքին տակ:

Այս հանդիսավոր սուրբ պահին, Հայոց Հայրապետը խղճի պարտք կհամարե՝ Իր զավակներուն վերստին հիշեցնել մեր օրերու հայ կյանքի գերազույն ճշմարտությունը, թե առանց մայր երկրի չկա հայ ազգություն, չկա հայոց պատմություն, չկա հայոց ապագա:

Օրհնությո՛ւն, քյուր օրհնությո՛ւն հայոց մայր հողին՝ հայոց սուրբ հողին, հավերժական Հայաստանին:

Օրհնությո՛ւն և ստեղծարար աշխատանքի անպատեհանդ ամենայն հայոց հայրենիքը կերտող հայաստանցի մեր չարքաշ ժողովրդդին:

Շղիցի, եղիցի և եղիցի:  
Մայր Աթոռ ս. Էջմիածինը, հայ ժողովուրդն ու մայր հայրենիքը, նոր տարվա շնքին, ավելի քան երբեք հզոր, հավատով լի ու կենսունակ, կանգնել են իրենց յուսավոր ապագայի հանդեպ խանդավառող, եկեղեցաշեն, հայրենամար հեռանկարների առաջ:

Անցյալ յուրաքանչյուր տարին մեզ մոտեցնում է մեր նվիրական ազգային իղձերի իրականացման՝ հայության մեկտեղման հայրենի հողի վրա, ս. Էջմիածնի կենտար օրհնության ներքո:

Թո՛ղ 1968 թվականը լինի բովանդակ աշխարհի և հայ ժողովրդի համար խաղաղության, քարօրության և հայրենաշինության տարի:

Թո՛ղ 1968 թվականը ս. Էջմիածնի հավերժական հովանու և օրհնության ներքո լինի հայ եկեղեցու համար հոգևոր նոր վերագարթոնքի, ազգային-եկեղեցական միասնության և համերաշխության տարի:

Այս զգացմունքներով և խոհերով, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, «Էջմիածին» ամսագիրը շնորհավորում է բովանդակ հայության Ամանորն ու ս. Ծնունդը:

Շնորհավոր նոր տարի:  
Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ:





ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ  
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ  
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԾՈՌԻԹՅՈՒՆ  
Տ. Տ. Վ Ա Ջ Գ Ե Ն Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԵԹՈՎՊԻԱՅԻ  
ԿԱՅՍՐ, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-Ի  
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ,  
ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-ԻՆ

Ա Գ Ի Ս - Ա Բ Ե Բ Ա

Մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի սուրբ Ծննդյան և Աստվածամայության  
տոնների առիթով, հանուն Հայաստանյայց եկեղեցու, Մենք հաճույքն ունենք  
Ձերդ կայսերական Վեհափառության ներկայացնել Մեր սրտագին, ամենա-  
լավ բարեմաղթությունները:

Թող Ամենակալը Ձերդ Վեհափառությանը հաստատ ու փառավոր պահի  
կայսերական իր գահի վրա և Ձեր գեղեցիկ երկիրը պահի-պահպանի խաղա-  
ղության և բարօրության մեջ:

Օրհնությամբ՝

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Շ Ի Ն



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Վ Ա Ջ Գ Ե Ն Ա  
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Շ Ի Ն

Ամենաանկեղծ շնորհակալությունս ս. Ծննդյան տոնի առթիվ Ձեր բարի  
ցանկությունների և ազնիվ պատգամի համար, որը խորապես երախտապարտ  
է թողնումս Ս եզ:

ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ  
Կայսր Եթովպիայի

Ա Ս Մ Ա Ր Ա





ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԹ ԵՎ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ  
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ  
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ  
ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հոռմեական կաթողիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն  
Պ Ա Վ Ղ Ո Ս Ջ Պ Ա Պ Ի Ն (Հոռմ),  
Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական պատրիարք, Նորին Սրբություն  
Ա Թ Ե Ն Ա Ք Ո Ր Ա Ս Ի Ն (Ստամբուլ),  
Մոսկվայի և Համայն Ռուսաստանի պատրիարք, Նորին Սրբություն  
Ա Լ Ե Ք Ս Ի Ի Ն (Մոսկվա),  
Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի պատրիարք, Նորին Սրբություն  
Ք Ր Ի Ս Տ Ա Փ Ո Ր Բ - Ի Ն (Ալեքսանդրիա),  
Ղպտի ուղղափառ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն  
Ա Բ Ո Ւ Ն Ա Կ Յ Ո Ւ Բ Ե Ղ Ջ - Ի Ն (Ալեքսանդրիա),  
Երուսաղեմի հունաց պատրիարք, Նորին Սրբություն  
Բ Ե Ն Ե Գ Ի Կ Տ Ո Ս Ի Ն (Երուսաղեմ),  
Անտիոքի և Համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն  
Թ Ե Ո Գ Ո Ս Ի Ո Ս Ջ - Ի Ն (Դամասկոս),  
Անտիոքի և Համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն  
Մ Ա Ք Ս Ի Մ Ո Ս Գ - Ի Ն (Դամասկոս),  
Սիրիական օրթոդոքս եկեղեցու և Համայն Արևելքի պատրիարք, Նորին  
Սրբություն Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Հ Ա Կ Ո Բ Գ - Ի Ն (Դամասկոս),  
Համայն Եթովպիայի պատրիարք, Նորին Սրբություն  
Բ Ա Ս Ի Լ Ի Ո Ս Ի Ն (Ադիս-Աբեբա),  
Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն  
Բ Ա Ս Ի Լ Ի Ո Ս Ո Ւ Կ Ե Ն Ա - Ի Ն (Կերալա),  
Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն  
Ե Փ Ր Ե Մ Բ - Ի Ն (Թբիլիսի),  
Ռումեն օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն  
Ժ Ո Ւ Ս Տ Ի Ն Ի Ա Ն Ի Ն (Բուխարեստ),  
Բուլղար օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն  
Կ Ի Ր Ի Լ Ի Ն (Սոֆիա),

- Հիբանանի մարոնիտ պատրիարք, Նորին Արքունիություն  
Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Զ Ի Ա Պ Ի Ն (Բելրութ),
- Քենտրբերիի արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և  
միտրոպոլիտ, Նորին Արքունիություն դոկտ. Մ Ա Յ Է Լ Ռ Ե Մ Զ Ի Ի Ն  
(Լոնդոն),
- Աթենքի և Համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Արքունիություն  
Խ Ր Ի Ս Ո Ս Տ Ո Մ Ո Ս Ի Ն (Աթենք),
- Աերրիայի և Համայն Հարավարևմտյան պատրիարք, Նորին Արքունիություն  
Հ Ե Ր Մ Ա Ն Ի Ն (Բելգրադ),
- Համայն Ալբանիայի և Տիրանի և Տուրեստի միտրոպոլիտ, Նորին Արքունիություն  
Պ Ա Մ Ի Ա Ն Ո Ս Ի Ն (Տիրանա),
- Վարշավայի և Համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Արքունիություն  
Ս Տ Ե Ֆ Ա Ն Ի Ն (Վարշավա),
- Պրագայի և Համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Արքունիություն  
Գ Ո Ր Ո Ֆ Ե Յ Ի Ն (Պրագա),
- Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք, Նորին Ամենապատվություն  
Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Պ Ա Թ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Բելրութ),
- Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Արքունիություն  
Մ Ա Կ Ա Ր Ի Ո Ս Ի Ն (Նիկոզիա),
- Նորին Ամենապատվություն կարդինալ  
Ա Ղ Ա Զ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Վատիկան),
- Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար  
Բ Լ Ե Յ Կ Ի Ն (Ժնև),
- Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդ  
Լ Ո Ր Ի Ս Տ Ո Ն Լ Ե Վ Ի Ն Գ Ս Տ Ո Ն Ս Բ Ե Յ Յ եպիսկոպոսից  
(Նյու-Յորք),
- Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուծարական եկեղեցու արքեպիսկոպոս,  
Նորին Արքագնություն Գ Ո Ի Ս Ս Ա Վ Տ Ո Ի Ր Ս Ի Ն (Ռիգա),
- Էստոնական ՍՍՀ ավետարանական-լուծարական եկեղեցու արքեպիսկոպոս,  
Նորին Արքագնություն Յ Ա Ն Կ Ի Յ Վ Ի Տ Ի Ն (Տալլին),
- Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,  
Վերապատվելի Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ա Հ Ա Ր Ո Ն Յ Ա Ն Ի Ն  
(Բելրութ),
- Ճրանչիսկյան միաբանության կուստոդ  
Հ. Լ Ի Ն Ո Ի Ս Կ Ո Պ Պ Ի Ե Լ Լ Ի Ի Ն (Երուսաղեմ),
- ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ,  
Գերարժանապատիվ հայր Ռ Ո Ի Բ Ե Ն Մ Յ Ո Ի Լ Լ Ե Ր Ի Ն  
(Նյու-Յորք),
- Մոնակոյի եպիսկոպոս, Գերաշնորհ Շ Ա Ռ Լ Ռ Յ Ո Ի Պ Ի Ն (Մոնակո),
- Մխիթարյան ուխտի արքահայր, Գերհարգելի հայր  
Հ Մ Ա Յ Ա Կ Վարդապետ Կ Ե Տ Ի Կ Յ Ա Ն Ի Ն (Վենետիկ),
- Մխիթարյան ուխտի արքահայր, Գերապայծառ հայր  
Մ Ե Ս Ր Ո Պ Վարդապետ Հ Ա Պ Ո Զ Յ Ա Ն Ի Ն (Վիեննա):

Մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի սուրբ ծննդյան ավետիսով կշնորհավորենք Ձերդ Արքությունը և կաղոթենք առ Աստված, որ տարածե իր օրհնությունը և խաղաղությունը սուրբ եկեղեցիին և համայն աշխարհի վրա:  
Կմաղթենք Ձերդ Արքության արևշատություն, երկնային օգնականություն և հաջողություն Ձեր առաքելական սուրբ գործին:  
Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա  
ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԱՐԷ ԵՎ ԿԱՅՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Երբ տոնում ենք մեր Փրկչի ծննդյան ս. տոնը և նրա Հայտնությունը ողջ աշխարհին, այս առթիվ Ձերդ Արթության ուղարկում ենք Մեր սրտագին ողջույնները:

Թող Տերը, որի գալուստը նշանակում է խաղաղություն և հաշտություն, Ձերդ Արթության և համայն հավատացյալ ժողովրդին քաշխի իր օրհնությունները՝ նոր տարվա առթիվ:

Եղբայրական սիրով՝

ՊԱՊ ՊԱՎՂՈՍ Զ

Վ Ա Տ Ի Կ Ա Ն



Հրեշտակներն ու հովիվները, սուրբ այրն ու մսուրը մեզ հրավիրում են պաշտելու մեր Փրկչի Հիսուս Քրիստոսին, որը ծնվել է կույս Մարիամից: Ինչ վերաբերում է մեզ, հուզումնալից սրտով լսելով այս խոսքը և խաղաղության հրեշտակային երգից ազդված, անմար ուրախությամբ մենք ապրում ենք այն մեծ ճշմարտությունը, որ Տերը այցելել է իր ժողովրդին: Նա մեզ ազատել է օրենքի ստրկությունից և շնորհել է իր ազատությունը և պարգևել՝ շնորհք և որդեգրություն:

Այսօր, մեր թեմի, հոգևորական դասու և համայն ժողովրդի հետ խոնարհելով երկյուղածորեն սուրբ մսուրի խորհուրդի առաջ, ուրախությամբ լի մեր եղբայրական սիրո ողջույնն ենք ուղարկում Ձեզ և հայտնում մեր ամենաանկեղծ մաղթանքները Ձերդ Արթության քաջառողջության և ձեր սուրբ եկեղեցու պայծառության համար:

Այս մաղթանքներով Ձեզ հայտնում ենք մեր եղբայրական հատուկ սերը և մասնավոր մեծարանքը:

Ի Քրիստոս Ձերդ Արթության սիրեցյալ եղբայր՝

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ

Տիեզերական Պատրիարք Հունաց

Մ Տ Ա Մ Ա Ռ Ո Ւ



Սուրբ եկեղեցին կոչ է անում մեզ, այդ մեծ օրվան՝ մեր Փրկչի ծննդյան տոնի օրը մեծ քերկրանքով փառաբանել նրա գալուստը մեր երկրի վրա:

«Քրիստոսը ծնվում է, փառաբանեցեք»:

Արտի խորքից, խորագգաց հոգով ողջունում են Ձերդ Արթությանը՝ ուրախությամբ մեր Տիրոջ ծննդյան, որը երկնքից իջավ, որպեսզի վերածնի մեզ երկնային կյանքում:

Եվ թող մեր այդ ընդհանուր ուրախությունը լինի ամբողջ ու կատարյալ, որովհետև Տիրոջ ուրախությունը մեր ոգեկան ուժն է:

Թող Տերը իր գթությամբ վերանորոգի մեր հոգևոր ու մարմնական կյանքի ուժերը, և թող աշխարհում լինի թյուրի համար Բարձրյալի խաղաղությունը:

ԱԼԵՔՍԻ

Պատրիարք Մոսկվայի և Համայն Ռուսաստանի

Մ Ո Ս Կ Վ Ա



Ընդհանրապես ու Մենդյան տոնի առթիվ Ձեր հղած ողջույնի համար: Թող մտորում ծնված Փրկչի՛ը իր խաղաղությունը տարածն ողջ աշխարհի վրա:

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԼԵՈՆՂԱԳՈԼԻՍ

Տեղապահ Ալեքսանդրիայի պատրիարքական

Աթոռի

ԱԼԵՔՍԱՆԴՐԻՍ

Աստուծո ողորմությամբ մենք Ձեզ հետ կարողացանք ապրել այս պատմական օրերը, երբ ամբողջ հավատացյալ քրիստոնյա աշխարհը ուրախությամբ և հանդիսավոր կերպով տոնում է մեծ իրադարձությունը՝ մեր փրկության գործում՝ Քրիստոսի ծնունդը:

Մեր օրերին տեսնում ենք, թե ինչ դժվարությամբ մարդկությունը փորձում է հաստատել կայուն խաղաղությունն աշխարհում, որի համար մենք էլ աղոթում ենք Բեթղեհեմի մտրում ծնված Փրկչին՝ մարդկությանը շնորհելու իր իսկ կողմից խոստացված ընդհանուր և մնայուն խաղաղությունը:

Սրտանց շնորհավորում եմ Քրիստոսի ծնունդը՝ մաղթելով Ձեզ երկար կյանք, առողջություն և քեղմնավոր աշխատանք՝ ի փառս ամբողջ բարեպաշտ հայ ժողովրդի և նրա սուրբ եկեղեցու:

ԹԵՈՂՈՍԻՈՍ Զ

Պատրիարք Անտիոքի և Համայն Արևելքի

Գ Ա Մ Ա Ս Կ Ո Ս

«Եւ եղև ի լրումն ժամանակաց, Աստուած առաքեաց զորդի իւր, որ եղև ի կնոջէ»:

Այս ամենահատկանշական դեպքն է մարդկության պատմության մեջ, երբ Աստված հրաշալիառապես կատարյալ մարմին առավ սուրբ Աստվածածնից: Աստված եղավ խոնարհ և աղքատ, որպեսզի մարդկությունը իր միջոցով հարստանա:

Կաղոթենք Միածնին՝ իր ծննդյան տոնի առթիվ, Ձեզ և ձեր եկեղեցուն շնորհելու խաղաղություն, բարօրություն: Առաջիկա տարում թող ամրապնդվեն մեր երկու քույր եկեղեցիների կապերը իր ս. Ավետարանի տարածման համար:

Ի Քրիստոս Ձեր եղբայր՝

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈՒԳ

Սիրիայի օրթոդոքս եկեղեցու և Համայն Արևելքի պատրիարք

Գ Ա Մ Ա Ս Կ Ո Ս

«Քրիստոսը ծնվում է, փառաբանեցեք»:

Այդ մեծագույն իրադարձությունը, որը մենք տոնում ենք ամեն տարի, նորոգում է մեր հավատքը, մեր մարմնական և հոգևոր բնությունը: Այդ հավատքի լույսի մեջ բյուրեղանում է կյանքի զաղտնիքը, լուսավորվում պատմության խավարը. այդ հավատքը դեպի կյանքը ուժ է տալիս, որովհետև ո՛ր կյանք, այնտեղ նաև հավատք, և ո՛ր հավատք՝ այնտեղ Աստված, որտեղ Աստված՝ այնտեղ սեր և խաղաղություն:

Թող խաղաղության տարի լինի, հարուստ՝ երկնային պտուղներով:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԵՓՐԵՄ Բ

Կաթողիկոս-Պատրիարք Համայն Վրաստանի

Թ Բ Ի Լ Ի Ս Ի

Երկնային հրեշտակների ավետիսը «Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն» հնչում են այսօր քրիստոնյա բոլոր եկեղեցիներում՝ լցնելով հավատացյալների հոգիները ուրախությամբ: Եվ քոլորս ի մի բերան զոչում ենք «փառք հրաշալիառ ծննդեան քո Տէր», հավատալով, որ ծնունդը նոր տարվա դուռ բացելով, աշխարհին պիտի պարզեի իր խաղաղությունը:

Այս մտածումներով մաղթում ենք, որ մտորի մեջ ծնված Գառը իր սերն ու խաղաղությունը բաշխի նաև Ձեր ս. եկեղեցու հոգևոր դասին և հավատացյալ ժողովրդին:

Եղբայրական սիրո ողջունի՛վ՝

ժՈՒՍՏԻՆԻԱՆ

Պատրիարք Ռոմիմիայի

ԲՈՒՆԱՐԵՍ

Սրտանց շնորհավորում ենք Ձեզ՝ Քրիստոսի ծննդյան լուսավորյ տոնի կապակցությամբ: Ցանկանում ենք Ձերդ Սրբության, հոգևորականության և ձեր սուրբ եկեղեցու հավատացյալներին, որոնց Գլուխ և Առաջնորդ է կարգել Ձեզ Տերը՝ հավատարիմ իր պատգամաբերին, առաջնորդել նրանց ճշմարտության, հավատքի և սիրո ճանապարհով:

Ամբողջ հոգով աղոթում եմ, որ Տերը բազմապատկի իր շնորհները մեր ժամանակակից աշխարհին՝ ամրապնդելու Ծննդյան գիշերվա իր խաղաղությունն ու քարեհանությունը՝ մարդկանց միջև:

Ի Քրիստոս միշտ Ձերդ սիրեցյալ եղբայր՝

ԿԻՐՈՒ

Պատրիարք Բուլղարիայի

ՍՈՖԻԱ

Մեր Փրկչի ծննդյան առթիվ քրիստոնյաները դարձյալ միանում են, ողջունելու համար միմյանց հրեշտակների գվարթ ավետիսով «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Աստծու գերագույն նպատակն է՝ փրկել մարդկությունը մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Մարդեղության միջոցով: Ս. կույս Մարիամ լսեց հրեշտակի պատգամը և իր խոնարհ հնազանդության մեջ ընդունեց նրա ավետիսը: Հրեշտակների երկնային պատգամին հնազանդ, պարզամիտ հովիվները գնացին երկրապագելու ծնյալ Փրկչին: Աստծո ամենակարող հանը իջավ երկնքի քարձուռքներից՝ մեզ հետ լինելու համար իր խոնարհության մեջ՝ իր վրա վերցնելով մեր մարդկային խոնարհությունը: Մենք ևս հետևենք հովիվների խոնարհության և մեր պաշտամունքի երկրպագությունը դնենք Փրկչի ոտքերի առաջ և այդպիսով միանանք բոլոր քրիստոնյա հավատացյալ եղբայրների հետ՝ Փրկչի խոնարհության մեջ:

Այս զգացմունքով էլ միանում ենք Ձեզ՝ Փրկչի ս. ծննդյան խորհրդին մեջ: Եղբայրական սիրով և ողջուններով ի Քրիստոս Ձեր սիրեցյալ եղբայր՝

ՄԱՅՔԻ ՌԵՄԷԻ

Արքեպիսկոպոս Քենտրբերիի, եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ Համայն Անգլիայի

ԼՈՆԴՈՆ

Նոր տարվա այս օրերին, երբ սրտերը լի են քերկրանքով, խնդրում եմ Ձերդ Սրբության՝ ընդունել Մեր ամենասրտագին քարեմաղթությունները:

Աստծո Որդին թող պահպանի Ձեզ, Ձեր հոգևորականության և հավատացյալներին՝ պարգևելով Ձեզ երկար տարիների առողջություն, օրհնելով Ձեր բոլոր սուրբ գործերը եկեղեցու քարգավաճման համար:

Գալիք 1968 թվականը թող լինի ամբողջ մարդկության համար խաղաղության և ստեղծարար աշխատանքի տարի:

ՍՏԵՖԱՆ

Միտրոպոլիտ Վարչավայի և Համայն Լեհաստանի

ՎԱՐՇԱՎԱ

Օրհնյալ տոնի առիթով մեծ խանդավառությամբ լցվում են մեր սրտերը: Եկավ այն օրը, երբ Աստված արտահայտեց իր ամբողջ սերը դեպի մարդը, որպեսզի վերադարձնի նրան իր նախկին պատիվը և սրբությունը:

Այդ հանդիսավոր պահին սրտանց ողջունում և շնորհավորում են Ձեզ և աղոթում, որ Քրիստոս երկար կյանք պարգևի Ձեզ և բազմապատկի Ձերդ Արքության հոգեկան և մարմնական ուժերը:

ԳՈՐՈՃԵՅ

Միտրոպոլիտ Գրագայի և Համայն Չեխոսլովակիայի

ԳՐԱԳԱ

Ամանորի և Աստվածահայտնության տոնի ուրախ առիթով, հաճեցնք լինողունել եղբայրական Մեր լավագույն մաղթանքները, որոնց միացնում ենք Մեր ջերմ աղոթքները՝ Ձերդ Վեհափառության ազգային ու կրոնական վսեմ առաքելության հաջողության համար:

ԻԳՆԱՏԻՈՍ ԳԵՏՐՈՍ ԺԶ ԳԱԹԱՆՑԱՆ,  
Պատրիարք կաթողիկե հայոց

ԲԵՅՐՈՒԹ

Ձերդ Արքության հայտնում ենք մեր ջերմ շնորհակալությունները՝ ս. Ծննդյան Ձեր պատգամի համար:

Թող մարդացյալ Փրկիչը Ձեր և ձեր եկեղեցու վրա առատորեն բաշխի իր օրհնությունները: Մաղթում ենք Ձեզ նաև երջանիկ նոր տարի:

ՄԱԿԱՐԻՈՍ  
Արքեպիսկոպոս Կիպրոսի

Ն Ի Կ Ո Ջ Ի Ա

Երբ ամբողջ քրիստոնյա աշխարհը միանում է՝ տոնելու համար ծնունդը մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի, մենք ողջունում ենք Ձերդ Արքության սիրով՝ եպիսկոպոսական եկեղեցու անունից:

Այս ուրախ տոնի առիթով, քրիստոնյաները կրկին լսում են մեծ ավետիսը Բեթղեհեմի հրեշտակների, «և յերկիր խաղաղութիւն» և աշխարհի վրա բոլոր քրիստոնաներին՝ «հաճութիւն»:

Ծննդյան այս օրերին, երբ մեր սրտերը, մեր մտածումները լուսավորվել են Բեթղեհեմի ս. այրից շողացող լույսի մեջ, մենք խնդրում ենք Ձերդ Արքության՝ աղոթել մեզ հետ քրիստոնեական եկեղեցու միության և ժողովուրդների եղբայրության համար:

Լավագույն ցանկություններով աղոթում ենք Ձերդ Արքության քաջառույշության, ձեր մեծ եկեղեցու, ձեր ժողովրդի երջանկության համար:

Ձեր սիրեցյալ եղբայրը ի՝ Քրիստոս՝

ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՅ  
Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոս

Ն Յ Ո Ւ - Յ Ո Ր Բ

Ծննդյան զանգերը հրեշտակների ավետիսի հետ հաղորդեցին մեծ ուրախությունը, Աստծո Որդին՝ Փրկիչը, ծնվել է. «փառք ի քարծունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն»:

Ցանկանում են Ձերդ Արքության, քարեպաշտ հոգևորականության, հնադարյան հայկական եկեղեցու բոլոր հավատացյալներին Աստծով օրհնված երջանիկ նոր տարի:

ԳՈՒՍՍԱՎ ՏՈՒՐՍ  
Լատիական ՍՈՒՂ ավետարանական-լուսբերական  
եկեղեցու արքեպիսկոպոս

Ի Ի Գ Ա

\* \* \*

**Վեհափառ Տեր,**

Ամանորի և Հիսուսի Քրիստոսի հրաշափառ ծննդյան տոնին մեր խորհուրդները և մտածմունքները կերթան Հայաստանյայց ս. եկեղեցվո ճախարհին: Հայտնություն մը և լույս մը հայ ազգը և ժողովուրդները լուսավորելու և զանոնք առաջնորդելու ճշմարտության, հավատքի և սիրո ճանապարհներու մեջ: Այդ լույսը դարերու ընթացքին իր ճառագայթները կշողագնեն պատճառ լուսավորությամբ:

Որպէս ենք հետևելու Ձեր ճամփորդության ի Եվրոպա՝ մանավանդ Ձեր այցելության Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կերրոնատելիին: Հայաստանյայց ս. եկեղեցին իր մասնահատուկ տեղը ունի համաշխարհային եկումենիկ շարժման մեջ՝ որպէս ազգային եկեղեցիներու ճախարհարայեաց:

Աշխարհ ու՛է ժամանակե ավելի պետք ունի հաճության, իտաղադության և սիրո պատգամին: «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։ այս է ս. Ծննդյան երկնային պատգամը: Այս է ճակատագրական կարգված ենք: Պետք ունինք անոր գործության, որպէսզի կարենանք հավատարիմ մնալ այս ավանդին:

Վեհափառ Տեր, տոնական օրերու այս սրբազան պատեհությամբ կմաղթեմ նորանոր հաջողություններ Հայաստանյայց ս. եկեղեցվո և Աստուծո թագավորության դատին պայծառության համար:

Թող միշտ վառ մնա Լուսավորչի կանթեղը՝ հավատարիմ իր առաքելատուր կոչումին մեջ և միշտ բարգավաճի մայր հայրենիքը:

Շնորհավորելով Ամանորը և մեր Փրկչին ս. Ծնունդը, կմաղթեմ արևշատություն և երջանիկ օրեր:

Խոնարհաբար և սիրով՝

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ Փ. ԱՀԱՐՈՆՅԱՆ  
Նախագահ Մերձավոր Արևելքի հայ ավետարանական  
եկեղեցիների միության

Բ Ե Յ Ր Ո Ւ Թ

\* \* \*

Սուրբ երկրի Ֆրանչիսկյան միաբանությունը մաղթում է Ձերդ Արթության և Հայաստանյայց եկեղեցուն ուրախ և օրհնյալ ս. Ծնունդ:

ԼԻՆՈՒՍ ԿՈՊԻԵՎԻ  
Կուստոդ Ֆրանչիսկյան միաբանության

Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Ե Ր

\* \* \*

**Վեհափառ Տեր,**

Սուրբ Ծննդյան և ամանորյա առիթով փոխադարձ լավագույն մաղթանքներ՝ անխառն ուրախության, անվրդով խաղաղության, անասան առողջության և երկնառաք օրհնությամբ՝ ի փառս մարմնացյալ Բանին և ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցվո, Ձեր անխոնջ ջանքերուն հաջողությամբ պակումին, կնատուցանե Վեհափառ Տեառնդ՝

ՄԵՎՐՈՊ ՀԱՊՈԶՅԱՆ  
Արքեպ. և Ընդհ. աքթահայր  
Մխիթարյան միաբանության

ՎԻԵՆՆԱ





ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ  
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ  
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԾԾՈՒԹՅՈՒՆ  
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ  
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ  
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ԾԾՈՒԹՅՈՒՆ,  
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա.-ԻՃ (ԱՃԹԻՊԻԱՍ),  
ԵՐՈՒՍԱԿԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ  
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (ԵՐՈՍԱՊԵՄ),  
ԹՈՒՐԿԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ  
Տ. ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (ՍՈՒՄՐՈՍ),  
ԲԱՐԵՆՆԱՍ ԲՈՂՈՐ ԹԵՍԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԳՆԵՐԻՆ  
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

**Քրիստոս ծնավ և հայտնեցավ:**

Նոր տարվո սեմին, երջանիկ ենք Ձեզի տալու ավետիսը Քրիստոսի սուրբ  
Ծննդյան և Աստվածահայտնության, աղոթելով, որ Տերը և Փրկիչը մեր իր  
օրհնությունը և խաղաղությունը տարածե մեր սուրբ եկեղեցիին և համայն մեր  
ժողովուրդին վրա՝ հերջանկությունը բոլորին:

Սուրբ ծննդյան ավետիսով կողջունենք զՁեզ, սիրելի Սրբազան, մաղթե-  
լով Ձերդ Սրբազնության արևշատություն և երկնային օգնականություն ի խըն-  
դիր Ձեր եկեղեցաշեն ու ազգանվեր գործոց հաջողության:

Մեր հայրական ողջույնը և օրհնությունը Ձեր տիրախնամ թեմի հոգևոր  
դասուն, եկեղեցական վարչական մարմիններուն և կազմակերպություններուն  
և համայն մեր հավատացյալ սիրեցյալ ժողովուրդին, խաղաղ ու արդյունաշատ  
աշխատանքի մաղթանքներով լիառատ, որպեսզի անոնք բոլորը մեկ ու ան-  
բաժան, աշխատին խաղաղ ու համերաշխ, շեն ու անշարժ պահելու մեր սուրբ  
եկեղեցին, աստվածային օրհնությամբ ներքև հավետ լուսաշող սուրբ Էջ-  
միածնին:

«Ծնորհք, սէր և խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին  
ընդ Ձեզ այժմ և յտիտեան: Ամէն»:

Օրհնությամբ՝

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա.  
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

\* \* \*

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանը և խորհուրդներին, Հայկական Բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության (Լիւսաբոն), Արգարյան ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

\* \* \*

Ծնորհագարդ եղբայր ի Քրիստոս,

Նոր տարվան և Փրկչի ս. ծննդյան հրաշալի տոնին առթիվ Ձերդ Ա. Օծուխյան կենդկայացնենք Մեր սրտայից և ջերմ շնորհավորություններն ու լավագույն մաղթանքները:

Ի խորոց սրտի կաղոթենք, որ Բարձրյալն Աստված պարգևե Ձեզի քաջատոջ և երջանկալից երկար կյանք և յիակատար հաջողությամբ պսակե եկեղեցանվեր Ձեր բոլոր ճիգերն ու ջանքերը:

Կմաղթենք, որ Բեթղեմեմի Մանուկը՝ Տեր Հիսուս Քրիստոս, խաղաղություն շնորհե համայն մարդկության և արդարություն հաստատե այս երկրի վրա:

Մեր սրտի խորագույն աղոթքն է, որ Բեթղեմեմի երկնակամարին վրա հայտնված պայծառափայլ աստղին լույսովը առաջնորդվի մեր ժողովուրդին կյանքը հառաջիկա տարվան ընթացքին՝ եղբայրական սիրո, փոխադարձ հասկացողության, միասնական ոգիի և համերաշխ գործակցության սուրբ ճամփաներով:

Թող Աստված հարցն մերոց՝ անշարժ և անասան պահե ու պահպանե Հայց. ս. եկեղեցին և բարգավաճ ու ծաղկյալ կյանք պարգևե հավատացյալ հայ ժողովուրդին ի սփյուռս աշխարհի:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ,  
աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա.  
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

ԱՆԹԻՒԻԱՍ

\* \* \*

Նոր տարվա և ս. Ծննդյան հրաշափառ տոնի բարեբաաստիկ առիթով հարգալիր կերպով կենդկայացնենք մեր՝ Ա. Հակոբյանց միաբանության և համայն հավատացյալ ժողովրդի կողմից մեր ամենասրտագին շնորհավորանքները և կաղոթենք Ամենակարողին՝ Ձերդ Սրբության քաջատոջության, Ձեր սուրբ գործերի հաջողության, երկար տարիների երջանիկ գահակալության և ս. Էջմիածնի պայծառության ու անասանության համար:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Պատրիարք հայոց Երուսաղեմի

ԵՐՈՍՄԱՂԵՍ

\* \* \*

Վեհափառ Տեր,

Ամանորի և ս. Ծննդյան տոնը անգամ մը ևս կհրավիրեն զմեզ՝ խորհրդածելու այն մեծ ու մնայուն իրականության վրա, որ կյանքն իսկ է, և այն մեծ դեպքին, որ Փրկչին ծնունդը եղավ:

Տարիով կչափենք կյանքի տևողությունը: Ու ամեն մեկ Ամանոր զմեզ կդնե կյանքի նոր ընթացքի մը սկիզբը. ու մարդիկ կուրախանան ու կհրճվին ասոր համար: Արդյոք սա ինքնին բնագրական փաստ մը չէ՞ կյանքի հավերժության: Տարիներու հոլովությամբ մենք դեպի մահ չէ որ կհառաջանանք, այլ կյանքն է կյանք, դեպի հավերժություն, այսպես ի՞նչ իմաստ պիտի կրնայինք տալ նոր տարվան հրճվանքներուն, եթե կյանքը երթ մը ըլլար դեպի մահ ու ամեն մեկ Ամանոր հուշարարն ըլլար այդ եղերական երթին:

Ծնունդը, գլխազիր Ծնունդը իր մեջ կպարունակե ամենադեղը և ամբողջական լուծումը մարդկության տագնապներուն և անլուծելի խնդիրներուն: Որքան թելադրական են Ծննդյան ամեն մեկ դեպքը այդ ուղղությամբ: Տիրապետող տեսարանը լույսն է անոր մեջ, լույսը Մանուկին: Կճառագայթե այդ լույսը անհատնումորեն ու հավերժորեն՝ հասնելով մինչև մեր օրերը:

Այդ լույսին մեջ են մարդուն ուղիղ ճամփան, փնտրած ճշմարտությունը և կյանքը:

Այս քարեքաստիկ առիթով, հանուն մեր կրոնական դասին, պաշտոնական բոլոր մարմիններուն և համայն մեր հավատացյալ հոտին և մեր կողմն կշնորհավորենք Ձեր Ս. Օծությունը՝ մաղթելով երկար ու քաղցր տարիներ, հանդերձ կյանքի առողջությամբ և վեհիդ գործերուն և ծրագիրներուն լիակատար հաջողությամբ:

Մատչելով ի համբույր Օծելուդ ս. աջին,  
խոնարհ աղոթակից՝

ՇՆՈՐՀԶ ԱՌՋԵՊԻՍԿՈՊՈՍ  
Պատրիարք հայոց Թուրքիո

ԱՍԱՄԱՌԻԼ

\* \* \*

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր ու նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի թեմակալ առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:





**ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՔԱՐՈՋ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ  
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ**

Հունվարի 6-ին՝ շաբաթ օրը, Մայր Աթոռում ավանդական հանդիսությամբ տոնվեց Փրկչի հրաշափառ սուրբ Ծննդյան տոնը:

Առավոտյան ժամերգությունից հետո, ժամը 11-ին, Մայր տաճարում սկսվեց հանդիսավոր սուրբ պատարագը:

Պատարագիչն էր Մայր տաճարի փոխ-լուսարարապետ գեր. տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը:

Մայր տաճարը լիքն էր աղոթավոր ուխտավորներով և հավատացյալներով:

Ս. Պատարագին ներկա են Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսները, վանքի պաշտոնեությունը, ինչպես նաև մի խումբ ամերիկահայ ուխտավորներ:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափոքով և զանգերի ուրախ ու հանդիսավոր դողանջի ներքո առաջնորդվում է Մայր տաճար:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգեցիկ խումբը, որին և իր մասնակցությունն է բերում տաղանդավոր երգչուհի Գոհար Գասպարյանը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղան՝ Քրիստոսի ս. Ծննդյան խորհրդի մեծ ավետիսը տալու հայ եկեղեցուն և թովանդակ հայության, Իր ոգեշունչ հետևյալ քարոզի մեջ, որը նույն գիշեր ձայնավորվում է Երևանի ռադիոկայանից:

«Յանուն Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ. ամեն».

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Միաժին Որդին Աստուծո և փրկիչը մեր Քրիստոս, այսօր նոր լույս կսփռե աշխարհի վրա ու մեր հոգիներեն ներս, անմահ ավետիսովը իր լուսավալ ծննդյան:

Երկու հազար տարիներ շարունակ և այսօր վերստին կավետվի խաղաղության և ի մարդիկ հաճության պատգամը երկնային, մեզի ամենուս, մեր եկեղեցիին, մեր ժողովուրդին, համայն աշխարհին:

Ինչքան քաղցր, ինչքան ցանկալի, ինչքան նվիրական. կհնչե մեր սրտերում մեծ ավետիսը այս:

Մեր հոգիի աչքերով, ինչպես անուշ երազ, մենք կտեսնենք այսօր, հեռու երկիւրքներու լույսերուն մեջ, օրհնող ձեռքը Քրիստոսի ու կ'սենք պատգամը իր գերագույն՝ «Սիրեցես զՏէր Աստուած՝ քո յամենայն սրտէ քոմմէ», «Սիրեցես զընկեր քո, իբրև զանձն քո» (Մատթ. ԻԲ 37—40):

Ահա ինքը Քրիստոս, լրումն օրինաց և մարգարեից:

Ահա այն վեճը, որում փրա կհենու Փրկչի Ավետարանը և ամբողջ կառույցը քրիստոնեության:

Ահա այն պատվիրանները, որոնք կոչված են ապահովելու, կյանքի կոչելու մարդոց և ժողովուրդներու դարավոր իղձը խաղաղության ու եղբայրության: Իղձ, որ, ավա՞ղ, տակավին կմնա փրկարար հույս ու ոսկի երազ:

Ո՞ր է կենդանի հավատքը այսօր մեր աշխարհին մեջ: Ո՞ր է մեր սերը դեպի Աստված, ո՞ր է մեր հաճությունը դեպի մեր նմանները: Ինչպե՞ս, իրապես ինչպե՞ս կապրի՞ք, ինչպե՞ս կմտածենք և ինչպե՞ս կգործենք մենք՝ մեր օրերու քրիստոնյաներս:

Աստված սեր է, և աշխարհը պտուղն է աստվածային սիրո, սակայն ինչքան հեռու է աշխարհը այսօր աստվածային սիրո այս լույսեն, մարդասիրության, խաղաղության ոգիեն: Ս. Հովհաննես Ոսկեբերանի հետ պիտի կոչեմք՝ «Տեսեք, Աստված ամեն ինչ ստեղծած է բոլոր մարդոց համար հավասարապես՝ օրը, արևը, ջուրը, հողը, երկինքը, լույսը, աստղերը... Բոլորին տված է նման աչքեր, նման մարմին, նման հոգի... Եվ ահա, մինչդեռ Աստված ամեն ինչ կկատարե մեզ միացնելու համար, մենք կսկսինք մեկս մյուսին նկատմամբ թշնամանալ»:

Ահա և Հովհաննես Ավետարանիչի խոսքերը՝ «Եթե ոք ասիցէ՝ եթե սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր ասիցէ, սուտ է», «որ սիրէ զԱստուած, սիրէ նաև զեղբայր իւր» (Ա Յովհան. Դ 20—21):

Ավետարանական պատվիրաններուն համաձայն սերը, հաճությունը դեպի մեր նմանները կրկն դեպի Աստված մեր սերեն և բո՛ւր մարդոց Աստուծո որդիները ըլլալու դավանաբան: Ամեն մարդ արարած, անխտիր, իր հոգվույն մեջ կկրե պատկերը Աստուծո, ամեն մարդ արարած, անխտիր, Աստուծո որդի է և եղբայրը իր նմանին: Իբրև այդպիսին, ամեն ոք ինքն իր մեջ անկորցնելի ու անփոխարինելի արժեք մըն է, և բոլորը կոչված են փրկության, Հիսուսի զերագույն գոհաբերության գնով:

Քրիստոնեական ոգին, էապես, մեծ սիրո մը ապրումին ճառագայթունն է, որ բխելով Աստուծուց, Քրիստոսեն, կբաշխի աշխարհին ու մարդոց, և մարդն մարդ ու սերունդն սերունդ, և դարե դար: Այդ սերն է, և անոր պահպանումը, զերագույն պայմանը և երաշխիքը մարդկային կյանքի խաղաղության, արդարության և բարօրության: Այդ սիրո վարդապետության մեկ արտահայտությունն է նաև քրիստոնեական բարոյականի ոսկյա կանոնը նկատված Հիսուսի խոսքը, թե «զամենայն, որ միանգամ կամիջիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպես և դուք արարեք նոցա» (Մատթ. է 12):


Ահա այսպես, սիրելի ժողովուրդ, աստվածասիրության պատվիրանին հետ միասին, դեպի մեր նմանները՝ սիրո և հաճության պատվիրանը, կկազմեն անքակտելի, կատարելապես միաձուլված ամբողջություն մը, հիմքը և կեդրոնական ոգին քրիստոնեական վարդապետության: Այս երկու պատվիրանները ոչ միայն կանոններն են մարդոց փոխհարաբերությանց, այլ նաև այն նվիրական սկզբունքները, որով քրիստոնեությունը կձգտի և կմաքառի լուծել մարդկությանն առաջ դրված մեծ հարցերը:

Խոստովանի՞ք, թե մանավանդ մեր օրերու մարդկային աշխարհը ալեկոծող հարցերը իրապես անհախընթացորեն ողբերգական են: Ատոմական ուժերու սանձազերծման մեր դարաշրջանին, օրերը հողի են աղետալի սպառնալիքներով: Համաշխարհային նոր պատերազմ մը պիտի նշանակեք երկրագնդի մեծագույն մասի կործանումը, միլիոնավոր մարդոց նահատակություն և քաղաքակրթության անհամար արժեքներու փչացում:

Մանավանդ մեր եկեղեցին, մեր ազգը գիտեն, թե ինչ կնշանակե պատերազմ: Անոնք գիտեն, չեն մոռցած և չեն կրնար մոռնալ 1915-ի ահավոր եղեռնը՝ ցեղասպան այն մեծ ոճիրը, որ սպանեց անմեղ զավակները մեր եկեղեցիին, մոտ երկու միլիոն հայեր, ու ամայի դարձուց ամբողջ երկիր մը շեն՝ պատմական Հայաստանը Արևմտյան: Գուցե ավելի, քան ուրիշ ժողովուրդներ, հայ ժողովուրդը գիտն գնահատե միջազգային խաղաղ գոյակցության սկզբունքը, որ միակ ճանապարհն է և գրավականը մարդկության կյանքի ապահովության և քաղաքակրթության պահպանման: Պատերազմ՝ այդ համագումարն է բոլոր չարիքներու, բոլոր աղետներու:

Մի՞թե այնևս կարելի է մտածել պատերազմի մասին: Մի՞թե այնևս չէ հասած պահը, որ բոլոր մարդիկ, բոլոր ժողովուրդները, բոլոր պետություն-

AR-9410



ները, իրենց իսկ կյանքի և գոյության ի խնդիր, վերջնապես հրաժարին պատերազմի գեներերեն և իրենց հայացքը ու հոգին դարձնեն դեպի խաղաղ բարձունքները երկնքին՝ լսելու և հպատակելու համար աստվածային պատգամին՝ «Յերկիր խաղաղութիւն, և ի մարդիկ հաճութիւն»:

Մենք կհավատանք, թե Ամենակալին ողորմությամբ և արդարությամբ, պիտի յուսովորվին մտքերն ու սրտերը մարդոց և ժողովուրդներուն, և միասնական, համընդհանուր ճիգերով բոլոր եկեղեցիներուն, բոլոր պետական պատասխանատու ղեկավարներուն, բոլոր բարի կամքի տեր մտածողներուն և գործողներուն, վերջապես, պիտի ազատի աշխարհը պատերազմներու ամապկոր մղձավանջեն:

«Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

Եվ խաղաղության և ու պահպանության պայմաններու մեջ պիտի շարունակե աճիլ ու զարգանալ նաև մեր ժողովուրդը ամենուրեք, պիտի շարունակե գործակալ ու ծաղկիլ նաև մեր վերածնած հայրենիքը՝ Հայաստան, արդար ուրախությունը և հպարտությունը անխտիր բոլոր անոնց, որոնք ճշմարտապես հայու սիրտ մը կկրեն իրենց կուրծքի տակ:

Այս հանդիսավոր սուրբ պահին, Հայոց Հայրապետը խղճի պարտք կհամարե՝ իր զավակներուն վերստին հիշեցնել մեր օրերու հայ կյանքի գերագույն ճշմարտությունը, թե առանց մայր երկրի չկա հայ ազգություն, չկա հայոց պատմություն, չկա հայոց սպազա:

Օրհնություն, բյո՛ւր օրհնություն հայոց մայր հողին, հայոց սուրբ հողին, հավերժական Հայաստանին:

Օրհնություն և ստեղծարար աշխատանքի անպառ ետանդ ամենայն հայոց հայրենիքը կերտող հայաստանցի մեր չարքաշ ժողովրդին:

Սուրբ գրական Արարատյան աշխարհին, լույս Հայաստանեն, հայոց քրիստոնեական հավատքի կեղրոն բազմադարյան սուրբ էջմիածնեն, մեր Տիրոջ հրաշափառ ծննդյան ավետիսով, Մենք հայրական սիրով կողջունենք մեր ժողովուրդը, համայն հայ հավատացյալ ժողովուրդը, որ ի Հայաստան և ի սփյուռու աշխարհի, աղոթելով, որ փրկիչը մեր Քրիստոս, պահե պահպանե անփորձ ու անվտանգ, մեկ ու անբաժան և միշտ խաղաղ ու ծաղկյալ մեր սուրբ եկեղեցին հավետ օրհնությամբ ներքև Ամենայն Հայոց հայրապետության աստվածակառույց Մայր Աթոռին: Մենք կաղոթենք նաև, որ, մանավանդ, սփյուռքի մեր պանդուխտ զավակները հավատարիմ հավատարիմ մնան իրենց նախնայք քրիստոնեական հավատքին, իրենց նվիրական ավանդություններուն, իրենց կրոնական ու ազգային մշակույթի արժեքներուն, և այդ բոլորի խորհրդանշանը և կենդանի վկան հանդիսացող Սրբություն Սրբոց սուրբ էջմիածնին:

Սիրելի հավատացյալներ, «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»: «Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Խաղաղություն աշխարհին համայն: Խաղաղություն և քեզ, հայ ժողովուրդ, և քեզ, Հայաստանյայց եկեղեցի, և սեր, և շնորհք, և օրհնություն աստվածային, այժմ և հավիտյան: Ամեն:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Ջրօրհնյաց սրբազան կարգը՝ ի հիշատակ Քրիստոսի մկրտության «ի Յովհաննէ ի Յորդանան գետ»:

Մայր տաճարի կամարների տակ հնչում են օրվա մեծ տոնի համամարդկային, հոգեոր, բարոնական խորհրդին նվիրված մեր հոգեյից շարականներ՝ «Ով գարմաճալի» և «Այսօր ծայնն հայրական»:

Հավատացյալները, այնուհետև, ջերմեռանդությամբ վերցնում են Քրիստոսի մկրտության ջրից՝ հոգեպես պայծառացած ս. Ծննդյան և Մկրտության տոնի խորհրդով և պատգամով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Վեհարան՝ ս. Ծննդյան տոնի առիթով շնորհավորություններ ընդունելու:

Ն. Ս. Օծությունը Վեհարանում օրհնում է ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովրդին՝ մաղթելով խաղաղություն աշխարհին, համերաշխություն և համագործակցություն բոլոր եկեղեցիների և ազգերի:

Օրվա հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

«Շնորհատր սուրբ Ծնունդ և Յայտնութիւն Քրիստոսի»:



**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Ք**

**Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք**

**ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒԴԻ 1985 ԹՎԱԿԱՆԻ  
ՍԵՊՏԵՄԲԵՐ 7-Ի ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության Ընդդ, 1985 թվականի սեպտեմբերի 7-ին գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի նիստը, ուր մասնավոր կարևորությամբ քննվում է «Մի քանի քաճաճների կողմից իրենց պաշտոնը լքելու և արտասահման մեկնելու մասին» հարցը:

Գերագույն հոգևոր խորհուրդը մտքերի փոխանակությունից հետո ընդունում է հետևյալ որոշումը.

«Գերագույն հոգևոր խորհուրդը, եկեղեցական կանոնների լույսի տակ, նման դեպքը համարում է եկեղեցական անկարգություն և որոշում է.

Խստիվ պահպանել եկեղեցական կանոնը և խնդրել Վեհափառ Հայրապետին ի յարկին կարգալուծման պատիժ սահմանել անսաստողներին: Ժողովը անհրաժեշտ է գտնում սույն որոշումը յայտնել թեմերին ի գիտություն»:



Այնուհետև, 1986 թվականի հունիսի 25-ին Մայր Աթոռի դիվանի կողմից հրատարակվում է հայրապետական վճիռ տ. Սարգիս քաճաճ Անդրեասյանի կարգալուծման մասին՝ ի գիտություն հայ եկեղեցու նվիրապետական Աթոռների և ազգային-եկեղեցական մարմինների.

**Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ**


Մայր Աթոռ ս. Էջմիածնի դիւանը այսու լիազորում է ծանուցանելու ի գիտություն հայ եկեղեցույ նուիրապետական Աթոռներին և ազգային-եկեղեցական մարմիններին, թէ Ամենայն Հայոց Հայրապետի վճիռով կարգալուծ եղած է Արարատեան թեմից տ. Սարգիս քաճաճ Անդրեասեանը, որ դրժել է իր ծառայութեան ուխտը ու լքել իրեն վստահուած հօտը առանց յարգելի պատճառի և առանց հոգևոր վերին իշխանութեանց արտօնութեան և հակառակ վերջին մի տարուայ ընթացքում բազմիցս եղած յորդորներին և նախազգուշացումներին Արարատեան թեմական խորհուրդի և Գերագույն հոգևոր խորհուրդի կողմից:

Վերոյիշեալ կարգազուրկ քաճաճան դասում է աշխարհականների շարքը իր նախկին Սարգիս Անդրեասեան անունով:

25 յուլիսի 1986 թ.

Ս. Էջմիածնի

ԳԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐՈՑ



## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԴԱՐ ՎՃԻՌ

«Էջմիածին» ամսագրի հունվարի սույն համարում (Էջ 19) հրատարակվել է Գերագույն հոգևոր խորհրդի 1965 թվականի սեպտեմբերի 7-ի նիստի որոշումը, «Մի քանի քահանաների կողմից իրենց պաշտոնը լքելու և արտասահման մեկնելու մասին», ըստ որում Գերագույն հոգևոր խորհուրդը նման դեպքը համարում է ծանրակշիռ արարք, հակառակ մեր եկեղեցական կարգու կանոնին, և միջնորդություն է հարուցում Ամենայն Հայոց Հայրապետի առջև՝ խնդրելով նման դեպքերի պարագայում խիստ պատիժ սահմանել և կարգալուծ հռչակել այն քահանաներին, որոնք դրժում են իրենց ծառայության ուխտը և լքում՝ իրենց վստահված հավատացյալ ժողովրդին, առանց հոգևոր վերին իշխանությանց արտոնության և առանց հարգելի պատճառի:

Սույն որոշման լույսի տակ 1966 թվականի հուլիսի 25-ի հայրապետական վճռով նման հանցանքի համար կարգալուծ է հռչակված Երևանի Արարատյան թեմի երբեմնի քահանա Սարգիս Անդրեասյանը. ինչպես հայտարարված է իր ժամանակին, Մայր Աթոռի դիվանի կողմից այս առթիվ տրված պաշտոնական ծանուցագրում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ցավով է արձանագրում այս սխտոր երևույթը.

Արդարև, ցավազի է, որ մայր հայրենիքում ու հարազատ ժողովրդի ծոցում գործող քահանաներ են գտնվում, որոնք դրժելով իրենց ծառայության ուխտը, լքում են իրենց ծխական եկեղեցին և հավատացյալներին՝ մեկնելու համար արտասահման, երբ այդ ժողովուրդը կարիքն ունի ավելի քան երբևէ հավատարիմ ու քաջ հովիվների առաջնորդության:

«Քահանայք պղծեն զսրբություն» (Սովորնիա Ա 4) և «յիմարեցիցն» (Մրեմիա Դ 9):

Հովհաննես առաքյալ որքան ճիշտ է ասել նման սուտ հովիվների համար. «Իսկ վարձկանն որ ոչ է հովի, թողու գոչխարսն և փախչի» (Հովհաննես Ժ 12—13):

Հայ եկեղեցու քահանայությունը իր ետին ունի փառավոր և հիշատակության արժանի գործունեության պատմություն: Հայ հավատավոր և աճճնորաց քահանան Ավետարանի կենդանի ոգով ու իր ժողովրդի ու հայրենիքի սիրով աուցված եղել և հանդիսացել է մեր հավատքի ու կրոնական գգացմունքների բյուրեղացած արտահայտությունը, «ախտյանք եկեղեցույ», քարոզը՝ ճշմարտության և արդարության, որոնցից շատերը հաճախ երջանիկ արիությանը իրենց հավատքի, հայրենիքի և ժողովրդի համար ծանր ու դժվարին օրերին «հեղին գարինս իրեանց ի նորոգումն եկեղեցույ», ինչպես Ղևոնդյանք Ավարայրի ճակատամարտում և մեր պատմության ողջ ընթացքում, և ապա մինչև

1916 թվականի եղեռնը, որոնցից շատերը ևս «քարկոծեցան, սղոցեցան, սպանմամբ սրոյ մեռան», բայց նրանց անձնուրսւց նահատակությամբ ու վկայությամբ «եկեղեցի» Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան»:

Հայ քահանայության նման փառավոր սրտատուչ ու հավատավոր գործունեության առաջ որքա՞ն ճղճիմ ու փոքրոգի է երևում հայրենիքի մեջ գործող, նյութական լավ պայմաններում ապրող մի քանի քահանաների լքումը, նահանջը, քարոյական, հոգևոր ու հայրենասիրական սնանկությունը:

Խմբագրությունս հավատում է, որ նման դասալքություններ ընդհանուր ոչինչ չունեն մեր անցյալի և ներկայի հավատավոր և ուխտապահ հայ քահանայության ջախջախիչ մեծամասնության կյանքի, ծառայության և կոչման հետ:

Խմբագրությունս հավատում է նաև, որ նման լքումներ ու նահանջներ որևէ ձևով ինչպէս չեն քաջալերվել մայր հայրենիքի հավատացյալ հայ ժողովրդի ու եկեղեցական իշխանության կողմից, նույն չափով էլ չեն հովանավորելու տիրուքի հայ եկեղեցական իշխանությունների և քարեպաշտ ու հայրենասեր ժողովրդի կողմից:

Այո՛, արդար է հայրապետական վճիռը: Մեր ժողովուրդը և՛ մայր հայրենիքում, և՛ տիրուքում ու հայ մամուլը ստի գոհունակությամբ և երախտագիտությամբ ընդունեցին հայրապետական վճիռը՝ այն համարելով արժան և իրավ:

Մեր եկեղեցու, մեր երկրի հավատացյալների հոգևոր կարիքները պահանջում են, որ մեր բոլոր հոգևորականները մնան իրենց եկեղեցական ուխտապահության և հայրենասիրության դիրքերի վրա՝ ի մխիթարություն մեր հայրենաբնակ քարեպաշտ ժողովրդի:


Նման բոլոր նահանջների և լքումների դեպքում կգործադրվի հայրապետական նման վճիռ:


Իսկ մենք, որպես հավատացյալներ, որպես եկեղեցի և ժողովուրդ, դատապարտում ենք Ղևոնդ Երեցի կրակե բառերով մեր օրերի եկեղեցական ուխտապահության այս թշվառ դասալիքներին և արձանագրում.

«Ի բաց թողցուք զխաարային խորհուրդս մուրեղոցն, եղկելիս և ողորմելիս քան զամենայն մարդիկս զնոսա համարեսցուք»:

Եվ վարդանի բերնով մի անգամ ևս վերահաստատենք մեր ուխտը. «Պատրաստ ենք ի հալածանս և ի մահ... բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի խառնեսցուք»:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ





## ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

1967 թվականի դեկտեմբերի 31—օրը կիրակի և գիշեր՝ կաղանդի:

Ժամը 20-ին հոգևոր ճամբարանի հանդիսությանը սրահում, Ամանորի ավանդական սեղանների շուրջ համախմբվել էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի անդամները, հոգևոր ճամբարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, վանքի պաշտոններությունը և այլ հրավիրյալներ՝ իրենց պարտքը կատարած մարդկանց արդար խղճտանքով ու զոհունակությամբ, ինչպես նաև սրտագին երախտագիտությամբ լցված դեպի համազգային այն սուրբ հաստատությունն ու ուխտատեղին, որ համայն հայության Մայր Աթոռ սուրբ Էջմիածինն է, և դեպի նրա արժանընտիր գահակալը, որն իր սուրբ և բարի ձեռքերում է պահում Հայաստանյայց առաքելական եկեղեցու գերագույն հեղինակության ու ղեկավարության գալիսունը:

Ամանորի առթիվ կազմակերպված սույն հանդիսությանը ներկա էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռում և մայր հայրենիքում գտնվող հյուրեր, Վիեննայի հայոց հոգևոր հովիվ և Ժճնի եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոտ Մար Աթոռի մշտական ներկայացուցիչ հոգ. տ. Մեարոպ Ծ. վրդ. Գրիգորյանը, հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը՝ Հարավային Ամերիկայից, Հովհաննես Տեր-Հովհաննիսյանը, տեր և տի-

կին Ժիրայր-Մարիամ Ահարոնյանները՝ ԱՄՆ-ից, Ուստր քաղաքից:

Ժամը 8-ին ժամանում է Վեհափառ Հայրապետը և ընդհանուր ոգևորության մեջ օրհնում Մայր Աթոռի քարիքներով զարդարված ամանորական սեղանը:

Սեղանների շուրջ ստեղծվում է նոր տարվա հատուկ խոհերով, մտորումներով, հույսերով և երազներով օծուն, խորհրդավոր, մտերիմ, ընտանեկան մթնոլորտ:

Հանդիսության սկզբում հոտնկայս ունկընդովում է «Հայր մեր»-ը և Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագը:

Ամանորին նվիրված երեկույթը բանալով, հոգևոր ճամբարանի տեսուչ հոգ. տ. Ներսես Ծ. վրդ. Պոզապայանը նշում է, որ ինչքան քաղցր ու սրտառույ է պահը, որ հոգևոր ճամբարանի հյուրընկալ կամարների ներքո, Մայր Աթոռ ս. Էջմիածնի յուսին ու խորհրդին նվիրված ծառայողները, հոգևորական թե աշխարհական, պաշտոնյա թե ուսանող, հավաքված ամանորի սեղանի շուրջ, երախտագիտությամբ և զոհունակությամբ հրաժեշտ ենք տալիս անցնող տարվան և նոր հույզերով ու քարեմաղթություններով դիմավորում նորը՝ 1968 թվականը:

Այնուհետև տեսուչ հայր սուրբը, արտահայտելով թուր ներկաների խոհերն ու երախտագետ զգացմունքները, առաջարկում է առաջին քաժակը Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության, պայծառության և հավերժության և նրա արժանավոր գահակալ,

Ն. Ս. Օծությունցի S. S. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի թանկագին կենաց արևշատության, Նրա հետագա եկեղեցաշեն, հայրենանվեր գործերի հաջողության համար:

Բոլոր ներկաները հոտնկայս բաժակ են բարձրացնում ուրախ ծափերի հնչյունների տակ, մինչ ճեմարանի երգչախումբը հնչեցնում է վեհ ու հանդիսավոր Մայր Աթոռի հիմնը՝ «Էջմիածինցի ի հօրէ» շարականը:

Իր այտոհից քարձրանում է Վեհափառ Հայրապետը, ուրախ ու քարձր տրամադրության մեջ, նոր տարվա խոհերով, մտորումներով համակված, իր պատգամն ու օրհնությունը տալու, շնչտելով, որ ինչպես իր գահակալության անցնող տասներկու տարիների ընթացքում, 1968 թվականին և այնուհետև էլ, իր ղեկավարության մեջ Մայր Աթոռ ու Էջմիածինը իր աստվածատուր ու հավերժական առաքելությունը կրկատարի հայ եկեղեցու ծոցում թե՛ մայր հայրենիքի և թե՛ սփյուռքի հայության համար, հայ եկեղեցի, հայ ժողովուրդ և վերածնված մայր հայրենիք երեք նվիրական սրբությունների և վեհ զգացմունքների լույսին ու ներշնչումների մեջ:

Ն. Ս. Օծությունը խրատական խոսքեր ուղղելուց հետո ուսանողության, իր ոգևորիչ պատգամի վերջում սրտագին բարեմաղթություններ է անում հայ եկեղեցու պայծառության, մայր հայրենիքի և բովանդակ հայ ժողովրդի բարօրության համար, որ 1968 թվականը լինի արդարև եկեղեցաշեն, հայրենանվեր աշխատանքների խոստմնայից տարի, նոր հետանկարներով խանդավառ:

Վեհափառ Հայրապետի պատգամով ստեղծված խանդավառությունը ավելացնում են հոգևոր ճեմարանի սաները իրենց երգերով, արտասանություններով:

Ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու Նորեն Մելխիսեդյանի ղեկավարությամբ, ոգևորությամբ կատարում է «Նընջույքի երգ», «Գարուն Երևան», «Հայոց գինին», «Այ ֆոռկա, ֆոռկա», «Կաղանդի երգ», «Նամենք, ընկերներ» խմբերգերը:

Բարեճնորհ Եղիշե սարկավազ հաղրամյանը արտասանում է Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի», Բ յարանի ուսանող Հովհաննես սրկվ. Գրվրգյանը՝ Սիմեոն Երեվանցի կաթողիկոսի «Յաւարտ տարւոյ» բանաստեղծությունները:

Գ յարանի ուսանող Վրեժ սրկվ. Ներսիսյանը ընթերցում է հետևյալ «Ուղեք ճանապարհան»-ը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին, ի դիմաց հոգևոր ճեմարանի ուսանողության:

**«Վեհափառ Տեր,**

Նոր տարվա ու նոր կյանքի արշալույսի այս խորհրդավոր պահին մենք՝ հոգևոր ճե-

մարանի ուսանողներս, սրտագին ողջունում ենք գալուստը նոր տարվա, միաժամանակ մի հետադարձ հայացք գցելով մեզինքն ուսանած ու անվերադարձորեն հավերժի գիրկը սուզվող հին տարվա վրա:

Քիչ հետո 1967 տարին պլայացող ճրագի մեջ պիտի մարի, և նրան պիտի հաջորդի նորը՝ լուսաշող աստղի մեջ, լուսավորելով նաև մեր ճանապարհը:

Անսկիզբ ու անվախճան ժամանակը մի շրջան ևս բոլորեց: Հին տարվա մայրամուտին և Ամանորի արշալույսին մարդկությունը մերթ թախիծով, մերթ խիճողով մտածում է գալիք օրերի մասին, նայում է անվերադարձ անցած ժամանակին, որն իր հետ հավերժի գիրկն է տանում մարդկանցից շատերի ցավերն ու վշտերը, երազներն ու իղձերը, երջանկությունն ու բախտավորությունը, հաճախ նաև, ավա՜ղ, չպակված գեղեցիկ ու քարի ակնկալությունները:

Ժամանակը հավիտենական է ու անփոփոխ: Հավիտենականության խորհուրդն է մարդ զգում ժամանակի մեջ: Մարդկային կյանքի իրադարձություններն են, որ փոխվում են ու անցնում, մինչ ժամանակը մնում է անսկիզբ ու անվախճան:

Սակայն մարդու պարտքն է՝ ժամանակը լցնել ազնիվ գործերով և գեթ տարին մեկ անգամ, նոր տարվա առթիվ, հանրագումարի բերել իր աշխատանքի պտուղները, ձեռք բերած հաջողությունները և կրած հուսախաբությունները: Իզուր չանցավ 1967 թվականը հոգևոր ճեմարանի կամարների տակ: Մենք շնորհակալությամբ ենք բաժանվում նրանից, որովհետև Աստուծու օգնականությամբ, Ձերդ Սուրբ Օծության օրհնությամբ և ամենօրյա ղեկավարության մեջ, դասախոսների և մեր աշխատանքով կարողացանք լցնել քարի արդյունքներով 1967 թվի կյանքի մատյանը և իմաստավորել մեր օրերը այս սուրբ հարկի տակ, մի քայլ ևս մոտենալով այն սուրբ նպատակին, որը բերել է մեզ՝ ուսանողներին կրթական այս հաստատության ծոցը մայր հայրենիքից և սփյուռքի գանձազան թեմերից, որպեսզի պատրաստվենք մեր սուրբ եկեղեցու ծառայության վաղվա մեծ գործի համար:

Հոգևոր ճեմարանի սաներս մեր հոգու խորունկ ծայրերից, անհուն սիրով և երախտագիտությամբ մեր սրտագին բարեմաղթություններն ենք բերում Ձեզ, Վեհափառ Տեր, ցանկանալով Ձերդ Սրբության երկար կյանք, արևշատություն և մշտապես առողջություն՝ հետագա Ձեր եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեության համար:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, հանուն հոգևոր ճեմարանի Ձեր հոգևոր զավակների, որդիական ամենաանկեղծ շնորհակալություն և երախտագիտություն հայտնել Ձեր

ամենօրյա հայրական հոգածության համար, որով շրջապատել էք հոգևոր ճեմարանը և շնորհավորել Ձեր Ամանորը:

Շնորհավոր նոր տարի, սիրելի Վեհափառ Հայր»:

Հանդիսության ընթացքում ուսանողության ուղղած և նոր տարվա խոհերով համակված, հուզիչ, ջերմ ելույթներ են ունենում Վիեննայի հայոց հոգևոր հովիվ հոգ. տ. Մերոպ ծ. վրդ. Գրիգորյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը:

Հնդհանուր խանդավառության և ուրախության մեջ տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վարդապետը սրամիտ ու դիպուկ «կաղանկներ» է բաժանում միաբանության անդամներին, հոգևոր ճեմարանի դասախոսներին և ուսանողության՝ հաջող ու համեղ քննությանը:

Մի պահ հանգչում են դահլիճի լույսերը: Մոմերի դժգույն ու պլպլացող լույսերի տակ Բ լսարանի ուսանողներ Հակոբ և Հովհաննես ասրկավազները, նույն լսարանի Արարատ ասրկավազի դաշնամուրի ընկերակցությանը, ապրումով, մեղմորեն ու վեհ կատարում են «Խորհուրդ մեծ» շարականը, «Սուրբ գիշեր» տաղը, «Հրեշտակների երգ»-ը, Փրկչի աստվածահայտնության և ծննդյան մեծ խորհուրդի քերկրանքը բաշխելով բոլոր ներկաներին:

Մայր Աթոռի հովանու ներքո, հոգևոր ճեմարանի կամարների տակ, Հայոց Հայրապետի օրհնաքեր ներկայությանը, Ամանորի ուրախ սեղանների շուրջ բոլորված, ժամանակն անցնում էր արագ, բայց քովանդակալից և տպավորիչ:

Հայոց Հայրապետի օրհնությանը և արթնքով ավարտվում է օրվա հանդիսությունը:


Իր օրհնության մեջ Վեհափառ Հայրապետը խաղաղություն է քարեմաղթում ողջ աշխարհին, քարգավաճում՝ հայոց երկրին ու ժողովրդին, և օրհնելով միաբանությանը, ուսանողությանը և պաշտոնեությանը, թելադրում է նույն նվիրումով ու հավատքով աշխատել՝ գլուխ քերելու համար Մայր Աթոռ ս. Էջմիածնի առաջ կանգնած եկեղեցաշեն ու հայրենանվեր գործերը՝ յ միախառնություն քովանդակ հայ ժողովրդի:

Հայոց Հայրապետը իր եռանդով, իր պայծառ լավատեսությամբ ու անկոտրում հավատքով մի անգամ ևս խանդավառեց բոլորին, Մայր Աթոռի ապագա հոգևոր, եկեղեցական, ազգային ու հայրենասիրական առաքելության նկատմամբ:

Գիշերվա ժամը 28-ին, խմբովին երգված «Հայր մեր»-ով ավարտվում է նոր տարվան նվիրված հանդիսությունը հոգևոր ճեմարանի հարկի տակ:

Շնորհավոր նոր տարի:





ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆ, ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ  
ՀՈԳԵԼՈՒՅՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՀՈՎՍԵՓՅԱՆՑ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ  
ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Ի եկեղեցիներին լրացավ Մայր Աթոռի մեծավաստակ միաբան, մեծանուն գիտնական ու հայրենաւեր և հայ մշակույթի անխոնջ երախտավոր, Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Ա Հովսեփյանց կաթողիկոսի ծննդյան հարյուրամյակը:

Այս հիշարժան տարեդարձի առիթով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի քարեհաճ կարգադրությամբ դեկտեմբերի 21-ին՝ հինգշաբթի օրը, ժամը 14-ին, հոգևոր ճեմարանի հանդիսասարահում տեղի ունեցավ մեծանուն եկեղեցականի կյանքին ու մատենագրական վաստակին նվիրված հարգանքի հանդիսություն:

Հանդիսության նախագահում էր հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը:

Հանդիսության ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մարավանքի պաշտոնությունը և հրավիրյալներ:

Հանդիսությունը բացվում է «Որք գարդարեցին» Թարգմանչաց շարականի երգեգրությունով, որը կատարում է ճեմարանի երգչախումբը:

Երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսի ծննդյան հարյուրամյակին նվիրված հանդիսության ժամանակ հոգևոր ճեմարանի վերակացու արժանապատիվ տ. Նշան քհն. Բելլերյանը ներկայացնում է մեծանուն եկեղեցականի կենսագրությունը:

Ճեմարանի երգչախումբը, եկեղեցական երաժշտության դասատու Հայկ Ֆրանջյանի ղեկավարությամբ, կատարում է «Յաղթող գտա», «Նահատակ բարի», «Նախասարկավագ», «Յաղթող և սուրբ հայրապետ», «Ալիք լանցանագ» և «Յամենայն ժամ» շարականները:

Բ լսարանի ուսանող Հովհաննես Գրվղյանը արտասանում է եղիշե արքեպ. Դուրյանի «Նտևես եկուր» բանաստեղծությունը, իսկ Գ լսարանի ուսանող Հովսեփ սրկ. Հակոբյանը՝ Բ. Ղ. Ալիշանի «Հրազդան, գետակդ իմ հայրենի»-ն: Բ լսարանի ուսանող Հակոբ Նաղբանդյանը ընթերցում է լուսահոգի Տ. Տ. Գարեգին Ա Վեհի գրվածքներից, քարոզներից քաղված զոհար մտքեր ու խորհրդածություններ:

Այնուհետև մեծանուն եկեղեցականի և քաղմավաստակ գիտնականի կյանքի ու գործունեության նվիրված բովանդակային գեկույցով հանդես է գալիս «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի անդամ, պատմական գիտությունների թեկնածու, Սեբրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտական աշխատող Սուրեն Քոլանջյանը:

Հանդիսության վերջում հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը, մի անգամ ևս ոգեկոչելով հիշատակը Մայր Աթոռի մեծանուն միաբանի, հայրենանվեր գիտնականի ու մեծ եկեղեցականի, կոչ է անում ուսանողության՝ հավատարիմ մնալ և Էջմիածնի միաբանության, եկեղեցաշին,

կրթանվեր, մատենագրական այն ավանդու-  
թյուններին, որոնցով փառավորվել է միշտ  
Մայր Աթոռի պատմությունը ու հարստացել  
հայ մշակույթի և մեր եկեղեցական արվեստի  
գանձարանը:

Տ. Տ. Գարեգին Ա Վեհի ծննդյան 100-ամ-  
յակին նվիրված հանդիսությունն ավարտ-  
վում է խմբովին երգված տերունական ա-  
ղոթքով:

Գեկտեմբերի 24-ին՝ կիրակի օրը, Մայր  
տաճարում մատուցվում է հանդիսավոր ս.  
պատարագ:


Հոգ. տ. Ներսես Ծ. վրդ. Պոգոսյանը  
թարգում է «զբարոք պատերազմ պատե-

րագմեցայ, զընթացսն կատարեցի, զիւ-  
ւատսն պահեցի» (Բ ՏԻՄ. Դ 7) քնարանով,  
այն գեղեցկորեն պատշաճեցնելով երանա-  
շնորհ Տ. Գարեգին Վեհի կյանքին և գործու-  
նեությանը, նրա ծննդյան հարյուրամյակի ա-  
ռիթով:

«Հայր մեր»-ից աուսջ Ամենայն Հայոց  
Վեհափառ Հայրապետի նախագահությամբ  
կատարվում է մանավոր հոգեհանգստյան  
պաշտոն՝ ի հիշատակ երանաշնորհ Տ. Տ.  
Գարեգին կաթողիկոս Հովսեփյանցի մահ-  
վան տասնհինգերորդ տարելիցի առիթով:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ ե-  
րիցին»:





## ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Դեկտեմբերի 25-ին՝ երկուշաբթի, տոն «սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին»:

Ս. Ստեփաննոսի տոնը Մայր Աթոռում միաժամանակ տոնն է հոգևոր ճեմարանի սարկավագ ուսանողների:

Մեծ տոնի առիթով Մայր Աթոռի սարկավագները իրենք են կատարում օրվա եկեղեցական երգեցողությանը ղեկավարությունը:

Այս տարի կրկնակի ուրախության և հոգելից բերկրանքի ստիժ էր հանդիսացել ու Ստեփաննոսի տոնը հոգևոր ճեմարանի երեք ուսանողների սարկավագական ձեռնադրությամբ:

Դեկտեմբերի 24-ին՝ կիրակի օրը, Մայր տաճարում երեկոյան ժամերգությունից և նախատոնակից հետո, հոգևոր ճեմարանի տեսչության միջնորդությամբ և Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ, կատարվեց երեք նորընծաների կիսասարկավագական աստիճանի տվչությունը՝ ձեռամբ Մայր տաճարի վոխ-լուսարարապետ գերտ. Հուսիկ եպս. Սանթրոյանի:

Այս ուրախ առիթով, նույն օրը, եկեղեցական արարողության ավարտին, հոգևոր ճեմարանի Ա լսարանի չորս ուսանողներ՝ Ղազարոս Կյուրեղյան, Վարդան Տեղեքյան, Ռաֆիկ Սաղոյան և Արմեն Զիլավյան, տ. Հուսիկ սրբազանի տվչությամբ և օրհնությամբ ստացան ուրար կրելու իրավունք, իսկ Դ դասարանի ուսանողներ Խաչիկ Խաչատրյանը, Կտրիճ Ներսիսյանը, Ժիրայր Սիմոնյանը, Տրդատ Ընահրամյանը, Արտաշես

Մուշեղյանը, Տիգրան Սահակյանը և Արմեն Զիլավյանը ստացան դպրության չորս աստիճաններ:

Դեկտեմբերի 25-ին՝ երկուշաբթի օրը, ս. Ստեփաննոսի սեղանի վրա հանդիսավոր ս. պատարագ մատուցեց տ. Հուսիկ եպիսկոպոսը և կատարեց սարկավագների ձեռնադրությունը:

Խարտավիլակի պաշտոնը կատարում էր հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես Ժ. վրդ. Պողոսյանը:

Ձեռնադրությունից հետո տեսուչ տ. Ներսես Ժ. վարդապետը մի խրատական խոսեց՝ հանուն Վեհափառ Հայրապետի շնորհավորելով Մայր Աթոռի ինը սարկավագների տոնը:

Հավարտ ս. պատարագի բարեջնորհ Եղիշե, Հովհաննես, Գրիգոր, Սասուն, Վրեժ, Հովսեփ, Արարատ, Հովհաննես, Հակոբ սարկավագները հոգ. տ. Ներսես Ժ. վարդապետի առաջնորդությամբ գնացին Վեհափառ՝ աջահամբույրով իրենց հոգևոր Հոր՝ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունն ստանալու իրենց տոնի առիթով:

Հայոց Հայրապետը հայրական ջերմ սիրով բարեհաճեց ընդունել Իր հոգևոր գավակներին և հոգելից մի խրատականով մրանց մի անգամ ևս զինեց իրենց ապագա ծառայության և առաքելության սուրբ տեսիլքով:

Ժամը 15-ին, ի պատիվ Մայր Աթոռի սարկավագների տոնի և ի մասնավորի երեք նորընծաների, հոգևոր ճեմարանի սեղանա-

տանը տրվեց ճաշկերույթ, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանությունն ու հոգև-վոր ճեմարանի դասախոսական կազմը:

Նորընձա սարկավազներին շնորհավորում են տ. Հուսիկ եպիսկոպոսը և, հանուն Մայր Աթոռի միաբանության, հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը:

Սարկավազներին ողոված շնորհավորա-կան ջերմ խոսքեր են ասում նաև ուխտավո-րաբար Մայր Աթոռում գտնվող հոգ. տ. Ծնորհք վրդ. Գասպարյանը, հոգևոր ճեմա-րանի ուսախոսական կազմի անունից՝ Սամ-վել Անթոնյանը և վերակացու Սիմոն Հովի-լանը:

Վերջում նորընձա սարկավազների անու-նից շնորհակալական սրտագին խոսք է ա-սում Բ լսարանի ուսանող բարեշնորհ Հով-

հանճես սրկ. Գրվրգյանը:

Բարեշնորհ Արարատ սրկ. Գալստյանը ծնվել է Էջմիածնում 1950 թվականին: Վերջացնելով վեցամյա դասընթացները Միկոյանի անվան միջնակարգ դպրոցի, 1968 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Հովհաննես սրկ. Գրվրգյանը ծնվել է Լիբանանի Թրիփոլի քաղաքում 1949 թվականին: Նախնական կրթությունը ստացել է Խրիմյան Հայրիկի անվան վարժա-րանում: 1968 թվականի հոկտեմբերի 20-ին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Հակոբ սրկ. Նալբանդյանը ծնվել է 1949 թվականին Բեյրութում: Նախնական կրթությունը ստացել է Մելքոնյան վարժարանում: 1965 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:





## Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Նոյեմբերի 23-ին՝ ճինգլարբի.— Այսօր երեկոյան Մայր Աթոռ ժամանեց Ուրուզլայի հայոց հոգևոր հովիվ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը:

Նոյեմբերի 26-ին՝ կիրակի.— Մայր տաճարում պատարագեց արժ տ. Մկրտիչ քհն. Մկրտչյանը, և քարոզեց հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը՝ «Ծն եմ լոյս, որ զայ առ իս ի խաւարի մի մնասցէ» բնարանով:

Դեկտեմբերի 2-ին՝ շաբաթ.— Տոն «Արքայ առաքելոց և առաջին լուսաւորչացն մերոց Քաղէոսի և Բարթողիմէոսի»:

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Անրայդարյանը:

Դեկտեմբերի 3-ին՝ կիրակի.— Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Գեվորգ վրդ. Սնրայդարյանը՝ «Ծն հիւանդաց բժշկութիւն» բնարանով:

Դեկտեմբերի 5-ին՝ երեքշաբթի.— Մայր տաճարի լուսարարացեալ և Հնդկաստանի և Մայրազույն Արևելքի հայրապետական պատվիրակ գեր. տ. Հայկազուն արքեպ. Արքաճամյանը Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ մեկնեց Հնդկաստան՝ հովվական այցելութեան՝ տանելով ն. Ս. Օծուխյան օրհնութեանները: Գեր. Հայկազուն արքեպետը Հնդկաստանում Քանին կենաց քարոզութեամբ կմխիթարի հավատացյալներին և, զբաղվելուց հետո թեմական-վարչական գործերով, կվերադառնա Մայր Աթոռ 1968 թվականի փետրվարի վերջերին:

Դեկտեմբերի 10-ին՝ կիրակի.— Գ կիրակի զկնի Յիսնակաց:

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը՝ «Ահա-լասիկ ամենայն ինչ պատրաստ է, եկայք ի հարսանիս» բնարանով:

Դեկտեմբերի 17-ին՝ կիրակի.— Դ կիրակի զկնի Յիսնակաց:

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց արժ տ. Հովհաննէս քհն. Մարությանը՝ «Ծն իմ հացն կենաց» բնարանով:

Դեկտեմբերի 28-ին՝ ճինգլարբի.— Մայր Աթոռ ժամանեց Վիեննայի հայոց հոգևոր հովիվ և ժնեում նկեղեցիների համաշխարհային խորհրդի մու Մայր Աթոռի մնայուն ներկայացուցիչ հոգ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը՝ Վեհափառ Հայրապետի հրավերով: Հոգ. հայր սուրբը այցելեց նաև այս առթիվ մայր հայրենիքի տեսարժան և պատմական վայրերը, եղավ Մաշտոցի անվան Մատենադարանում, գիտութեանների ակադեմիայում: Հոգ. տ. Մեսրոպ ծ. վարդապետը իր պաշտոնատեղին մեկնեց հունվարի 4-ին:

Դեկտեմբերի 31-ին՝ կիրակի.— Զ կիրակի Յիսնակաց:

Մայր տաճարում պատարագեց ուխտարար Մայր Աթոռում գտնվող հոգ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և քարոզեց «Նորոգող բնութեանց նորոգեալ և դիս նորոգ զարգարեալ» բնարանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

Հունվարի 1-ին՝ երկուշաբթի.— Գ օր Սը-  
երնդեան պահոց, Կաղանդ և տարեմուտ:

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ.  
Մուշեղ վրդ. Պետիկյանը, Հավարտ ս. պա-  
տարագի Իջման ս. սեղանի առաջ տեղի ունե-  
ցավ հայրապետական մաղթանք՝ Վեհափառ  
Հայրապետի նախագահութեամբ: Նոր տարվա  
առթիվ Մայր Աթոռի միաբանության անու-  
նից Վեհափառ Հայրապետի Ամանորը շնոր-  
հավորեց գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝  
Մայր Աթոռի պայծառութեան և Վեհափառ  
Հայրապետի թանկագին կենաց արնշատու-  
թեան մաղթանքներով: Հավարտ ս. պատար-  
ագի Վեհափառ Հայրապետը Վեհարանում  
բարեհաճեց ընդունել միաբանությանը և հո-  
գևոր ճեմարանի սաներին՝ նոր տարվա առի-  
թով:

\* \* \*

Հունվարի 5-ին՝ ուրբաթ.— Ճրագալույց  
Մենդեան և Յայտնութեան Տեառն մերոյ Յի-  
սուսի Քրիստոսի:

Մայր Աթոռում ավանդական հանգիսու-  
թեամբ տոնվեց Մենդյան Ճրագալույցը: Մայր  
տաճարում երեկոյան ժամերգութեան ժամա-  
նակ հոգևոր ճեմարանի սարկավազները ըն-  
թերցեցին «Դանիել»-ի գիրքը: Ճրագալույցի  
պատարագը մատուցեց հոգ. տ. Շնորհք վրդ.  
Գասպարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայ-  
րապետը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայ-  
րապետը եկեղեցական թափսրով և շնորհուրդ  
մեծա շարականի հելյունների ներքո առաջ-

նորդվեց Վեհարան, ուր օրհնեց Մայր Աթոռի  
միաբանությունը:

\* \* \*

Հունվարի 7-ին՝ կիրակի.— Բ օր Մենդյան,  
Յիշատակ մեռելոց:

Մայր տաճարում պատարագեց արժ. տ.  
Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգե-  
հանգիստ:

\* \* \*

Հունվարի 10-ին՝ շաբաթ.— Նոր տար-  
վա և ս. Մենդյան տոների արձակուրդներից  
հետո, հոգևոր ճեմարանում վերսկսվեցին  
դասավանդությունները:

\* \* \*

Հունվարի 13-ին՝ շաբաթ.— Ը օր Մենդեան,  
Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յի-  
սուսի Քրիստոսի:

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց  
հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայզարյանը:


\* \* \*

Հունվարի 14-ին՝ կիրակի.— Ա կիրակի  
ղկնի Մենդեան:

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց  
հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայզարյանը՝ ս. Հով-  
հանես Մկրտչի մասին:

\* \* \*

Հունվարի 15-ին՝ երկուշաբթի.— Այսօր հո-  
գեվոր ճեմարանում սկսվեցին 1967—1968  
ուսումնական տարվա կիսամյա քննություն-  
ները, որոնք կտևեն մինչև հունվարի վերջը:





## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Ի Ր Ա Ք, Բ Ա Ղ Դ Ա Դ

Վերջերս Մայր Աթոռ ս. Էջմիածին ուղարկած Իրաքի հայոց բարեխնամ առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանի զեկուցագրից քաղվածաբար հրատարակում ենք մի շարք տեղեկություններ թեմի ազգային-եկեղեցական, մշակութային ու կրթական կյանքի մասին:

Ուրախությամբ արձանագրում ենք, որ վերջին մի քանի տարիների ընթացքում առաջնորդ սրբազանի և տեղի թեմական ազգային իշխանությունների համերաշխ գործակցությամբ թեմը քոյրորում է ծաղկում և բարգավաճ գործունեության մի շրջան՝ ի մխիթարություն Վեհափառ Հայրապետի և հուրախություն մեր հավատացյալ ժողովրդի:

Թեմում անցնող երկու տարիների ընթացքում սկսվել է և իր բարեհաջող ընթացքի մեջ է գտնվում եկեղեցադպրոցաշինական գործունեությունը:

1967 թվականին հիմնովին վերանորոգվել է Բաղդադի ս. Աստվածածին մայր եկեղեցին, կառուցվել են դպրոցներ Պասրա, Սուսուլ և Քերքուք քաղաքներում և մեկ դարմանատուն (պոլիկլինիկա)՝ Բաղդադի դպրոցի համար՝ Կյուլպենկյան հաստատության կողմից:

Բաղդադի ս. Աստվածածին եկեղեցու վերանորոգման մասին սրբազանը գրում է.

«Հոս այս տարի հիմեն նորոգեցինք Պաղտատի և ամբողջ Իրաքի հայոց պատմական հից եկեղեցի» ս. Աստվածածինը, որը շուրջ 350 տարվան հնություն ուներ և ուխտատեղի՝ քաղաքիս թուրք կրոններու և հարանվանությանց, իր ս. Աստվածածնի հրաշագործ պատկերովը և քառասուն Մանկանց նշխարներով: Եկեղեցին հիմեն վար առնվեցալ և նույնությամբ վերակառուցվեցալ՝

արդյամբ և ծախյուք Արամ Ղարապյանի, բարեպաշտ ազգայիցի»:

Բացի հիշյալ արդեն ավարտված շինությունները, ծրագրում կա վերանորոգել և կառուցել մի շարք այլ եկեղեցիներ և դպրոցներ.


«Պատաստի մեջ ունինք ազգային վարժարաններ, մին 1400 աշակերտներով, մյուսը՝ շուրջ 200 աշակերտներով: Կյուլպենկյան հիմնարկության հետ բանակցության մեջ ենք, որ երրորդ մը կառուցանե մեզի համար, երկրորդականի համար:

Մուսուլեն ավելի հյուսիս, Չախտ ավանին մեջ ունինք շուրջ 130 քրտախոս հայ ընտանիքներ, մոտավորապես 500 մանուկներով, անոնց համար ալ եկեղեցի մը շինելու ծրագիրն ու նախապատրաստությունները ունինք հատաչիկա տարվան ընթացքին, Կյուլպենկյան հիմնարկության օժանդակությամբ»:

Վերոհիշյալ մեջբերումները ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ ճիգեր է գործադրում Իրաքի, տնտեսապես ոչ լայն հնարավորություններով հայ զաղութը, որը հաշվվում է շուրջ 18000 անձ, որպեսզի հարատևի ապրել, որպես հայ իր մատաղ սերունդին ևս կրթելով ու դաստիարակելով հայեցիորեն՝ հայ եկեղեցու շնչի տակ:

Ի նկատի առնելով այս քոյրոր, Ամենայն Հայոց Վեհափառ և Սրբազնագույն կաթողիկոսը՝ Վազգեն Ա-ը, իրավամբ գնահատում է Իրաքի առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանի և տեղի թեմական ազգային իշխանությունների թափած ջանքերը և իր օրհնությունն է քաջխոմ Իրաքի ազգասեր ու եկեղեցասեր հավատավոր գաղութին:

ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ,



Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ\*  
(1920—1967 ԹԹ.)

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻՆԸ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՅՈՒՍ ԱԹՈՌՆԵՐԸ  
ԳԵՎՈՐԳ Ե-Ի ՕՐՈՎ

Կ Ի Ն Կ Յ Ա Ն Ա թ ո ռ

Գևորգ Ե կաթողիկոսի օրով, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, 1915—1917, և ապա 1920-ական թվականները դառն, ողբերգական ճակատագիր էր վիճակվել հայ ժողովրդին և Հայց. առաք. եկեղեցուն:

Հայ հոգևորականությունը հավատարիմ իր դարավոր ազգային-եկեղեցական ավանդություններին, ի գլուխ իր հոտին, ապրեց իր պատմության ամենաողբերգական էջերից մեկը: Արևմտյան Հայաստանում շուրջ 9000 եկեղեցիներ և վանքեր քանդվեցին, այրվեցին և շուրջ 4000 հոգևորականներ նահատակվեցին:

Ամայացան երբեմնի մեր ծաղկյալ նվիրապետական Աթոռները, հոգևոր կենտրոնները:

1920 թվից սկսած Գևորգ Ե-ի օրոք հայ եկեղեցին սկսեց բուժել իր վերքերը:

Արդարև, հարկավոր էր ուռքի կանգնեցնել

վիրավոր հայ եկեղեցին, նոր շունչ ու ոգի տալ նրան և նորից դնել այն իր հոգևոր կոչման ու առաքելության բարձրության վրա:

Դառն օրեր ապրեցան Տաճկ Կիլիկիո, Երուսաղեմի, Կ. Պոլսի պատրիարքական Աթոռները:

1920 թվականին Տաճկ Կիլիկիո կաթողիկոս էր Սահակ Խաչատյանը՝ ընտրված 1809 թվականին: Խաչատյանը գահակալեց մինչև 1938 թվականը: Նա եղավ Կիլիկիո Աթոռի ամենաերկարակյաց հայրապետներից մեկը:

Սահակ կաթողիկոսը ևս, Գևորգ Ե-ի նրման, տեսավ լավ ու վատ օրեր: Սահակ կաթողիկոսի պաշտոնավարության շրջանը՝ մինչև 1921-ը, «լի է դժբախտության, կոտորածի և տարագրության սրտանմիկ դրվագներով» (Բարգեն աթոռակից կաթողիկոս, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, էջ 774):

1809 թվականի Ադանայի կոտորածը, 1914-ի համաշխարհային պատերազմը և Ապրիլյան եղեռնը, արևմտահայության տարագրությունը: Տարագրվում է նաև Սա-

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1967 թ. 1-ր համարից:

հակ կաթողիկոսը Երուսաղեմ, ապա Դամասկոս: 1919 թվականի հունիսին իր ժողովրդի բեկորների հետ վերադառնում է Կիլիկիա՝ իր Աթոռը՝ Սիւ:

Բայց տարաբախտ կաթողիկոսին սպասում էին նոր վշտեր ու հուսախաբություն:

1920 թվականի հունվարի 20-ից մինչև փետրվարի 10-ը տեղի ունեցան Մարաշի կռիվները և 15000 հայերի կոտորածը: Ֆրանսիացիք լքեցին Մարաշը և հեռացան: Վրա հասան Հաննի պաշարումն ու հերոսամարտը, Դյորտ-Յոլի, Օսմանիեի կռիվները, Սսի պարպումը, Այնթապի հերոսական ինքնապաշտպանությունը և պարտումը 1920-ի ապրիլին:

1921 թվականի դեկտեմբերին Սահակ կաթողիկոսը դառնության քաժակը ցմրուր քամեց, երբ բոլոր հայ ժողովուրդը արդեն հեռացած էր, ինքն այ անդարձ մեկնեցավ Ադանայեն» (Բարզեն աթոռակից կաթողիկոս, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, էջ 974):

Դատարկվեց շեն ու պայծառ Կիլիկիան: Սսի Աթոռը ևս կորցրեց իր ոտքի հողը: Չըկար Կիլիկիան: Ի՞նչ պետք է լիներ ճակատագիրը Կիլիկյան Աթոռի:

Կիլիկիայի դատարկումից հետո գաղթական ժողովուրդն ապաստան գտավ մասնավորաբար Սիրիայում և Լիբանանում:

Տարագիր կաթողիկոսը հաստատվեց Կիպրոս, Հայեպ, Դամասկոս, և նրա առաջին գործը եղավ՝ Սիրիա և Լիբանան հաստատված Կիլիկյան հայ համայնքների մեջ «եկեղեցական և կրթական կազմակերպություն» ստեղծել, հավաքել հայության բեկորներին եկեղեցու և դպրոցի շուրջ: Կիլիկյան թեմերից միան Հայեպն ու Կիպրոսն էին մնացել:

Սահակ կաթողիկոսը մտածում է իր Աթոռը հաստատել Հայեպում, ուր Եպիսկոպոս էլ Գևորգի էին Կիլիկյան կաթողիկոսները, Հայեպի ս. Քառասուն մանկանց եկեղեցում կատարվել էին կաթողիկոսական ձեռնադրություն: Եկեղեցու քակում կային թաղված Սսի կաթողիկոսները: 1928 թվականի մայիսի 20-ին Հայեպում, ս. Քառասուն մանկանց եկեղեցում, տարագիր Սահակ կաթողիկոսը կատարում է մեռնօրհնեցի հանդիսությունը՝ ի մխիթարություն ժողովրդի: Ապա Հայեպի թեմի համար կաթողիկոսական փոխանորդ է նշանակում Խաղ ծ. վրդ. Աջապահյանին, իսկ 1925 թվականի մարտի 3-ին Արտավազդ վրդ. Սյուրմեյանը ընտրվում է Հայեպի թեմի առաջնորդ: 1928 թվականի դեկտեմբերին երկուսն էլ եպիսկոպոս են ձեռնադրվում:

Մինչ Սահակ կաթողիկոս Հայեպի թեմին համար ստան կաթողությունները կրճեր, մյուս կողմն կաշխատել որ հոգատար իշ-

խանությանց կողմն ինքը ճանցվել էր հոգևոր պետ Սյուրիո և Լիբանանի հայության: Այդ այ իր փափաքին համեմատ կատարվեցավ 1924-ին» (Բարզեն կաթողիկոս, Պատմություն Կիլիկիո կաթողիկոսաց, էջ 974):

Արդարև, Կիլիկիայի պարպումից հետո օրվա հարցն էր, մանավանդ, Կիլիկյան Աթոռի գոյության, կազմակերպման և պահպանման հարցը:

Կային մարդիկ, որոնք մտածում էին, թե Կիլիկիայից դուրս իմաստ չունի պահել Կիլիկյան Աթոռը, և «ավելորդ է Կիլիկիո կաթողիկոսությունը Սյուրիո մեջ, քանի որ Երուսաղեմի հայ պատրիարքությունը էրև դարավոր Աթոռ, կրճա ինքն ստանձնել Սյուրիո հայության եկեղեցական գործերու ղեկավարությունը» («Սիոն», 1929, էջ 132):

Ուրիշները այլ կերպ էին մտածում: «Մեր եկեղեցին հասած է այսօր ամենեցն տազնապայից հանգրվանի մը, մեծ պատերազմենց առաջ եկած պաշտնաներուն հետևանքով: Որպեսզի այդ տազնապար վտանգի չվերածվի, պետք է գորացնել հայ եկեղեցին, ուր որ հնարավորություն կա ընելու այդ քանը» (Նույն տեղում, էջ 132):

Մտահոգ էր նաև, բնականաբար, Սահակ կաթողիկոսը Կիլիկյան Աթոռի ապագայով: Նա էլ մտածում էր իր Աթոռի գոյության և տևականության մասին: 1928 թվականի փետրվարին սիլիոնի հայության ուղղված իր հատուկ «Կտակ»-ում, որը «Կտակ սր ըլլալե ավելի Կիլիկիո կաթողիկոսության տևականության մղձավազն էր» (Բարզեն աթոռակից կաթողիկոս, էջ 995), անդրադառնալով Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայ եկեղեցու առաջ ծառայած «էական, կենսական հարցեր»-ի վրա.— գրում էր. «Խղճով, սրտով և հոգիով պարտրված և պաշարված—ի՞նչ պիտի ըլլա Կիլիկիո կաթողիկոսության և իր ժողովուրդին ապագան—հարցին անդորրացուցիչ լուծում մը գտնելու տազնապար կտառապինք, դժբախտաբար անորոշության, անստուգության մեջ կտարուրերինք անլույս և անհույս անդել նավու մը պես: Այս պատճառով հսրկաղըրվեցանք ներկայիս խնդրել ձեր սիրելությունենց, որ անվերապահորեն ձեր կարծիքով և գաղափարով լուսավորեք զմեզ, որպեսզի անդորրացած խղճով փակենք աչքերնիս»:

Կիլիկյան Աթոռի գոյության, հարատևության մասին «եղան,—գրում է իր «Կտակ»-ում Սահակ կաթողիկոսը,—բտողներ և գրողներ. «Կիլիկիո կաթողիկոսությունը միացնելու է Երուսաղեմի պատրիարքության»: Ուրիշները, որոնց թվում և Սահակ կաթողիկոսը, ավելի կանոնական էին գտնում Կիլիկյան Աթոռի միացումը զրնդհանրական հայ-

րապետություն»։ Այս հարցում շատերն էլ «քանակոր և օրինական կզտնենից այթոնակցի մը օծումը» («Կտակ»)։

Նույն օրերին և նման մտահոգություններով տարված, կիլիկյան տարագիր հայ ժողովրդի և թափառական կաթողիկոսական Աթոռի տխուր վիճակով և ապագայով զբաղվում էին և՛ Ամենայն Հայոց Հայրապետը, և՛ Մայր Աթոռը։

Գևորգ Ե-ը 1924 թվականին գրում է Սահակ կաթողիկոսին. «Կուզենք իմանալ Սիրիայում որչա՛փ կազմակերպված թեմեր ունենք ու՛քե՛ր են առաջնորդները, ինչպիսի՞ թեմական հաստատություններ կան»։

1926 թվականին Գևորգ Ե-ը Սահակ կաթողիկոսին գրում է նաև «Կիպրոսի հայոց թեմի շուրջ եղած տարածայնությանը և նրա իրավասության խնդրի վերաբերյալ»։

Գևորգ Ե-ը, նույն նամակում, Կիպրոսի Մելքոնյան հաստատությանը շուրջ ծագած ծանոթ վեճի առիթով, դատապարտում է Մուշեղ Աերոթյանի դիրքը՝ մեղադրելով նաև Կիպրոսի կաթողիկոսական փոխանորդ Պետրոս. եպս. Սարաճյանին, որ ընկել է «Աերոթյանի ազդեցության տակ», մինչ ազգի և եկեղեցու շահը պահանջում էր, որ Սարաճյանը Ջավեն պատրիարքի կողքին լիներ։

Այս առթիվ Գևորգ Ե-ը Սահակ կաթողիկոսի ուշադրության էր հանձնում նաև հետևյալ առաջարկը. «Նկատի ունենալով ստեղծված պայմանները և այն հանգամանքը, որ այնտեղ կենտրոնացած է ընդհանուր-ազգային մի հաստատություն, արդյոք նպատակահարմար չե՞ք գտնում, որ Կիպրոսի թեմում Ամենայն Հայոց կաթողիկոսը ունենար իր ներկայացուցիչը, որը թե՛ կկառավարեր թեմը և թե՛ ամենատեսրտ հարաբերություն կպահպաներ Ձեր սրբության հետ։ Այս մասին կապասեմ Ձեր պատասխանին»։

Սահակ կաթողիկոսը Գևորգ Ե-ին պատասխանում է 1927 թվականի ապրիլին։ Այդ նամակը չգտանք «Կաթողիկոսական դիվան» արխիվում։ Բաց կար ն. Սրբության 1927 թվականի սեպտեմբեր 24 թվակիր նամակը՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Բագրատ արքեպիսկոպոսին գրված, Հայեպից, ուր հաստատվում էր, որ պատասխանել է նաև ապրիլի 12-ին Գևորգ Ե-ի նամակին։ Այս առթիվ Սահակ կաթողիկոսը ուզել էր նաև Մա՛ր Մաշտոց՝ Մայր Աթոռից եպիսկոպոսական ձեռնադրության համար։ Ի նամակում Սահակ կաթողիկոսը ակնարկում էր նաև որ «մենք գլուխնիս հանգչեցնելու տեղ չունինք»։

Կիլիկյան թեմերի կազմակերպման հարգում «ձանձրություն չտալու համար,—գրում է Սահակ կաթողիկոսը իր մի այլ նամակում,—աչս պարագան չհիշեցի Նորին Սըր-

բության (Գևորգ Ե-ին), Երուսաղեմի իրեն վիճակներուն մեջ, հազիվ 1500 հոգի կզրտնըվեին, մինչդեռ հիմա 1500 հոգի կավույկեի և 8—4000 հոգի Դամասկոսի մեջ կզտնվին։

Կիլիկիո և Երուսաղեմի Աթոռներուն եղբայրական համաձայնությունը (խուքը Սիրիայում և Լիբանանում երուսաղեմապառական վիճակների մասին է) միայն սրբազան Հայրապետի օրհնակիր միջնորդությամբ գլուխ կրնա ելնել» (Ընդօժումները իմն է—Ա. Հ.)։

Նամակի վերջում Սահակ կաթողիկոսն ավելացնում է.

«Հանեցեք ն. Ա. Օծության գաղափարն ու կարծիքը հաղորդել մեզ»։

1928 թվականի հոկտեմբերի 22 թվակիր նամակով Սահակ կաթողիկոսը դարձյալ գրում էր՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Մառթոս տարքեպիսկոպոսին, հայտնելով, որ իր նամակի հետ Մայր Աթոռ է ուղարկվել նաև «Կտակ»-ից մի օրինակ. «Եթե հասավ «Կտակ»-ը,—գրում է Սահակ կաթողիկոսը,—անշուշտ Նորին Վեհափառությունը հանեցավ աչքե անցնել։ Կփափաքիմ իմանալ Նորին Սրբության իմաստուն տեսությունը և Գերագույն հոգևոր խորհուրդի կարծիքը։

Գրեթե ընդհանուր ազգի փափաքն ու քաղձանքն է պահել Սյուրիո և Լիբանանի մեջ Կիլիկիո կաթողիկոսությունը, հակապաշտելու այն գորավոր պրոպագանդը, որով կաշխատվի հայ եկեղեցին կտանգել, որսալով անոր գավախները ս. Պետրոսի գանձանակեն, ակնախտիդ ոսկիներով»։

Այնուհետև վերահիշյալ նամակում Սահակ կաթողիկոսը գոհունակությամբ նշում է, որ ս. Էջմիածին և մայր հայրենիք այցելած մարդկանցից «կհարցնենք միշտ և լավ տեղեկություն կուտան ն. Սրբության առողջության և խորհրդային կառավարության շինարարության մասին։ Կրկնապես կմխթարվինք օտարության մեջ և ջերմագին կաղթենք, որ Աստված ընդերկար պահե Նորին Վեհափառությունը և ամեն հաջողություն պարգևե կառավարության, որպեսզի մտալուս և երջանիկ օր մը հայրենաբաղձ հայությունը ծողով է Մասյաց հովանավոր թևոց տակ»։ (Ընդօժումը իմն է—Ա. Հ.)։

1928 թվականի դեկտեմբեր 25 թվակիր և 645 համար նամակով տեղակալ Խորեն արքեպիսկոպոսը եզիպտահայոց առաջնորդ և հայրապետական լիազոր տ. Թորգոմ արքեպիսկոպոսին գրում էր հետևյալը՝ կիլիկյան Աթոռի և թեմերի կազմակերպության հարցով.

Հայրապետական լիազոր-ներկայացուցիչ Եվրոպայի հայոց թեմում և Մայր Աթոռի նվիրակ

Գեր. տ. Թորգոմ արքեպիսկոպոսին

Գերագույն հոգևոր խորհուրդը ուղարկելով Ձեզ սորա հետ Նորին Վեհափառության ամսոյս 25-ի թ 646 գրութիւնը հանուն Երուսաղեմի պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե սրբազան արքեպիսկոպոսի՝ հանձնարարում է հիշյալ գրութիւնը անձամբ մատուցանել ամենապատիվ պատրիարքին, իմանալ նորա անձնական կարծիքը ու զեկուցանել Վեհափառ Հայրապետին: Ամենայն հավանականութեամբ ամենապատիվ սրբազան պատրիարքը կը կամենա իր գործակից ու աջակից սրբազանների հետ խորհրդակցել այս կարևոր հարցի առթիվ: Խորհուրդս այս առթիվ հայտնում է, որ Վեհափառ Հայրապետի ցանկությունն է այս կարևոր խնդիրը քննարկել բազմակողմանի կերպով, լայն սկզբունքային տեսակետով ի նկատի ունենալով միայն Սիրիայի հայության ազգային-կրօնական, եկեղեցական-վարչական գործերի կազմակերպումը ու վարչաձևի միությունը:

Նույն օրը, 1928 թվականի դեկտեմբեր 25 թվակիր և 646 համար նամակով նույն հարցի շուրջ տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսն այս անգամ, հանուն Ամենայն Հայոց կաթողիկոսի, գրում էր հետևյալ նամակը Երուսաղեմի ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքին.

Նորին ամենապատիվություն պատրիարքի Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան արքեպիսկոպոս Դուրյանին

Անշուշտ Ձեզ քաջ հայտնի է Կիլիկիո հայոց շնորհազարդ կաթողիկոսի և Ֆրանսիական Սիրիայում ապաստան գտած Կիլիկիո հայության վիճակը: Գլխավորապես մենք ի նկատի ունենք մեր հոգևոր զավակների ազգային-կրօնական ու եկեղեցական-վարչական գործերը, որպիսի տեսակետով մտնեցալով խնդրին. մենք միանգամայն անհրաժեշտ և անհետաձգելի ենք համարում Սիրիո հայոց թեմերի շուտափոյթ և լավ կազմակերպումը, որպեսզի այնտեղի ազգային-եկեղեցական բազմապիսի գործերն ավելի կազմակերպվող ընթացք ստանան, Հայաստանյայց եկեղեցւո զավակները չընկնին կաթողիկ և բողոքական միսիոնարներին որոգայթների մեջ ու չօտարանան և այժմյանից հայտնի ինքնի թե՛ արդյոք ապագա ազգային-եկեղեցական համագումարում որչա՛փ հոգևոր ու աշխարհիկ պատգամավոր պիտի հրավիրվեն Սիրիո հայոց թեմերից, որոնք գտնվում են Կիլիկիո կաթողիկոսության անմիջական իրավասության տակ և որոնք (թեմերի) թիվը մինչև այժմ որոշակի հայտնի չէ մեզ:

Այս հարցի առթիվ ի պատասխան մեր գրութեան շնորհազարդ տ. Սահակ կաթողիկոսը անցյալ 1927 թ. ապրիլ 22-ի գրութեամբ, ի միջի այլ խնդիրների, հայտ-

նել էր մեզ, որ «Լիբանանի ու Սիրիո մեջ երկու գլխավոր թեմեր պիտի կազմեինք, եթե ըստ խնդրանաջս Երուսաղեմի ամենապատիվ պատրիարքը հաճեր Բեյրութի մատուռը հարակից տեսչական բնակարանով, նույնպես և Դամասկոսի եկեղեցին առ ժամանակյա մեզ հանձնելը»: Մի այլ գրութեամբ շնորհազարդ Սահակ կաթողիկոս հույս է հայտնում, որ «ի վերջո գուցե հարգվի իր խնդիրը Երուսաղեմի կողմեն, որուն ներկա զահակայ Եղիշե սրբազան պատրիարքը անձիս պես կը սիրեմ և կը հարգեմ իբրև ազգապարծանք անձնավորություն, իր բազմակողմանի հրմտությամբ»:

Մի կարևոր նամակ ևս ստացել ենք, որից երևում է, որ մի խումբ բարեմիտ ազգայիններ նպատակահարմար են համարում «Ֆրանսիական հովանավորության տակ եղած Դամասկոսի, Բեյրութի և Լավոդիկեի հոգևոր տեսչությունները իրենց եկեղեցիներով դնել Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո, իսկ անզ իական հովանավորության տակ գտնվող Կիպրոսի թեմը՝ հայոց ս. Մակարա վանքով, դնել Երուսաղեմի պատրիարքության իրավասության տակ: Հայտնելով վերոգրյալը Ձերդ Վեհափառության և ցանկալի համարելով, որ այս խնդիրը քննվի լայն սկզբունքային տեսակետով ի նկատի ունենալով միայն Սիրիո հայոց թեմերու կազմակերպման գործը և հոգեվոր կառավարության վարչաձևի միությունը»: Լիահույս ենք, որ Դուք, սիրելի լծակից եղբայր, վերոհիշյալ խնդրի մասին կը հայտնեք ինձ Ձեր հայեցակետը և անհրաժեշտ լուսաբանությամբ, որպեսզի ըստ այնմ մեր կողմից պատասխան ուղարկվի շնորհազարդ տ. Սահակ կաթողիկոսին:

Սիրիայում և Լիբանանում կիլիկյան Աթոռի և թեմերի վերակազմութեան հարցով 1929 թվականի ապրիլի 30-ին, Գևորգ Ե կաթողիկոսի մասնավոր հանձնարարությամբ Երուսաղեմ է մեկնում հայրապետական պատվիրակ և Եգիպտոսի հայոց առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Գուշակյանը՝ «Դուրյան պատրիարքին հանձնելու համար Մայր Աթոռին հղված կարևոր գրութեանն և խորհրդակցելու համար անոր հետ» (Ա. Այպոյանյան, Թորգոմ պատրիարք Գուշակյան, Կահիրե, 1940, էջ 498):

Թորգոմ սրբազանը Ամենայն Հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ Երուսաղեմ կատարած իր ուղևորութեան մասին գրում է. «Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պաշտոն տված էր իրեն Երուսաղեմ երթալով տեսնել սրբազան պատրիարքը և պատվարժան միաբանությունը. իր անուցով սուրաջարկելու համար, որպեսզի նախ՝ Կիլիկիո կաթողիկոսության Այուրիո մեջ կազմակերպումի գործը դյուրացնելու համար, Ե-

րուսադեմի Աթոռը կիլիկյան Աթոռին թողու Դամասկոսի, Բերութի, և Անտիոքի իր եկեղեցիները, կալվածները և առաջնորդարանները...

Երբ Երուսաղեմ հասա, ամենայն հաճույքով տեսա, որ միաբանական ընդհանուր ժողովով վերջին մեկ որոշումը, որ պատիվ միայն կրերն Երուսաղեմի սրբազան պատրիարք հոր և ս. Աթոռո պատվարժան միաբանության վեհաձեռն ողջմտության, այդ հարցերն ալ կարգավորված էին արդեն Ամենայն Հառոց Ս. Հայրապետին փափաքին համեմատ, Ն. Ս. Օծույթյան նամակը ստանալեն ալ առաջ» («Սիոն», 1928, էջ 160):

1928 թվականի մարտի 28-ին Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դահլիճում գումարված միաբանական ընդհանուր ժողովը, ամենապատիվ տ. Եղիշե արքեպ. Դուրյանի նախագահությամբ, քննության առնելով Սահակ կաթողիկոսի առաջարկը՝ Սիրիայի մեջ գտնվող և ս. Աթոռի պատկանող թեմերի Կիլիկիայի կաթողիկոսության ժամանակավորապես փոխանցումի մասին, որոշում է. «Նկատի առնելով Կիլիկիո կաթողիկոսության Սյուրիո մեջ կազմակերպության օժանդակելու պարտքը ս. Աթոռիս կողմե, միաձայն հավանությամբ որոշեց Սյուրիո երուսաղեմապատկան թեմերը փոխանցել Կիլիկիո կաթողիկոսության, Ն. Ս. Օծույթյուն Ս. Սահակ կաթողիկոսի իրավասություն տակ դնելով եկեղեցիները, առաջնորդարաններն ու դպրոցները՝ իրենց բովանդակությամբ»:

Միաբանական ընդհանուր ժողովի այս որոշումը հեռագրով Դուրյան պատրիարքը հաղորդում է Սահակ կաթողիկոսին՝ Բեյրութ:

Երուսաղեմի Հայրապետը զգացված, պատասխանում է 1928 թվականի մարտ 27 հետևյալ հեռագրով, Դուրյան սրբազան պատրիարքին ուղղյալ.

«Ձերմապես շնորհակալ եմ Ձեր ամենապատվության և միաբանության իրենց բարեխաղ որոշման համար, ներշնչված եղբարակցության այն բարձրագույն ըմբռնման. օժանդակություն մըն է Կիլիկիո կաթողիկոսության վերակազմության համար» («Սիոն», 1928, էջ 126, հարգեն պթոռակից կաթողիկոս, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, էջ 878—880):

Թեմերի փոխանցումը սկսվում է Բեյրութից երկու Աթոռների կողմից նշանակված մասնավոր հանձնաժողովի ներկայության և ստորագրությամբ: Երուսաղեմի վանքից նշանակվում են Տեօբեն ժողովի անդամ տ. Մատթեոս եպս. Գայրզճյանը և պատրիարքարանի ղեկավարապետ Կարապետ Նուրյանը: Փոխանցումը կատարվում է 1928 թվականի ապրիլի 14-ին:

Երուսաղեմի Աթոռի Սիրիայում տնեցած թեմերի ժամանակավորապես կիլիկյան կաթողիկոսության փոխանցման պայմանների և այդ առթիվ կատարված գործողությունների տեղեկագիրը, Երուսաղեմի հայոց պատրիարքության տնօրեն ժողովի որոշումով հանձնվել է մամուլի, տեսչակի ձևով հրատարակելու համար».—վկայում է «Սիոն» ամսագիրը (1928, էջ 288): Մենք ձեռքի տակ չենք ունեցել տպագրված այդ տեղեկագիրը:

Այս ձևով վերակազմվում էր կիլիկյան Աթոռը՝ համազգային օժանդակությամբ և մասնաբաշխությամբ:

Վերակազմված Կիլիկիո կաթողիկոսության թեմերն են լինում Հայեպը, Բեյրութը, Դամասկոսը և Կիպրոսը:

1928 թվականի օգոստոսի 12-ին Տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը, հանուն Գևորգ Ե կաթողիկոսի և Գերագույն հոգևվոր խորհրդի գրում էր հետևյալ պաշտոնական նամակը Տ. Սահակ կաթողիկոս Խապայանին՝ կիլիկյան նորակազմ թեմերի մասին.

**Ծնորհագրող Տ. Սահակ Բ, Կաթողիկոսի տանն Կիլիկիո**

Անցյալ՝ 1928 թվի հոկտեմբեր 22 թվակիր թ. 825 և տարվույս ապրիլ 80 թվակիր թ. 110 գրություններով ցանկացել էիք Ձեր «Կտակ» անվանյալ գրվածքի մասին իմանալ Նորին Ս. Օծույթյան «տեսությունն ու խորհուրդը» և Գերագույն հոգևոր խորհրդի կարծիքը:

Գերագույն հոգևոր խորհուրդը «Կտակ»-ը համարում է երկու Աթոռների նկատմամբ Ձեր հոգեկան ապրումների դրսևորյալ պատկերացումը և Ձեր իղձը՝ երկու Աթոռները բարյոք վիճակի մեջ տեսնելու և հայ ժողովուրդը իրենց հովանու տակ ապահով և անխաթար պահպանելու ամեն տիպի հավիշտակող ու հոշոտիչ զառնագեեստ զայլերից:

Առանձնապես Ձեր հոգևորի ու հոգեկան տանջանքների աղբյուրն է հանդիսանում Կիլիկիո կաթողիկոսության ապագան՝ նրա լինել-չլինելու խնդիրը:

Ընդհանրական կաթողիկոսի Աթոռը ս. Էջմիածին փոխադրելուց հետո Կիլիկիո Տան կաթողիկոսությունը դարերի ընթացքում հովանավոր և պաշտպան է հանդիսացել յուր շրջանակի մեջ մնացած հայության համար, այսօր ևս, երբ պատահած դժբախտ բերմունքների հետևանքով յուր հոտի մեծամասնության հետ փոխադրված է այլ տեղ, մնում է նա դարձյալ որպես հավաքող, պահպանող և մխիթարող հոգևոր կեդրոն Կիլիկիո լքված հայության համար: Ուստի և Նորին Սրբության՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ի սրտե բարեմաղթությունն է և ցան-

կույրուներ Աթոռիդ հայատնությունը և օժանդակ գործակցությունը Ընդհանրական Հայրապետից և այսուհետև, այս մտքով էր, Ջերդ Շնորհագարդության անցյալ մայիս 22 թվակիր թ. 1780/222 գրության ակնարկի հետևանքով հաճել էր անցյալ դեկտեմբեր 25 թվակիր թ. 646 գրությամբ դիմել Երուսաղեմի ամենապատիվ պատրիարքին՝ առաջարկելով իրաճանհի և Այուրիո մեջ եղևու թեմ կազմելու նպատակով Պեյրութի մատուրը և Դամասկոսի եկեղեցին առժամապես Ջեզ հանձնելու և ֆրանսական հովանավորության ներքո գտնվող Դամասկոսի, Պեյրութի և Լավոդիկեի հոգևոր տեսչությունները իրենց եկեղեցիներով Ջեր իրավասության ենթարկելու հարցերը խոհական քննության ենթարկելու և հետևանքի մասին գեկուցանել իրեն, ակնարկելով նաև, որ վերոհիշյալ խնդիրների դրական լուծումը կլիներ իր կամքի արտահայտությունը:

Գերագույն հոգևոր խորհուրդը պատիվ ունի հայտնելու, որ Նորին Վեհափառությունը ուրախ է, որ իր առաջարկը դրական լուծում է ստացել և Այուրիո սաղիմական իրավունքները փոխանցվել են Կիլիկիո կաթողիկոսության, ինչպես հաղորդել էի տարվույս ապրիլ 30 թվակիր թ. 110 գրությամբ՝ հանուն Նորին Վեհափառության:

Գերագույն հոգևոր խորհուրդն ի սրտե ուրախ է, որ Կիլիկիո Աթոռի հոգևոր և նորթական պետքերը հոգալու համար Փարիզում կազմակերպվել է հանգանակիչ հանձնաժողով՝ վսեմախալ Պողոս Նուբար փառաբանի գլխավորությամբ, ինչպես հաղորդում է տեղի հոգևոր հովիվ գերապատիվ տ. Վոսաճապուր եպիսկոպոսը, և հույս ունի, որ հաջող հանգանակությունը հնարավորություն կուտա Աթոռիդ տնտեսականը ապահովելու, որ կլինի հիմք նաև ամրացման ու գործացման նորա այլ ասպարեզների գործառնության համար:

Գերագույն հոգևոր խորհուրդը հանությանը նշելով Ջեր տաճած անձնվիրությունն ու հավատարմությունը առ ս. եկեղեցին մեր և բարյացակամ, սրտալի և ակնածությունների վերաբերմունքը դեպի լազիս Վեհափառ Հայրապետն ու Հայրապետությունը և փոխադարձաբար հաղորդելով Ամենայն Հայոց Հայրապետի սերը, համակրանքն ու վստահությունը առ Ջեզ կատարելապես հավաստի

է, որ նույն ուղին բարոյապես պարտադիր կ'պացուցանեք նաև Ջեր հաջորդներին:

Արձարձված հարցի մասին Նորին Վեհափառության և Գերագույն հոգևոր խորհրդի հպացքը լիովին պարզելու նպատակով ներփակվում է նաև բոլոր թեմակալ առաջնորդներին ուղղված զգուշացուցիչ շրջաբերականը՝ ի գիտություն Ջերդ Շնորհագարդության:

Մաղթելով Ջեզ արևշատություն, քաջանողջություն և քրիստոսավանդ համբերություն ինչպես ցայսօր արիության տանելու Ջեզ բաժին ընկած հանր խաչը՝ հօգուտ Կիլիկիո վտարանդի և տառապյալ Ջեր հոտին, որդիական ակնածանքով և եղբայրական սիրտ ողջունելով՝

ՆՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Գերագույն հոգևոր խորհրդի անդամ

12-ր օգոստոսի 1928 թ.

Մայր Աթոռ

Աթոռի թեմական վերակազմությունից հետո, Սահակ կաթողիկոսը մտածում է «Կիլիկիո կաթողիկոսության արեւատան նավը խաղաղության և ապահովության նավահանգիստը հասցնելու համար» («Լիտան»): 1928 թվականին արտոակից կաթողիկոս է նշանակում հայ եկեղեցականության ամենակարող և բազմահմուտ եպիսկոպոսներից մեկին՝ արմաշական և այնթապցի հարգեն եպս. Կյուլեսերյանին, որը նույն օրերին Երուսաղեմում, Դուրյան պատրիարքի հետ սերտ և սեռն համագործակցությամբ աշխատում էր ս. Երուսաղեմի Աթոռի հոգևոր, կրթական կազմակերպության համար:

1931 թվականի ապրիլին Հայեպոս գումարված կիլիկյան թեմերի 35 հոգուց բաղկացած պատգամավորական ժողովը, օրհնականացնելով Սահակ կաթողիկոսի զանկությունը, հարգեն եպիսկոպոսին ընտրում է առողակից կաթողիկոս:

Օձումը կատարվում է Հայեպի առաջնորդանիստ ս. Քառասնից մանկանց եկեղեցում, մեծ հանդիսավորությամբ, 1931 թվականի ապրիլի 26-ին:

Այնուհետև «երկու կաթողիկոսները փառավոր հուղարկով ճանապարհ ելան Հայեպեն և փոստախորագույն ընդունելությամբ մտան Բեյրութ և անտի եկան Անթիլիաս» (հարգեն արտոակից կաթողիկոս, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, էջ 1021):

**Երուսաղեմի Աթոռը Գևորգ Ե-ի օրով**

1910 թվականին վախճանվում էր Երուսաղեմի Հարություն պատրիարք Վեհապետյանը:

Մինչև 1921 թվականը, նոր պատրիարքի ընտրությունը, Երուսաղեմի Աթոռը դեկա-

վարվեց տեղապահով:

Երուսաղեմի Աթոռը ևս, բացի ներքին պառակտումներից, ծանր և դժնդակ օրեր ապրեց, 1915—1921 թվականներին:

1916 թվականի հուլիսի 29/11 օգոստոսին

սուլթանական հրամանով Կ. Պոլսո Ջավեն պատրիարքը պաշտոնանկ է արվում և արտրվում, ջնջվում էր ազգային սահմանադրությունը և ամեն կապ ու հարաբերություն արգելվում էր Մայր Աթոռի հետ: Կառավարությունը հրատարակում էր 38 հոդվածներից բաղկացած «Կանոնագիր հայոց կաթողիկոսության և պատրիարքության» կանոնադրությունը, որով Երուսաղեմի, Կ. Պոլսի, Սսի և Աղթամարի Աթոռները միացվում էին և կազմվում էր մեկ կաթողիկոսություն-պատրիարքություն, և Կիլիկիո Սահակ Խապայան կաթողիկոսը նշանակվում էր կաթողիկոս-պատրիարք՝ թովանդակ հայոց Թուրքիո:

Խապայանը ակամա ընդունում էր կառավարության կողմից իրեն պարտադրված նորաձև պաշտոնը և մինչև 1917 թվականի նոյեմբերը նստում էր Երուսաղեմում: (Ջավեն արքեպիսկոպոս, Պատրիարքական հուշերս, էջ 182, Բարգեն աթոռակից կաթողիկոս, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, էջ 948):

Բայց Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիան պարտվում էր, և 1917 թվականին թուրքական բանակը նահանջում էր Պաղեստինից, և նոյեմբերին կնքվում էր զինադադար: Պաղեստինը ընկնում էր անգլիական հովանավորության տակ:

Երուսաղեմի հայոց ս. Աթոռը քայքայվել էր տնտեսապես, միաբանները բանակ կանչված և ցրված, ժառանգավորաց վարժարանը՝ փակված:

Մանր և հուսահատ օրեր էին Երուսաղեմի վանքի համար:

Պատերազմից հետո հրատապ հարցը՝ Երուսաղեմի պատրիարքական Աթոռը վերականգնելու խնդիրն էր: Օրակարգի վրա էր դրված պատրիարքական ընտրության հարցը: Ազգային սահմանադրության 17—28 հոդվածները խոսում էին Երուսաղեմի հայոց պատրիարքի ընտրության, իրավասությանը և պարտականությունների մասին:

«Երուսաղեմի պատրիարքը ս. Հակոբա Աթոռուց ցկյանս գահակայց է, միանգամայն հայոց ազգին սեփական Երուսաղեմ գտնված ուխտատեղիներուն ու ս. Հակոբա վանուց միաբանության նախագահն է:

Իր պարտավորությունն է ս. Երուսաղեմի վանուց կանոնագրին տրամադրությանը համեմատ վարվել և անոր քարվոք գործադրության հսկել» (Հոդված 17):

Ազգային սահմանադրության 21-րդ հոդվածը խոսում է պատրիարքական ընտրության մասին.

«Ս. Երուսաղեմի պատրիարքը Կ. Պոլսի ազգային ժողովներուն կողմն կընտրվի»,

միաբանության կողմից ներկայացված յոթնամուն «ընտրելուց ցանկի» վրայից:

Այս ձևով էր ընտրվել նաև Հարություն պատրիարք Վեհապետյանը: Բայց այժմ կացությունը հիմնովին փոխվել էր: Ջնջվել էր ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Կ. Պոլսո պատրիարքական Աթոռը կորցրել էր իր ազգային-եկեղեցական դեկավար դերը: Այնուամենայնիվ, դեռևս Կ. Պոլսում գոյություն ուներ ազգային երեսփոխանական ժողովը՝ որպես ազգի և եկեղեցու վերին գործադիր իշխանություն: Որովեց քացառաբար և վերջին անգամ լինելով Երուսաղեմի պատրիարքի ընտրությունը կատարել ըստ սահմանադրության: Անգլիո կառավարությունը ևս համաձայնվեց՝ պայման դնելով սակայն, որ Երուսաղեմի հայոց պատրիարքի ընտրությունը վավերացվի Անգլիո թագավոր-կայսեր կողմից:

1921 թվականի սեպտեմբերին Կ. Պոլսում գումարվեց ազգային երեսփոխանական ժողով, որը և Երուսաղեմի պատրիարք ընտրեց Եղիշե արքեպ. Դուրյանին: Նորընտիր պատրիարքի ընտրությունը պաշտոնապես հաղորդվեց Անգլիո կառավարության: Ժորժ Ե թագավոր-կայսրը վավերացրեց այդ ընտրությունը, և Դուրյան պատրիարքական Աթոռ բարձրացավ 1921 թվականի նոյեմբերին:

Դուրյանի գահակալությունը նոր վառքով ծածկեց Երուսաղեմի հայոց պատրիարքական Աթոռը: Երուսաղեմը նա վերածեց մի նոր Արմաշի, որ կյանքի կոչվեցի Արմաշի օրմանյանական և դուրյանական հոգևոր-կրթական ավանդները:

Դուրյան պատրիարքի առաջին գործը եղավ՝ ոտքի կանգնեցնել, վերականգնել ժառանգավորաց վարժարանն ու Ընծայարանը: 1825 թվականին Պատրիկ Գյուլբենկյանի քարերարությամբ հաստատվեց առաջին ընծայարանը, իսկ Մեյքոնյան եղբայրների ցմիրատվությամբ ապահովվեց ժառանգավորաց վարժարանի ուսումնական գործը:

Վանքը ուղք դրեց հոգևոր և մտավոր վերազարթոնքի շրջանը: 1926 թվականի հոկտեմբերի 8-ին Դուրյանը իր ձեռքով կուսակրոն սարկավագ ձեռնադրեց Գյուլբենկյան վարժարանի 8 սարկավագների, իսկ 1928 թվականի հունիսին կուսակրոն քահանա ձեռնադրեց սաղիմական իր առաջին երկու աշակերտներին՝ Նորայր և Տիրան արեղաներին, որոնք ուղարկվեցին Լոնդոն՝ իրենց ուսումը շարունակելու համար:

Երուսաղեմում Դուրյան պատրիարքի թանկագին աջակիցն ու գործակիցը հանդիսացավ մեծ արմաշական Բարգեն եպս. Կյուլենբյանը, որպես դասախոս ժառանգավոր-

րաց վարժարանի և Ընթացարանի և խմբագրապետ «Սիոն» ամսագրի:

1927 թվականի հունվարի 1-ից Դուրյան պատրիարքի օրոք սկսեց վեռահրատառակվել Դրուսաղեմի պատրիարքության պաշտոնաթերթը «Սիոն» ամսագիրը՝ հարգեն եպիսկոպոսի խմբագրությամբ: «Սիոն»-ը առաջին անգամ հրատարակվել է 1888 թվականի հունվարից մինչև 1878 թվականի վերջը:

Դուրյան պատրիարքը նշելով «Սիոն» ամսագրի նոր ուղին ու նշատակները, խմբագրապետ հարգեն եպիսկոպոսին գրած իր ողջույնի խոսքի մեջ ասում էր.

«Ձեր խղճամիտ ուսումնասիրողի երկերը Ձեր հրապարակագրական կիրթ փորձառությունը Լոյսով և Տալիրսով և Ձեր հայտնի նախանձավորությունը Հայք եկեղեցվո հարազատ վարդապետությանց և ավանդություններու հանդեպ ինքնին կարդարացնեն այդ անվերապահ վստահությունը»:

«Սիոն»-ը հրապարակ էր իջնում հիմնական այն համոզումով, որ «գոնե մասամբ պիտի կրնա գոհացում տալ հոգևոր այն պետքին, գոր կզգա մեր բարեպաշտ ժողովուրդը, ո՛րը և ի՛նչ պայմաններու մեջ ալ որ ապրի»:

«Սիոն»-ը իր էջերը լայնորեն պիտի բանառան կրոնա-քարոշական նույնից բացի, «տոհմային հին մատենագրության, հայ եկեղեցագիտական և բանասիրական հարցերու վերաբերյալ» նույնից:

«Սիոն»-ին աշխատակցեցին Դուրյան, Թորոս, Աղավնունի, Գարեգին տրապիզոնցի, Սյուրմեյան սրբազաններ, Գ. Ֆնդըզյան, Մ. Հ. Թիրյաքյան, Ն. Աղբարյան, Ա. Երնյաթ, Մ. Դանատյան, Մ. Նուրբարյան, Գ. Մխայրյան և նորընծա վարդապետներ:

հարգեն եպիսկոպոսը ձեռնհասորեն վարեց խմբագրությունը, ստորագրեց արժեքավոր ուսումնասիրություններ հայ եկեղեցու պատմության, բարեկարգության, եկեղեցու և պետության փոխհարաբերությունների մասին և կրոնական բովանդակայից այլ ուսումնասիրություններ:

Դուրյանի պատրիարքության օրոք Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Երուսաղեմի Աթոռի հարաբերությունները եղել են ավելի քան սիրալիր ու բարեկամական:

Դուրյան պատրիարքը միշտ որդիական հարգանք, սեր և պաշտամունք է ունեցել դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

1911 թվականի կաթողիկոսական ընտրության ժամանակ Էջմիածնի Մայր տաճարում գումարոված ազգային-եկեղեցական ժողովը երկու թեկնածուներ էր ընտրել կաթողիկոսության համար՝ Սուրենյանց՝ 54 քվեով, Դուրյան՝ 53 քվեով: Բայր հաստատեց Սուրենյանցի թեկնածությունը: Գևորգ Ե կաթո-

ղիկոսը շատ բարձր համարում ունեցել է միշտ դեպի Դուրյանի անձը՝ նրան նշանակելով Եվրոպա ուղևորվող ազգային պատվիրակության անդամ և դեկավար հանուն Մայր Աթոռի:

1921 թվականի նոյեմբերի 24-ին 493 համար կոնդակով Գևորգ Ե-ը մեծ ուրախությամբ ողջունում էր Եղիշե պատրիարք Դուրյանին՝ շնորհավորելով նրա ընտրությունը, «ի մխիթարություն մեզ և համայն լրույթեան ազգիս հայրք»:

Այնուհետև Գևորգ Ե-ը միշտ թղյուսկցության մեջ էր Դուրյան պատրիարքի հետ՝ սփյուռքահայ կյանքի, կիլիկյան Աթոռի և թեմերի կազմակերպության և ընդհանրապես՝ հայ եկեղեցու բարեկարգության և այլ եկեղեցական հարցերի շուրջ՝ միշտ դիմելով Եղիշե պատրիարքի և՛ խորհուրդներին, և՛ կարծիքներին:

Երուսաղեմում, երբ 1929 թվականի հոկտեմբերի համազգային համոտությանը նըշվում էր Դուրյան պատրիարքի ծննդյան 70 և քահանայության 50-ամյակը, Գևորգ Ե կաթողիկոսը ևս 1929 թվականի հոկտեմբեր 27 ու 968 ձամար կոնդակով իր հայրապետական բարձր համակրանքը և շնորհավորանքն էր միացնում համազգային ուրախության, շատ բարձր գնահատելով Դուրյան պատրիարքի «երկարածիզ ամբ անխոնջ աշխատությանը քո յուսուցչական առաքարիզի, ի վարդապետական քարոզչության, ի վարչական դեկավարության հոգևոր գործոց»:

Հայոց Հայրապետը բարձր գնահատելով Դուրյանի նաև «խոհուն, իմաստուն և հուսմատ ընթացքը քո ի մեծատրական կեանս... ոչ նուազ շնորհալի ձիրք քո ի գրական ապարիզի», — ներակցանում էր մեծ գոհունակությանը: «Արժան իսկ է յիշատակել աստուծո նաև գհատարմութիւն քո առ Մայր Աթոռն ս. Էջմիածնի, որոյ ուխտեալ միաբան ես և Քոյով նաանդեամբ հանապազ սատար լեալ բարձրացուցանել զգատիս Մօրս լուսոյ և օգնական ի նեղութեան ժամանակիս»:

Դուրյան պատրիարքը 1929 թվականի դեկտեմբերի 27 թվակիր գրությամբ պատասխանում էր Գևորգ Ե-ի կոնդակին, գրություն, «որը գոհար մըն է գրական, օծուն Սահակ-Մեսրոպյան բարբառին գեղով ու վաշէլչությամբ» (Սիոն, 1930 փետրվար, էջ 34) և համեստության գրված-գործոց:

Նամակը ստորագրված է որպես «խնամարի որդի Հովուապետիդ և մատուցեալ ի հաւթոյր ս. Աջոյդ»:

Դուրյան պատրիարքը վախճանվում էր 8 տարի 5 ամիս գահակալելուց և ս. Հակոբյանց առաքելական Աթոռը արժանավորապես փառավորելուց հետո, 1930 թվականի ապրիլի 27-ին՝ կիրակի:

Դուրյանի մահից 11 օր հետո՝ 1890 թվականի մայիսի 8-ին, հինգշաբթի օրը, վախճանվում է նաև Գևորգ Ե-ը:

Սուգ՝ սգի վրա: Երկու նվիրապետական Աթոռներ մնում էին թափուր:

«Սեծ են հայ եկեղեցվո երկու կորուստներն ալ: Երկուքին թողած բացը խոշոր է, խորունկ:

Ինչ պիտի ըլլա Երուսաղեմ:

**Կ. Պոլսի հայոց պատրիարքական Աթոռը Գևորգ Ե-ի օրոք**

Գևորգ Ե-ի օրոք Կ. Պոլսի հայոց պատրիարքական Աթոռի վրա էին Ջավեն և Մեսրոպ պատրիարքները:

Ջավեն Եղիայանը՝ Օրմանյանի և Դուրյանի աշակերտը, առաջին արմաշականն էր, որ բարձրացավ Կ. Պոլսի հայոց պատրիարքական Աթոռի վրա 1819 թվականի օգոստոսի 31-ին, երբ Դիարբեքիի առաջնորդ էր: Ջավենի պատրիարքությունը գոյադիպեց Իթիֆհատի խելահեղ կառավարության շրջանին և հայ կուսակցությունների անհավակնչի գործունեության, «որոնք խանգարեցին պատրիարքարանի գործունեությանը» («Հասկ», 1833, էջ 38):

1813—1814 թվականներին արևմտահայությունը շարունակում էր ապրել իր եկեղեցական, մշակութային, ազգային վերագործոնքը քաղցր հույսերով և երազներով:

Վրա հասան 1815 թվականի Ապրիլյան եղեռնը և տարագրությունը:

Ջավեն պատրիարքը ևս բաժանեց հավասար չափով իր ժողովրդի և եկեղեցու ողբերգությունը:

1816 թվականի հունիսի 28/11 հուլիսին պաշտոնանկ հռչակվեց Կ. Պոլսի հայոց պատրիարքը և աքսորվեց Բաղդադ, ապա Մուսուլ:

Կառավարական հեռագիրը՝ ուղղված Ջավեն պատրիարքին, ասում էր.

«Ամենապատիվ Տեր,

Կրոնից նախարարության կողմե վեհափառ Սուլթանին ներկայացված և սուլթանական բարձր հրամանով վավերացված և այսօր Թաքվիմ Վաքայի մեջ հրապարակված Հայոց Կաթողիկոսության և Պատրիարքության կանոնադրության համաձայն Սիսի և Աղթամարի կաթողիկոսությունները և Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի Պատրիարքությունները ևս այս Կաթողիկոսության միացած է: Հետևաբար Ձեր պաշտոնը և հայոց Պատրիարքարանի վերաբերյալ բոլոր գույքերը և պաշտոնաթուղթերը Կաթողիկոս-Պատրիարքին կողմե փոխանորդ նշանակվելիք անձին հանձնվելու և մինչև այն ժամանակ ոստիկանական պաշտպանու-

թյան տակ մնալու համար, Ձեր Ամենապատվության մասնակցությամբ կնիքի տակ առնելու պաշտոն տրված է ոստիկանության ընդհանուր տնօրեն՝ Ահմեդ և կրոնից տեսուչ՝ Պեհա պեյերուն. ըստ այնմ պարտ ու պատշաճը գործադրելու համար այս պաշտոնագիրը տրվեցավ:

11 շեվվալ 934 և 28 հուլիս 932 Արդարության և կրոնից նախարարի փոխանորդ (Ստորագրություն)» (Ջավեն արքեպիսկոպոս, «Պատրիարքական հուշերս», էջ 182):

Ջավեն պատրիարքը այս մասին գրում է. «Այս կերպով կջնջվեին ոչ միայն Ազգային Սահմանադրությունը, այլ նաև Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի Պատրիարքությունները, որոնք կմիանային Կիլիկիո Կաթողիկոսության, որուն Աթոռը Երուսաղեմ պիտի ըլլար: Իրականին մեջ Կաթողիկոս-Պատրիարքությունը մը կկազմվեր Թուրքիո սահմաններում մեջ ապրող հայոց համար: Ինձի կմնար այլևս տունս առանձնանալ և սպասել Սահակ կաթողիկոսի կարգադրության» («Պատրիարքական հուշերս», էջ 181—186):

Ջավեն պատրիարքը աքսորված մնաց Մուսուլ, մինչև 1818-ի վերջերը: Երբ Կ. Պոլիսը գրավվեց դաշնակից պետությունների կողմից, Ջավեն պատրիարքը անգլիացիների պաշտպանությամբ և անգլիական զորահավորի վրա, հանդիսավոր կերպով բերվեց Կ. Պոլիս և հաստատվեց իր Աթոռի վրա:

Պատրիարքը ազգային գործերով 1820 թվականին անցավ Եվրոպա, ներկայացավ Անգլիայի թագավոր-կայսր Ժորժ Ե-ին, Քենտրբերիի արքեպիսկոպոսին, Ֆրանսիայի հանրապետության նախագահին: Սակայն դաշնակիցները շուտով լքեցին Կ. Պոլիսը: 1820 թվականի դեկտեմբերին Ջավեն պատրիարքը Կ. Պոլսից անցավ Բուդապեշտ, երբ Թուրքիայում գոլթա բարձրացրեց ջեմալական «միլլի» կամ «ազգայնական» շարժումը, 1819 թվականի հուլիսի 23-ից, «Լրգորումի կոնգրես»-ից հետո, շարժում, որն ըստ էության հակահունական և հակահայ-

կական շարժում էր: Քեմալականները երբ տեր դարձան իշխանության, «չնչեցին հայ, հույն ազգային սահմանադրությունները, չճանաչեցին պատրիարքարանները և ձևի համար պահեցին պատրիարքները «Բաշ-քաբազ» անվան տակ» («Հասկ», 1939, էջ 89): «Կ. Պոլսի պատրիարքությունը, որ դարերն ի վեր դարձած էր վարչական կենտրոն մեր Թուրքիո հայ եկեղեցվո համար, այժմ ամփոփված է հին մայրաքաղաքի սահմաններուն մեջ, պահելով սիրտերու մեջ իր նախկին կազմակերպության և գործունեության հմայքը միայն» («Սիոն», 1930, էջ 85): «Պատրիարքությունը այժմ սեղմված է իր ամենեն նվազագույն աստիճանին մեջ» («Սիոն», 1931, էջ 217):

Ջավեն պատրիարքի մեկնումից հետո՝ 1922-ի դեկտեմբերին, կրոնական և քաղաքական ժողովները պատրիարքական տեղապահ են ընտրում Գևորգ արքեպ. Ասլանյանը: 1923 թվականի հունվարի 25-ի կոնդակով Գևորգ Ե-ը շնորհավորում է և օրհնում այդ քայլը, թելադրելով, որ մեր ժողովուրդը Կ. Պոլսում «կամի կեալ յանդորրութեան և ի խաղաղութեան, զհետ լինել գործոց բարեաց և յառաջդիմութեան, ըստ մտաւորի, և ըստ քարոյականի և կրոնականի»: Կաթողիկոսը հույս է հայտնում, որ տեղապահը իր պաշտոնը կվարի «համբերաշխ և խաղաղ գործունեութեամբ, խոհականութեամբ և իմաստութեամբ»:

Քաղաքական ժողովը որոշում է պատրիարքական ընտրությունը կազմակերպելու համար դիմել կառավարության, որպեսզի «կառավարության և պատրիարքարանի միջև հարաբերությունները բնականոն հանգամանք մը ստանան»:

Կառավարության հետ տարված հետևողական աշխատանքների շնորհիվ, որոշ բանակցություններից հետո, թույլ է տրվում պատրիարքի ընտրությանը: Ընտրության ձևը հետևյալն էր. «Հայերու թաղային խորհուրդները կընտրեն իրենց մարմինները, մոտ օրեն, և երբ այդ աշխատանքը ամեն տեղ կվերջանա, թուր եկեղեցիներու թաղական խորհուրդները պիտի հավաքվին ընդհանուր ժողովի մը մեջ, զբաղվելու համար հասարակության գործերով: Այդ ընդհանուր ժողովը պիտի զբաղվի նաև նոր պատրիարք ընտրելու խնդրով»:

1927 թվականին պատրիարք է ընտրվում Մեսրոպ արքեպ. Նարոյանը, արմաշական, Դուրյանի աշակերտ, «ոչ փառատենչիկ. կասկածելի շահերն շատ վեր, իր նկարագրով անուշ, և իբրև հոգևորական մարդ՝ անբասիր դեմք մը պետք էր» («Սիոն», 1927, էջ 68):

Նարոյան պատրիարք Կ. Պոլսի Աթոռի վրա խոհականությանը շարունակեց իր գործը մինչև 1944, կամոնական հարաբերություններով կապ պահելով նաև Մայր Աթոռի հետ, կարեղիության սահմանների մեջ:

**Գևորգ Ե-ի մահը**

1930 թվականի մայիսի 8-ին՝ հինգշաբթի օրը, 83 տարեկան հասակում, մահանում է Գևորգ Ե կաթողիկոսը, 18-ամյա զահակալությունից հետո, զահակալություն, որը հարուստ եղավ աշխարհի պատմության համար ընդհանրապես և հայ ժողովրդի, հայոց հայրենիքի և հայ եկեղեցու համար մասնավորաբար պատմական իրադարձություններով, որոնք մեծ և վճռական նշանակություն ունեցան մեր ազգային-եկեղեցական նորագույն տարեգրության համար:

Այդ աշխարհացունց դեպքերի ընթացքում Գևորգ Ե-ը կարողացավ իմաստությամբ, հեռատեսությամբ և խոհականությամբ շարունակել իր ծանր, պատասխանատու պաշտոնը, Գերագույն հոգևոր խորհրդի հետ համագործակցաբար: Արդարև, Գևորգ Ե-ը բազմապիսի դժվարությունների առաջ չըկորցրեց իր հավատքը, չլքեց իր Աթոռը:

Ի պատիվ Հայոց Հարապետի այստեղ պետք է արձանագրել հետևյալ տեր 1920 թվականին թշնամի մոտեցել էր Էջմիածնին, 7 կմ հեռավորության վրա, և թնդանողների

որոտներից փշրվում էին Մայր տաճարի լուսամուտների ապակիներն ու կանթեղները, և վանքի գանձերն ու ձեռագրերը սրնդուկներով ապահովության համար ժամանակավորապես տարվել էին Մուսկվա, կաթողիկոսին առաջարկում էին թողնել Էջմիածինը և ապաստան գտնել Սևանի կղզում: Այդ ծանր օրերին նա չկորցրեց իրեն և ասաց.

«Ինք կարող եք գնալ, ուր որ կամենաք, բայց Հայոց Հայրապետը պետք է մնա իր Աթոռի վրա, և եթե հարկ լինի՝ մեռնի իր Աթոռի առաջ»:

Գևորգ Ե-ի թաղումը կատարվում է ավանդական հանդիսությամբ և շուքով:

Հանգուցյալ կաթողիկոսի մարմինը գրմըսվում է: Թաղումը տեղի է ունենում 1930 թվականի մայիսի 18-ին՝ մահվանից 10 օր հետո: Մայր Աթոռ են ժամանում բազմաթիվ պատգամավորներ և հավատացյալների հոծ բազմություն: Հայրապետական դազադը վեհարանից մինչև Մայր տաճար տարվում է «բուզմության շատության պատճառով ե-

րեք ժամում հազիվ հնարավոր եղավ հանգիստ հետը դնելով, տաճարի շուրջ պտտեցնելով... Ես նման բազմությունն և Էջմիածնում հիշում եմ միայն Խրիմյան Հայրիկի օժման օրը և վերջին մեռնօրհներթի (1928 թվին) ժամանակ»,—վկայում է ականատես Մատթեոս արքեպիսկոպոսը (տե՛ս «Սիոն», 1990, էջ 256):

Ըստ կանոնի, պատարագում և հանգուցյալ Հայրապետի վերջին օժումը կատարում է տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսը, խոսելով նաև դամբանական:

Գևորգ Ե-ը թաղվում է Մայր տաճարի զանգակատան ներքո, հարավային կողմում:

Թաղումից հետո տրվում է հոգեճաշ, ուր հանգուցյալ Հայրապետի կյանքի և գործունեության մասին խոսում են տ. Խորեն, տ. Բագրատ, տ. Մատթեոս, տ. Գարեգին արքեպիսկոպոսները և Ստեփանոս Մալխասյանը:

Թաղումից հետո Գերագույն հոգևոր խորհուրդը լիակատար ճիստ է գումարում, ուր որոշում են ընդունում ազգային-եկեղեցա-

կան ժողով հրավիրելու մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդը հուլիսի 18-ին և համար 869 շրջաբերականով, նվիրապետական Աթոռներից և թուր թեմերին հաղորդում է ժողովի գումարման մասին՝ նշելով նաև ազգային-եկեղեցական ժողովի օրակարգը, ըստ հետևյալի.

1. ընտրություն Ամենայն Հայոց Հայրապետի,

2. ընտրություն Ամենայն Հայոց Հայրապետի տեղակալի,

3. ընտրություն Գերագույն հոգևոր խորհրդի նոր կազմի,

4. ազգային-եկեղեցական սահմանադրության քննություն և հաստատում,

5. զեկուցում եկեղեցական բարեփոխությանց մասին,

6. ս. Էջմիածնի և նրա հոգևոր, կրթական, մշակութային հարակից հաստատությունների նախահաշվի վավերացում,

7. ընթացիկ հարցեր:

(Շարունակելի)





2. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ԼԵՏ\*

VI.—Հաղթական դարձը

Կոմիտաս 1914 հուլիս 3/21-ին Պոլիս կը-  
դանար իսկապես ալ փառք քաղելն հետո  
հայ ժողովուրդին: Իր հաղթանակի լուրերը  
հասնել էին արդեն Պոլիս, և հետևաբար  
խուռն բազմություն մը ջերմությամբ դիմա-  
վորեց զայն Սիրքեհի կայարանին մեջ:

Իր վերադարձին առթիվ կգրեինք Ազատա-  
մարտի մեջ.

«Մոտ երկուքուկես ամսվան բացակայու-  
թենն մը ետք Եվրոպայն Պոլիս վերադար-  
ձավ երեկ Կոմիտաս վրդ.: Տաղանդավոր ե-  
րաժշտագետը միջազգային համաժողովին  
մեջ իր այնքան կարևոր դերը ունենայն և Փա-  
րիզի երաժշտական աշխարհին մեջ հայ հոգե-  
վոր ու ժողովրդական երաժշտության հանդեպ  
մեծ հետաքրքրություն արթնացնելն ետք,  
անցած էր Վիեննա: Չոն մտերմական հավա-  
րույթի մը առթիվ ծանոթացուցած է հայ ե-  
րաժշտությունը՝ իր այնքան զեղեցիկ նմուշ-  
ներով, և այդ առթիվ տեղվույն հայ գաղու-  
թին մեջ հայ դպրոց մը ունենալու գաղափա-  
րը արթնցուցած է: Վարդապետը Վիեննայի  
մեջ այցելած է նաև աշխարհահռչակ երա-  
ժշտագետ պրոֆ. Ադլերի, որ Փարիզի համա-  
ժողովին մեջ հայ երաժշտագետը ծափահա-  
րողներն մեկը եղած էր: Կոմիտաս վարդա-  
պետ հանդիպած է նաև Ֆրիլիպե, ուր տեղ-  
վույն գրասիրաց ընկերության օգտին դասա-  
խոսած է՝ նյութ ունենալով հայ հոգևոր և  
գեղջրուկ երաժշտությունը: Բացի իրեն ի պա-  
տիվ արված հացկերույթներն, Ֆրիլիպեի մեջ

ստացած է ընծաներ տեղվույն զանազան  
կազմակերպությանց կողմն:

Կոմիտաս վրդ. Սիրքեհի կայարանին մեջ  
ընդունվեցավ համակիրներու բազմության  
մը և իր երգչախումբի անդամներուն կողմն:

Մեր խմբագիրը երեկ իսկ հարզելի երա-  
ժշտագետին հետ տեսակցություն մը ունե-  
ցավ, զոր, իր շահեկանությանը պատճառով  
պիտի հրատարակենք մեր վաղվան թիվով»<sup>27</sup>:

Այս տողերը գրողին վիճակվեցավ այդ  
բախտը: Ան կայարանեն շուրջ ուղղակի  
Կոմիտասի բնակարանը առավ, ու իր հար-  
ցումներուն տարափք սկսավ առանց թույլ  
տալու որ պահ մը հանդիպեց վարդապետը:

«Շահեկան պիտի ըլլար Կոմիտաս վարդ. ի  
բերնեն իսկ լսել իր տեսությունց թողած  
տպավորությունը,—կրտսինք մեր տեսակցու-  
թյունը պատմելու առեն Ազատամարտի մեջ,  
հետևաբար, հազիվ Պոլիս հասած, գտանք  
զինքը և իրմե խնդրեցինք լուսարանություն-  
ներ իր կատարած գործին մասին: Իր սովոր-  
ական ժպիտովն ու աշխուժովը, Կոմիտաս  
վարդապետ, հակառակ իր ճամբու հոգնու-  
թյանց, հաճույքով պատասխանեց մեր հար-  
ցումներուն»<sup>28</sup>, շուրջ, սերբը, բուլղարը կամ  
թուրքը, լուսնին իրենց սեփական երաժշ-  
տությունը, հայ երաժշտության համար սա-  
կայն այսքան պատվարեք տեղ մը կտրվեք, և  
մինչ ուրիշ աղգերու ներկայացուցիչ երաժշ-  
տագետներուն ճառերը շատ անգամ բուռն  
դիտողություններով և քննադատություննե-  
րով կընդունվեին,—ինչպես պատահեցավ

<sup>27</sup> «Ազատամարտ», 1914 հուլիս 9/22, թիվ 1558.

<sup>28</sup> Հայ երաժշտության հաղթանակը. տեսակցություն  
մը Կոմիտաս վարդապետի հետ. «Ազատամարտ»,  
1914 հուլիս 9/22, թիվ 1537.

\* Շարունակված «էլմիածին» ամսագրի 1965 թվա-  
կանի ՆՄ Ա-ից, Ե-Ժ-ից, 1966 թվականի ՆՄ Ա-  
Զ-ից, Ը-Ժ-ից և 1967 թվականի ՆՄ Գ-Զ-ից:

կաթուղիկ կրոնավորի մը՝ որ Գրիգորյան երաժշտութիւնի շեշտավորութիւնի մասին կը խոսեր, — ընդհակառակը հայ երաժշտութիւնի մասին ըսված խոսքերը կատարյալ համակրութեամբ լսվեցան, ու հայտնի երաժշտագետ Վազնեան, որ նույն վարդապետին ամենեն քուտն ընդմիջողներն մեկը եղած էր, համակրութեամբ և շնորհավորութեամբ խոսքեր միայն ունեցավ ըսելիք մեր երաժշտութիւնի մասին: Հետաքրքրական էր նաև տեսնել երբ միջազգային վարպետներ, համաժողովին ավարտելէն ետք, աղբյուրներ կփնտրեին հայ երաժշտութիւնի ավելի ևս ծանոթանալու համար, և երբ անոնցմէ շատեր սկսան կիրակի օրեր հայոց եկեղեցիէ հաճախել՝ հայ եկեղեցական երաժշտութիւնը վայելելու համար: Ավելացնեմ որ Միջազգային երաժշտական ընկերութեան հասցիկէ համաժողովը՝ որ երեք տարի ետք, 1917-ին Քեմքի մէջ պիտի գումարվի՝ կրկին տեղ պիտի տա հայ երաժշտութեան, և ես հրավիրված եմ խոսելու «Հայոց երգեցողութեան ձևին» մասին:

— Ինչ տպավորութիւն թողուցին, հարցուցինք նախ, ձեր հայտնած տեսութիւնները հայ եկեղեցական և ժողովրդական երաժշտութեան մասին:

— Նախ որ իմ հայտնած տեսութիւններս հայ հոգևոր և գեղջուկ երաժշտութեան մասին՝ պատասխանեց Կոմիտաս՝ նորութիւն էին մանավանդ անոնց համար որոնք դեռ տարի մը առաջ կանգիտանալին կամ կմերժեին հայ ինքնուրույն երաժշտութեան մը գոյութիւնը: Հետո, շատեր որ հայ երաժշտութեան մասին հարեանցի գաղափար մը միայն ունեին՝ դասախոսութիւններն էտք առաջինը եղան խոստովանող որ հայ երաժշտութիւնը գեղարվեստական քարձք արժեք մը կներկայացնեն, ավելի հարազատ քան ուրիշ շատ մը ժողովուրդներու մեջ, և ավելի վսեմ՝ քան արեւելյան ուրիշ ազգերու մօտ: Ու երաժշտական մեծ վարպետներ՝ երբ դասախոսութիւններս կավարտեի, չէին կրնար իրենց զարմանքն ու ապշութիւնը զսպել իրենց համար օտար այս երաժշտութեան ծանոթանալով, որ ոչ միայն նորութիւն էր իրենց համար, այլ նաև ապշեցուցիչ նորութիւն մը: Ինձ համար ալ շահեկան էր թե ի՞նչ պիտի ըլլար անոնց տպավորութիւնը երաժշտութեան մը մասին, զոր ցարդ՝ իր հոսի նմուշներն դատելով՝ կնկատեին իբրև մեղկ, տխուր, մելամաղձոտ երաժշտութիւն մը, մինչ հայ երաժշտութիւնը ո՛չ միայն մեղկ ու տխուր էր, այլ համակ ուժ է և կենդանութիւն, ու իր մէջ կանուցանե փիլիսոփայութիւնն իսկ, ոգին իսկ իր ցեղին, — որովհետև երաժշտութիւնը ամենեն մաքուր հայելին է ցեղին, ամենեն հարաւատն ու կենդանին անոր րօլը արտահայ-

տութեան մեջ, կենդանի՝ որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ՝ որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը: Ուրախ եմ որ քուտն այդ հայտնի վարպետները կրցան թափանցել, որքան հնար էր, հայ երաժշտութեան խորութեան, և քարձքաձայն հայտարարել անոր ուժն ու քնքրութիւնը չվարանելով նույնիսկ «աստվածային» կոչել զայն: Ու հայ երաժշտութեան արծարծած հետաքրքրութիւնը այնքան ընդհանուր էր համաժողովին մէջ որ նոր դասախոսութիւններն ալ խնդրեցին հայ երաժշտութեան մասին, ու ես ստիպված «դա համաժողովին մէջ կարգալու երրորդ դասախոսութիւն մըն ալ՝ «Հայ երաժշտութեան տաղաչափութեան և շեշտավորութեան» մասին գոհացում տալու համար այդ հետաքրքրութեան:

— Ի՞նչ տպավորութիւն թողուցին, կը հարցնեմ, հայ խաղերու մասին ձեր երևան հանած նորութիւնները: Այն խաղերուն, կավելացնեմ, որոնք այնքան «խորհրդավոր» և «անտախտ» հուշակվեցան պոլսահայ տիրացուներու կողմէ:

— Հայկական խաղերու քանայինները, զորս երևան հանած էի տարիներու պրպտումներնս ետք, մեծ նորութիւն մը եղան համաժողովին անդամներուն համար, որովհետև, հայկական խաղերով կարելի պիտի ըլլա ոչ միայն հայկական հին երաժշտութիւնը ուսումնասիրել, այլ նաև ուսումնասիրել ուրիշ ազգերու հին երաժշտութիւնները, ինչպես հունականը, որոնց մասին զժախտաբար որեւէ ուսումնասիրութեան աղբյուր գոյութիւն չունի այժմ, մինչ հայ ձեռագիրներ ավելի ավանդապահ գտնված են գուրգուրանքով պահու համար հայկական հին երաժշտութեան աղբյուրները, որոնցմէ թերևս երաժշտագետներ օգտվեն ժամանակակից ուրիշ երաժշտութիւններ պրպտելու համար: Թեև ուրիշ ազգերու հին երաժշտութեան նմուշներ հասած են մեզի, բայց ամենեն ավելի հայ խաղերն են որ կներկայանան ամբողջական և ամփոփ, և ավելի լրիվ նյութ կներկայացնեն ուսումնասիրութեանց համար: Ասկէ զատ հայկական հին ձեռագիրներու մէջ կհանգիպինք հույն կամ ուրիշ հին երաժշտութեան վերաբերյալ թարգմանութիւններու, որոնց հունական կամ օտար քննադիրը կորսված ըլլալով, հայերեն թարգմանութիւններն են որ պիտի կարենան լույս սփռել ուսումնասիրութեանց պահուն: Այս տեսակետով ալ, հայ խաղերու ուսումնասիրութիւնը իր մասնավոր կարեւորութիւնը կստանա: Այս մասին զբառ ուսումնասիրութիւնն պիտի հրատարակվի արդեն համաժողովին դիվանին կողմէ, հետեւաբար լեւ ուղեր ավելի երկար ծանրանալ այս մասին:

— Հայկական ինքնահատուկ նվագարաններու մասին ևս տեղեկություններ տվի՞ր համաժողովի անդամներուն:

— Այո՛, կպատասխանեմ Կոմիտաս, հայկական նվագարաններու մասին ևս խոսեցա համաժողովին մեջ, մասնավորապես ծանրանալով փողին շուրջ, զոր բացատրեցի իր ամբողջ կազմով և նաև հոգևոր ու գեղջուկ երգերի նմուշներ նվագելով անոր վրա: Պետք է ըսել որ ան ևս, ինչպես հայ երաժշտության մյուս առանձնահատկությունները, խոր ապավորություն գործեց ունկնդիրներուն վրա: Իմ կարծիքով, փողը մեր նվագական երաժշտության հիմնաքարն է, և ունի այն տեսակ առանձնահատկություններ, զորս ոչ մեկ ազգի նվագարան չունի: Անոր հնչումները ամենեին մոտիկն են մարդկային սրտին, ամենեին հարագատ արտահայտիչ անոր բոլոր դրացումներուն. մարդ անոր պարզ ծակտիքներուն մեջ կրնա արտաբերել իր հոգին իր բոլոր զգացումներով: Եթե կատարելագործվի այս նվագը՝ իր դանազան սեռերով, ես վստահ եմ թե մենք այն տեսակ շնչական հրաշալի նվագուրդ (orchestre) մը կունենանք որ ընդունակ է քնուկուկնը արտահայտելու իր էական զույներով, կյանքը իր հարագատ շարժումներով, միտքը՝ իր սեփական խորհուրդներով, և սիրտը՝ իր իսկական հուզումներով, որովհետև փողը միակ նվագարանով կրնա բազմաթիվ ձայներու հնչումներ հանել, ինչ որ կարելի չէ գտնել ուրիշ նվագարաններու մեջ: Թեև համաժողովին բացատրեցի ուրիշ հայկական նվագարաններ ևս, ինչպես պարկապուղի կամ տկզարը, սակայն անոնք այնքան ինքնուրույն չեն որքան փողը, և անոնց մոտ կամ նման ուրիշ նվագարաններ կարելի է գտնել ուրիշ ժողովուրդներու մեջ. արդեն բոլոր ազգերն ալ՝ իրեն ազգային նվագարան՝ մեկ գործիք մը միայն կունենան ընդհանրապես, իսկ մյուսները շինված կամ հարմարցված կըլլան անոր վրա: Հայոց մեջ այդ ազգային նվագարանը փողն է, որ, պետք է անգամ մըն ալ կրկնեմ, խորունկ ազդեցություն գործեց բոլոր համաժողովականներուն մեջ, իր պարզություն մեջ պարփակած վեհությունը:

— Իսկ ի՞նչ պիտի ըսեիք, սիրելի վարպետ, այն վլվլուկներուն առթիվ զոր ցույց տվիվ հոս տիրացուներու ճահիճը: Կակնարկեմ այն տխուր պայթարին, զոր պղտասայ տիրացուներ՝ կրոնական ժողովին անիմաստ իրարարանցումեն քաջալերված, բացին ձեզի դեմ, կրամոֆոնի ծանոթ խնդրույն առթիվ:

Վարդապետը՝ որ ցարգ խոսեք էր ոգևորու խանդավառ, կոռե հանկարծ, ու ես իր աչքերուն մեջ կկարդամ տարտամ դառնության մը զգացումը, զոր իզուր կչանա սքողել ինձմե: Ու կտեսնեմ որ այդ դառնությունը հե-

տրզհետե անտարբերության մը կփոխվի, երբ խոսք կառնե վարդապետը շարունակելու համար.

— Ես տարիներու աշխատանքով շինեք եմ իմ ուղեգիծը, ուրկե ընթացեք եմ ցարգ և պիտի ընթանամ ասկե ետք ալ որքան ատեն որ ուժ գգամ երակներուս մեջ. ոչ մեկ խոչընդոտ չի կրնար կասեցնել զիս իմ առաքելությանս մեջ, որուն նվիրականությունը համոզված եմ ես բոլոր սրտովս:

Կրկին կլոն վարդապետը, ու աս անգամ ես է որ կընդմիջեմ իր խորհրդավոր լուսությունը.

— Իսկ ասկե ետք ի՞նչ ընելու մտադիր եք, վարդապետ:

— Շարունակել իմ ճամբաս, կրսե կարուկ ու վճռական:

Ու ձեռքի խանդաղատագին սեղմումե մը ետք, կմեկնիմ քովեն:

...Մեր զրույցը վերջացած չէր դեռ երբ այցելուներով ողողվեցավ սենյակը. իր սաները, իր մտերիմները, իր զքերթենքելե-ները կըխոժեին անընդհատ, պահ մը հանգիստ լսալով խեղճ վարդապետին:

Կոմիտասի տունը ուխտատեղի մը մնաց դեռ շատ մը օրեր: Ու վարդապետը խոնջանքը մոռցավ իր ժողովուրդի գուրգուրանքին մեջ:

### VII.—Փոթորիկն արագ

Փոթորիկը չէինք նախզգար տակավին:

Բոլորը համակված էին դեռ անքաջատրեյի լավատեսություններ մը, ու ոչ ոք չէր գիտեր շուրջը՝ որպեսզի տեսնե թուրքին նախվածքը, որ երթալով կխոժոռեր:

Ամենուն այգերը հառած էին հայոց աշխարհին, որ պետք է ծաղկեր շուտով դարերով հեծելու և հեծծելու հետո:

Ամբողջ վեց տարի հայրենիք էինք կանչեր օտար ասիերու վրա թափառող հայ պանդուխտները: Հավատացեք էինք որ շուրթիթին հետ դրախտ պիտի դառնա հայոց աշխարհը: Ծիշտ է՝ պահ մը հուսախարությունը պաշարեք էր մեզ երբ տեսեք էինք թե կեղծ է այդ Հուրիթիթը, Քայց հիմա դարձյալ մեր հույսերը բոցավառեք էին, ու դարիքները հայրենիք կկանչեին նորեն:

Ու իրավ ալ պանդուխտները անսացին մեր կոչերուն: Խուճը-խուճը սկսան հայրենիք դառնալ անոնք ևս խարված մեղ նման: Ամեն շոգենավ որ կու գար Պոլիս՝ խումբ մը հայ կրեքեր հետը:

Քանանք այն օրերու թերթերին մեկը:

«Առջի օր, 2/15 հունիս, Մարսելիսայն Պոլիս հասան դարձյալ նոր պանդուխտներ Ամերիկայն, թիվով 30 հոգի, հայկական գավառները մեկնելու համար», կկարդանք, որինսկ, «Ակատամարտ»-ի մեջ:

Անոնցմե ոչ մեկուն մտքն կանցնէր թէ շուտով պիտի շքանային հայկական այն դավառները:

Ազգուհերը, կրսեն, իրենց կբաշեն երբման իրենց զոհերը:

Այդպես եղավ նաև այս անգամ: Արտասահման էին, 1914-ի այդ ամռան, շատերը մեր մտավորականներն: Անոնցմե ոմանք, ինչպես ես ժակ, Սիամանթո, Բարսեղ Շահպազ, վազեցիին շուտ մը Պոլիս դարձան: Իրենց ոտքովը եկան դահիճին պիկը:

Տուն վազեց նաև Կոմիտաս: Խանդավառութունը՝ զոր Փարիզի իր վերջին առաքելութունը լեցուցեր էր իր մեջ՝ հանգիստ չէր տրված իրեն: Զայն փութացուցեր էր Պոլիս՝ որպեսզի գայն լծե նոր առաքելության մը: Գործեր կային նաև Եվրոպայի մեջ բայց ան նախընտրեց Պոլիս դառնալ, հազիվ քանի մը որ կանգ առնելու հետո Վիեննայի և Յիլիպեի մեջ:

1914 հունիս 22-ին Փարիզն կգրեր Պոլիս՝ Արմինե Մելիքյանին և նազենի Գեյնճյանին:

«Թեև համաժողովը լրացավ, բայց ընտրվեցա ժողովրդագրական բաժնի այն մասնաժողովո շորս անդամներից մեկը, որո պարտականությունն է մեկ միատեսակ ծրագիր մշակել՝ առհասարակ ժողովրդական երաժշտութիւնն ուսումնասիրելու և այնպես, որ բոլորը կարենան օգտվիլ՝ առանց դժվարութիւնաց: Առայժմ այդ գործով եմ զբաղվում:

Անգղիայն պիտի կանչեն եղեր, որ հայերի համար մեր երաժշտութիւն մասին դասախոսեմ: Երեկ ևս մի հարուստ ֆրանսիացի Մարսելն եկավ, այցելեց և խնդրեց որ նույն քաղաքին մեջ դասախոսութիւն մը կատարեմ հայ երաժշտութիւն մասին ընտիր հասարակութիւնն առջև: հանձն առա, եթե հարմարի ու զբաղանս օգտեմ:

...Ուրեմն, եթե այսպես դասախոսութենն դասախոսութիւն հրավեր ստանամ՝ Կ, Պոլիս գալս մի քանի շաբաթ ևս պիտի ուշանամ»:

Այն ի վերջո յպատասխանեց սակայն ոչ մեկ հրավերի և վազեց Պոլիս:

Փարիզն դարձին Կոմիտաս միևնույն ոգեվորութիւն մեջ գտեր էր Պոլիսը: Ավելին, այդ ոգևորութիւնը ավելի ևս աճեր էր, ու իր լրման հասեր՝ երբ նշանակվեր էին Եվրոպայի զույգ մարզպանները որոնք պիտի երթային հսկելու յոթը նահանգներու մեջ ծրագրված բարենորոգումներուն:

Արդարև՝ Բ. Գուռը ապրիլի մեջ դիմեր էր վեց պետութիւնց դեսպաններուն խնդրելով «իրենց բարեհաճ աշակցութիւնը ընծայել հայկական երկու երկրամասերու համար երկու քննիչներու ընտրութիւն մեջ, ու պետութիւնները, խորհրդակցելով իրենք իրենց միջև, նշանակեր էին այդ քննիչները հանձնի հոլանդացի Վեստենենկի, որ նախապես ընդհանուր նահանգապետ եղած էր հոլանդական Կոնդոյի, և դանիացի Լոֆի, որ գնդապետ էր դանիական բանակին մեջ: Վեստենենկ կեդրոն պիտի ունենար Կարինը ու պիտի հսկեր Կարնո, Սերաստիո և Տրապիզոնի կուսակալութիւններուն վրա, իսկ Լոֆ պիտի նստեր Վան և պիտի վարեր Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի և Խարքերդի նահանգները: Անոնք ժամանեցին շուտով Պոլիս, անմիջապես զործի անցնելու համար:

Մեծ էր ոգևորութիւնը հայութիւնն րոլոր խավերուն մեջ երբ երկու ընդհանուր քննիչները Պոլիս հասան, «շայաստանի մարզպաններ» սկսանք կոչել զանոնք նույնիսկ մեր թերթերու մեջ, և մեր խանդավառութիւնը զանոնք հայացուց անունով ալ, — «իշխան ոստանիկ» և «իշխան Լովյան» անվանելով զանոնք: Մեր հույսերը ավելի ևս աճեցան, երբ իրենց պաշտոնական շփումներն հետո Բարձրագույն Դռան հետ, շփման մեջ մտան հայ շրջանակներու հետ ալ: Անոնց մայիս 9-ին (ապրիլ 26) այցելեցին հայոց պատրիարքարան, և ամրապնդեցին մեր լավատեսութիւնը:

Ավելեցնենք որ Կոմիտաս ևս ձեռնածալ նստած չէր: Կրկին գուլիս անցած էր խումբին, Փարիզն վերադարձն անմիջապես հետո, Բերայի հայ Ավետարանական ս. Երրորդութիւն եկեղեցիին մեջ իր համերգը կու տար, որ պիտի ըլլար, ավա՞ղ, վերջինը:

Հայութիւնը, անդին, կշարունակեր ետալ:

Հայկական Ոգեմպիականը՝ որ տեղի կուենենար 1914 հունիս 14/27-ին՝ մեկն էր հայ երիտասարդութիւն վերջին բնկումներն մեծ Եղեռնն առաջ: Ոգևորութիւնը մյուս տարիներն ավելի էր, և մարզիկներուն թիվը ավելի ստվար: Այս անգամ գավառն ալ բերեր էր իր մասնակցութիւնը, ու զրկեր էր իր մարզիկները:

Վերջին քանի մը տարիներուն պես՝ այդ ամառ ևս պարտիզակ կխայտար Պոլսն հոն համախմբվող հայ մտավորականութիւնն երկակալութիւնը: Այդ տարին հոն էր որ կըսարքեր Հայ Ռաուցյական Միութիւնը իր մանկավարժական դասընթացը, ոգևորութիւնը ավելի ևս արժարծելով գլուցին մեջ: Դասընթացը կբացվեր հուլիս 15/28-ին, ճիշտ այն օրը, երբ աշխարհ կսկսեր բռնկիլ անդին:

20 Ռոբերտ Աբայան, Կոմիտասի 1914—1916 թվականների նամակներից, «Գրական թերթ», 1965, թիվ 13:

Այդ օրերուն զնդապետ Հոֆ հասած էր արդեն Վասպուրական, և իր քննական պտույտը կատարելով՝ ժամանած էր հայկական հարավային նահանգները, ողջունված եկեղեցիներու զանդակներուն հրեմվայից դողանջներով և ժողովուրդի խելահեղ ցնծութեան մեջ, իսկ Վեստենեկ կպատրաստվեր Կարին մեկնելի իր շքախումբին և աշխատակիցներուն հետ, երբ ահա հնչեց ռազմի շփոթը:

**VIII.—Միճչ դահիճը դուռը կսպասէ**

Կմտնենք արդեն զարհուրելի շաքաթը: Երկուշաբթին որ մեզ կրացցվի ապրիլ 6/19-ին՝ համաժող էջ մը կրանա ամեն մեկուս կյանքին մեջ: Այդ օրը փակվեր էր առաջին քառորդ դարը կայ տողերը գրողի կյանքին՝ տառապանքով թրծված տարիներու հետ, որոնք վերջ էին գտեր 1908 հուլիսին՝ Համիդի մեզ շնորհած ազատութեան օրերուն, հուլիսերու և ցնորքներու շրջան մը ապրեցնելով մեզ հետ ամբողջ յոթը տարի: Պատմութեան կհանձնենք այդ յոթը տարին ալ հիմա՝ զգալով արդեն որ դմնգակ օրեր կսպասեն մեր դուռներուն տակ:

Զգիտեմ ինչպես անցավ այդ երկուշաբթին: Բայց գիտեմ որ պահ մը խաղաղ լիողուց ան մեր հոգին, ու հաջորդ գիշերն ալ հետը:

Երեքշաբթի արդեն գիտեմ որ ճիվաղը կմտնեն մեր դուռներուն: Լուրերը որ մեզ հասեր էին այդ օրը վստահելի մեր աղբյուրներին՝ մեզ համակեր էին տարօրինակ զղայնութեամբ մը զոր մարզ կզգա աղետին առաջ: Կզգայինք որ փրկութեան այլևս ոչ մեկ հույս մնացեր էր, մանավանդ այն եզերական զավեշտին հետո զոր մեր օազատարարները խաղացեր էին Դարդանելի առջև: Մարեր էին հուլիսի վերջին կայծերը մեր հոգիներուն մեջ, ու սոսկումով կնայինք թուրքին աշքերուն որոնք հիմա ավելի դաժան էին դարձած՝ Դարդանելի օրերուն իրենց զգացած սարսափը թոթափելի հետո:

Զգուշութեան վերջին փորձերը զորս այդ օրվան զմեղակ լուրերը մեզ կհարկադրեին՝ ի՞նչ արժեք կրնային ունենալ սակայն, երբ կզգայինք որ թակարդն ենք արդեն բոլորս ալ: Մեր քնակարանները փոխելով մեր հետքերը կորսնցնել մեր մեջ վերջին հուսահատ փորձը պիտի ըլլար, ու, ավա՜ղ, շատերը թերացան այդ զգուշութեան մեջ ալ, անփութութեամբ մը զոր մարդ կունենա անխուսափելի աղետին առջև: Այնուամենայնիվ մտաւուտ վտանգին մասին տեղյակ պահեցինք բոլորը որոնք կրնային առաջին զոհերն ըլլալ թուրք մուղկութեան:

Ինձ էր վիճակված Կոմիտասին ևս հազորդել սև շշուկները, ու միևնաչափ ալ սարսուռով կհիշեմ սառնասրտութիւնը զոր ան

ցույց կու տար զանոնք իմացած ատեն: Օրը օրին տեղյակ կպահէի զայն մեր ստացած լուրերուն, ու ան կարծես թէ չէր ազդվեր իրեն պատմածներես որքան ալ մտահոգի ըլլային անոնք: Ան ոչ մեկ վայրկյան չհեռացավ աշխատանքի սեղանէն:

Նստան Մանուց Միտթունը, զոր այդ օրերուն կվարեի, նախաձեռնութիւնն ուզեց ստանձնել ցերեկույթի մը՝ որուն հասույթը կուզեր հատկացնել վիրավոր թուրք զինվորներուն: Պահու մը, երբ թուրքը ակոս կկրճտեր հայուն դեմ, ամեն մեկս կփորձեինք պատրվակ մը ստեղծել հայ տարրին բարեհուսութեան ապացուցը տալու համար: Գիտեմ որ նման մետաբերով անկարելի էր քնացնել զահիճներուն ներսը ծվարած օձը, և այնուամենայնիվ միշտ ալ փորձեցինք այդ անկարելին:

Կոմիտասը, որուն դիմեր էի, սիրով խոստացած էր իր մտանակցութիւնը: Ցերեկույթը պիտի սարքեինք Թևրոնիայի մեջ, որ իտալական սրահ էր, և իտալիա դեռ հարած չէր դաշնակիցներուն:

Մղձավանջի այդ օրերուն մեջ զորս շաքաթուք շաքաթը բերած էր մեզի, այլևս սիրտ լուսեմինք ոչ ալ քաշութիւն՝ այդ հանգեսը սարքելու: Ավելի ճիշտ վախցանք հայութեան համախմբելու որևէ տեղ այդպիսի մտայլ պահու մը, երբ մարդ չէր գիտեր թէ ինչպես իր կուն պիտի ըլլա օրը, կամ գիշերը ինչպես պիտի լուսանա:

Գացի Կոմիտասին ալ իմացնել այդ օրը՝ թէ հետաձգած ենք հանգեսը:

— Լավ եք ըրեր, մըմնջեց, ու ա՛յ ուրիշ խոսք չըրավ:

Օրերը որ հաջորդեցին թաթափված էին կասկածով ու երկուդով: Ամենուն նայվածքին մեջ հուսահատ բան մը կար, բայց ոչ ոք կհամարձակեր սիրտ տալ քովինին: Իրարու հետ գրեթէ փսփսուքով կխոսեինք, կամ հազով քարն առած-տված կրամնվեինք իրարմէ:

Կասկածելի մարդոցմով լեցուն էին փողոցները, ամեն մեկուն աչքը հառած քովին անցնողին:

Այսպես անցան չորեքշաբթին, հինգշաբթին:

Ազգային իշխանութիւնները կշարունակեին իրենք ևս շփոթած մնալ ամեն կողմի հասնող վրդովիչ լուրերուն առջև: Զավեն պատրիարք 1915 ապրիլ 10/23-ին իր մոտ խորհրդակցութեան կանյեր էր հայ երեսփոխաններն ու ձեռակուտականները՝ դարձան մը խորհելու համար այն դմնգակ կացութեան՝ որուն լուրերը կհասնեին զավաններին, մասնավորապես Կեսարիո, Մուշի, Բաղեշի, Վանի, Տեոթեոլի, Զիլթունի շրջաններին: Կնրկա են Զոհրապ, Վարդգես, Զարեհ Տի-

պեր, և դեռ քանի մը ուրիշներ խորհրդարանի հայ անդամներն, բայց ոչ բոլորը: Քուրքին զարշապարեն շգատվող երեսփոխաններ և ծերակուտականներ ալ ունինք, որոնք վախցած են գալու: Հուսահատ եղած են բոլոր ներկաները իրենց արտահայտութեանց մեջ. ու ի՞նչ կորոշե հուսահատ մարդը. երթալ ոտն իյնալ իր տիրոջը, ու պաղատիլ որ զոնն կլանքը խնայե: Այդպես կորոշեն Պատրիարքըն ու իր խորհրդականները ազատելու համար զավտը իր ճգնաժամեն: Ու ոչ ոք դեռ կնախգոգա թե ճիշտ այդ պահուն ճիվաղը իր վերջին պատրաստութունները կտեսնե անդին, ի, զոհերը հավաքելի առաջ իրենց տուններն:

Նախատունակն է Կարմիր Հունձքին:

Կոմիտասը վերջին անգամ կտեսնեմ ճիշտ այդ հունձքի առտուն, կանուխեն:

Այդ շարաշուք առտուն սապես սկսած եմ պատմել անգամ մը.

«Ամբողջ գիշերը մղձավանջով կանցընեմ, Զար-շար պատկերներ կխոռվեն քունս: Արդեն քանի մը գիշերն ի վեր կորսնցուցած եմ հոգիիս խաղաղութիւնը ու կասկածներով միտքս կլլկեմ: Ի՞նչ պիտի ըլլա վաղը. ի՞նչ պիտի պատահի այս գիշեր իսկ շուտացած: Փոթորիկը կու գա. կնախգոգամ վաղուց է. բայց ե՛րբ պիտի պայթի ան... ու ամեն վայրկյան կզգամ որ ան մեզի կուգա...»:

Զեմ հիշեր այնքան սարսուռ որքան այդ առտովանը, երբ դուրս կնետվիմ տունեն հոգիս փոթորկած:

Պողոտա կելլեմ շտապով, հանդիպելու նախ մեր վստահելի տղուն՝ որ կծառայի Քյուրքեյան դեղարանի մեջ. ան ալ անձկութեամբ կսպասե ինձի, հուզված, շփոթած. իր վիճակը ինձ կմատնե արդեն ամեն բան. լուր առած է թե այդ օրն իսկ պիտի բացվին ոստիկանատուններուն դրկված գոց պահարանները:

Ա՛յ կասկած չկա: Աղետը անպայման պիտի պայթի այդ օրը:

Կոմիտաս նշմարած է զիս պատուհանեն, ու ապակին կմատնահարե: Կբարձրանամ մօտը, հազիվ հաջողելով հուզումս զսպել: Կտեսնեմ որ հուզված է ինքն ալ:

— Գեշ երազ եմ տեսած, Սիրունի, կըսե.

այսօր անպատճառ բան մը պիտի պատահի...

Պահ մը կզգուշանամ լսածներս կետ առ կետ պատմել իրեն. բայց կըսեմ թե իմ ալ նախզգացումներս լավ չեն. հետո կամացկամաց կզգացնեմ իրեն թե աղետը շատ ալ հեռու չէ, ու լավ կըլլա որ ամեն մարդ իր բնակարանը փոխե:

— Քող պատահի՛ ինչ պիտի պատահի, կըսե Կոմիտաս՝ իրմե բաժնված պահուս:

Հոգեկան իր անզորութիւնը կապշեցնել զիս: Քիչ անգամ մարդ կրնա այսքան քաջ ըլլալ փոթորիկը մտնեցած ատեն:

Ու երբ սանդղաներն կիշնեմ վար՝ փողոց նետվելու համար, կզգամ որ քիչ մը խաղաղած է հոգիս:

• • •

Ընթերցող, կանգ առնենք այստեղ:


Կավարտի հոս Կոմիտասի Գեթեմանին, — շրջանը ուր ան սպասեց իր դահիճներուն, պաղարշուն ու քաջ:

Այս պահեն կսկսի արդեն խաչին ահաՎոր ճամբան, ուրկե պիտի քալեր ան և ուր պիտի հետևինք մենք ալ իրեն, ընթերցողին հետ մեկտեղ: Ու ընթերցողը թող ներե եթե իր հոգին խոռվեմ ճամբան, իրեն պատմելու ատեն շարաշուք հանգրվանները ուրկե պիտի անցնինք Կոմիտասին հետ, սկսելով այդ դժնե օրեն երբ ճիվաղը ման եկավ դուռնե-դուռ, իր զոհերը շոկելու համար:

Եվ թող ընթերցողը այժմեն իսկ գիտնա թե ամեն անգամ որ մտաբերել կստիպվինք հուզումները զորս այդ օրն ապրեցանք՝ սարսուռ մը կհամակե մեզ: Տարիները չկրցան մեր հոգիներուն մեջ ցամաքեցնել անդահանքը, զոր ամեն մեկս զգացինք երբ դահիճը մեր դուռը դարկավ, ու մանավանդ այն պահուն՝ երբ ան իր զոհերը առջին ձգած սպանդանոց կըտաներ: Կես դար անցած է ահա այդ զարհուրելի գիշերն ի վեր, և սակայն միշտ ներկա են մեր հոգիներուն մեջ ուրվականները անմոռանալի այն մարգոց որոնք մաս կազմեցին եղբրական այդ կարավանին և որոնց հետ հայ ժողովուրդը կորսնցուց թանկագին մաս մը իր հոգիին:

Կոմիտաս մեկն էր այն հսկաններն զորս դահիճը խորտակել ուզից խորտակելու համար հայ ժողովուրդը:

(Շարունակելի)



### ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ\*

Հատ արժանավույն զնահատելով Արարկի-րի, Բալուի ու նաև բուն Խարբերդի ժողովրդական բանահյուսությունը, միաժամանակ պետք է գիտակցենք, որ հատկապես Ակնը, իր մոտակա գյուղերով, հանդիսացել է Խարբերդի ողջ նահանգի երաժշտա-ազգագրական մեծ կենտրոնը: Ազգագրապես Ակնը իր շրջակայքով բավական խայտարղեստ մի պատկեր է ներկայացրել: Այստեղ ապրել են և՛ հայ-հոռոմներ, և՛ մահմեդականացած հայեր, և՛ հայ-բոշաներ, և՛ քուրդեր, և՛ թուրքեր: Եվ սակայն, այստեղ դարեր շարունակ անաղարտ է մնացել հայկական ազգային ոգին, շատ զնայքերում նույնիսկ այլադավան հայոց մեջ՝ շեքներ մը գեղեր կան հայ-հոռոմոց, — տեղեկացնում է Գ. Վ. Սրվանձա-յանցը, — որք են Ձորակ, Մուշեղկա, Վանք, Շրգու, որոց բնակիչք գրեթե երբեք տարբերություն չունին հայոցմեն, իրենց բնտանեկան և վարժարանի լեզուն հայերեն է, նամականեր և սուլմարներ հայերեն, վարժապետ հայ, քահանայք անգամ հունարեն չգիտեն խոսիլ, և շարունակ հարաբերու-թյանց մեջ են հայոց ժողովրդներու և առաջ-նորդարանին հետ»<sup>207</sup>, Իսկ Վ. Գուլումեյանի վկայությամբ՝ «ամենտունիսն ամենեն մաքուր և վճիտ օրինակները» պահպանված են եղել «Ակնա վանք և Ձորակ անուն երկու հայ-հոռոմ... գյուղերուն մեջ»<sup>208</sup>, Մահմեդականացած հայերը՝ ահիջ ու սարսափից թեև միշտ

էլ իրենց ցույց են տվել նոր կրոնին իրր մուեռանդորեն փարած հավատացյալներ, բայց, ինչպես այլուր, այնպես էլ մանավանդ Ակնի շրջակայքում, իրենց խորքում մնացել են հայեր<sup>209</sup>, Բոշաները Ակնում գրեթե լրիվ ձուլվել են հայոց մեջ<sup>210</sup>, Ինչ վերաբերում է այլազգիներին, ապա դրանցից քուրդերը՝ կենցաղային ու հոգևոր որոշակի կապերի մեջ են գտնվել Ակնա հայության հետ<sup>211</sup>, Իսկ թուրքերն էլ, ինչպես կտեսնենք ստորև, մի քանի տեսակ երգեր հայոց հետ միասին երգել են «հավասարապես» (թեպետև հայկա-կան երաժշտական կյանքը, ըստ էության, թրքականից որոշակիորեն սահմանազատ-ված է եղել): Այս վերջին երգերը թրքալեզու են, Գրանք են, որ նկատի է ունեցել Ղ. Զա-նիկյանը (ու նաև մի շարք հայերեն երգեր ևս), երբ գրել է: «Գիտեն ամեն ակնեցիք, թե ինչպես ազգային հին սովորությունքն, նույն-պես և հին երգերն տակավ առ տակավ կզաղորին ու կմոռացվին, և սույն վերջնոց տեղ հայերեն և թուրքերեն նորահար երգերն կգործածվին»<sup>212</sup>, Այսուհանդերձ, ճշմարիտ է նաև այն, որ ակնեցիք պահպանել ու մինչև մեր ժամանակներն են հասցրել հնա-վանդ, ընդգծված կերպով հայեցի և բարձր գեղարվեստականությամբ աչքի ընկնող շատ երգեր, ինչպես և դրանք վերարտադրելու ազգային ինքնատիպ հինավուրց շատ ձևեր: Գծվար թե Ակնից բացի որևէ այլ տեղում հա-րատեսած լինի, ասենք, երգեցողության այն ձևը, որ նկարագրում է Մոցիկյանը, «Ակնցի հայ կանայք մասնագետ են իրենց շրթունք-

\* Շարունակված «Էյմիածին» ամսագրի 1965 թվա-կանի № 8 Ա — է-ից, 1966 թվականի № 8 Ա — Գ-ից, 9 — Ժ-ից:  
<sup>207</sup> Գ. Վ. Սրվանձաթյանց, Քորսս աղբաթ, մասն առա-ջին, Կ. Պոլսու, 1879, էջ 252—253.  
<sup>208</sup> Վ. Գուլումեյանե, Ակնա և շրջակայքի ժողովրդա-կան բանահյուսությունը, տե՛ս Ակն և ակնցիք, Փա-րիզ, 1952, էջ 405.

<sup>209</sup> Գ. Վ. Սրվանձաթյանց, Էյվ. աշխ., էջ 253—254.  
<sup>210</sup> Ղ. Զանիկյանե, Հնութունք Ակնա, Քիֆլիս, 1905, էջ 61.  
<sup>211</sup> Անդ. էջ 70.  
<sup>212</sup> Անդ. էջ 405.

ները փոքրիկ ձեռնաթմբուկներու (ծնծղաշար դափի մասին է խոսքը—Ն. Ք.) եղբրքին մտեցնելով անտունիներ, հորդորակներ երգելու, որով կհորինեն տեսակ մը կիսաձայնական ու կիսազործիական, ինքնատիպ ու հրապուրիչ, թրթռուն երաժշտութիւն»<sup>210</sup>, Ակնը մինչև վերջերս էլ ունեցել է իր «հայտնի լաց ըսող» կանանց կամ «եղբրամայրերին», որոնք ըստ Վ. Գուլումճյանի, հատկապես հրավիրվում էին, երբ մանավանդ «մեռյալը շատ հարգված... սուղ անձ մըն էր»<sup>211</sup>, և որոնք մասին Մ. Աբեղյանը ասում է, թե «Ակնի ողբասց կանանց հայրենի լափով հորինված քաղմաթիվ լացի անտունիները հին «լալական կանանց» նույն լափով հորինված «լալիքի բանաստեղծութիւններն» են, որոնք հասել են մինչև ԺԶ դարը և ապա մինչև մեր օրերը»<sup>212</sup>, Կարելի է ասել, թե անհշատակ ժամանակներից է գալիս ակնցիների՝ բնութիւն ուժերը դուրս բերլու և այդ առթիվ երգեր երգելու սովորութիւնը: «Սերաշտութիւնն եղած՝ տարվույն մեջ,— գրում է Մոցիկյանը,— ... հայեր, թուրքերու մասնակցութեամբ, կերթան գետեղբրքը, աղոթք կընեն», ավելացնելով, որ հետո «հորդատու անձրևն է տեղում, մինչև ակնցիք երգում են՝ «Օրգն կուգա, ձուն կուգա»<sup>213</sup>, Առնվազն մինչև հայկական վաղ միջնադարն է հասնում ընդ հորինելու այն սովորութիւնը, որ հանդիպում է Ակնում: «Շեր կկոչվին այն բանաստեղծութիւնները,— տեղեկացնում է Գուլումճյանը, խոսելով Ակնա երգերի տեսակների մասին,— որոնք կհորինվեին, երբ ապօրինի սիրո գայթակղութիւն մը պատահեր: Այսինչին վրա շեր են հաներ՝ կրսեին»<sup>214</sup>, Վերջապես ուշագրավ շատ կողմեր ունեն ակնցիների մի շարք այլ երգերը ևս: Առնք՝ զանազան պատահարների առիթներով հորինվածները, որոնք իրենց նյութով մշտապես նորոգվելով, հորինվածքով ավանդական են եղել, ինչպես օրինակ՝ 96-ի կոտորածներից հետո ստեղծված «Ակնա դիեն լալու ձայներ եկան հասան մեր ականջներ» երգը<sup>215</sup>, և կամ՝ տնային աշխատանքների հետ կապված երգերը, որոնք այնքան սիրով կատարել են Ակնա

հայուհիք: «Դրացի կանայք, զարնան ու արան եղանակներուն շատ անգամ ցորեկները իրարու ըով գալով, տներու ներքնաբակերը, տապաստակներու վրա նստելով և իրենց շահը մարելով, բերան բերնի կուտան ու համրական միաձայն համերգ մը կարճաճացնեն»<sup>216</sup>, Հատուկ ուշադրութեան արժանի, սակայն, Ակնա տոնական և հարսանեկան երգերն են անտարակույս: Դժբախտաբար, առաջինների մասին մեր իմացածը աղքատիկ է և ընդհանուր բնութիւն, Լ. Զանիկյանը հետևյալ տեղեկութիւններն է տալիս: «Դեկտեմբերի 31-ին ամեն թաղն աղքատիկ տղայք խմբակներ կազմելով, ցերեկեն սկսյալ հայոց թաղերը կըրջին տոպրակներով, և երբ դոնահարն զարնելով դուր կրացվի՝ իմի բերան կսկսին երգել՝ «Ասոր կախ է, առտուն կաղոնտ է...»: Տեսնորնզառաջին՝ «տարվույն մեջ ամուսնացյալ փեսայք եկեղեցի կերթային... վերադարձին, յետ ընթրեաց փեսային տան ընտանիսն ցախերով խարույկ մի կվառնին. փեսայն կըրջցունենին խարույկի շուրջն և այլք կպարենին...»: Բարեկենդանին՝ «ամանավանդ վերջին շարաթուն և վերջին օրերը զանազան խաղեր և ուրախութիւններ կըլլային...»: «սվագարանով կերգեն կամ կպարենին ի կանանց և հօրորդաց շատեր ալ թմրուկով (դեֆ) երգել կերգեն, կպարենին...»: «Մեծ պահոցը»՝ օր ս. Կողմոս զնալու Քաղաքես և մերձակա դուռերեն հարյուրավոր անձինք... առավոտուն կդիմեն ս. Կողմոս և եկեղեցվույն շուրջը, տանիքներն, քովի ընդարձակ դետիներն ու ալգիներն խումբ խումբ կնստին. ոմանք թուղթ կխաղան. ոմանք ձիարշավի կելնեն. ոմանք նորատեսակ նվագարան և ոմանք ջութակ, թմրուկ նվագելով կերգեն, կխաղան, կպարենին...»: Զատիկին՝ «կանայք ժողովվելով, «լալալի, յալալի, մեր տերն հարույց էլեր է»... երգը կերգեն ու կպարենին»<sup>217</sup>, ի միջի այլոց, Լ. Զանիկյանը, ինչպես տեսնում ենք, սույն տեղեկութիւններից մի քանիսը հաղորդում է անցյալ անկատարով՝ որպես հին սովորութիւններ, որոնք իր ժամանակ վերացած կամ վերանալու վրա են եղել: Բայց դրանք, և կամ վերահիշյալ գատկվա պարը, օրինակ, արձանագրելու առիթ ունեցել է Ակնում Զանիկյանից հետո աշխատած Վ. Գուլումճյանը ևս: «Ավագ շարթուն էր: Հաջորդ օրը եկան ինձի. «շուտ ըրն, Բենկայի օրորդները դատկվան պարը կըոնեն ու կերգեն... ենց տանիքին վրա» և այլն»<sup>218</sup>, Ակնա հարսանիքը մեզ համար

210 Ս. Մոցիկյան, Նշվ. աշխ., էջ 33.  
 211 Ակն և ակնցիք (նախաձեռնեց և հավաքեց Ս. Քելչյան, աշխատակրթիք, դասավորեց և խմբագրեց Մ. Պետրոսյան), Փարիզ, 1952, էջ 533.  
 212 Մ. Աբեղյան, 2ին զուստնական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էջ 227.  
 213 Ս. Մոցիկյան, Նշվ. աշխ., էջ 37.  
 214 Ակն և ակնցիք (Փարիզ, 1952), էջ 413.  
 215 Անգ, էջ 522.

216 Ս. Մոցիկյան, Նշվ. աշխ., էջ 14.  
 217 Լ. Զանիկյան, 2նութիւնք Ակնա, էջ 103—107.  
 218 Ակն և ակնցիք, Փարիզ, 1952, էջ 477.

կարևոր ու արժեքավոր է և իր խրախճանքի կամ ռեժիսորի հանձնարարությամբ րաժնով, և դրան նախորդող բուն ծիսական մասով, որը թիրամորզություն մեջ եղական է, և վաղնջական ազնվականության գծերը բոլորովին պահպանած է: Սույն հանգամանքը Մ. Գարրիբյանը բացատրում է նրանով, որ սեփականության կամ իշխանազուն ընտանիքներ Ակնա գաղութը հիմնած և հոն՝ ուրիշ ավանդությունը հետ՝ բերած են նաև հայկական հարսանիքը իր բարձրագույն և բնիկ տարազովը<sup>225</sup>: Եվ սա ընդհանուր առմամբ ձեռն է: Մնում է լուկ ավելացնել, թե Ակնա հարսանիքը, ինչպես պարզ երևում է նրա գանազան աբարավածները կազմությունից և ընդթից, արտացոլել է ավելի հայկական միջնադարյան քաղաքային ազնվականության նորը ճաշակն ու բարոյա-գեղագիտական ըմբռնումները: Ակնա հարսանիքում նախ և առաջ ուշադրություն են գրավում փեսի ու հարսի զգեստավորման գործողությունները, որոնք առանձին սենյակների մեջ կատարվելով, աչքի են ընկնում յուրատեսակ սկամերային՝ գծերով: Փեսի զգեստավորման երաժշտական ձևավորումը խիստ ուղուայ է: Զգեստավորման ավարտումից հետո միայն երգել են՝ թելի կայնե, թաղվոր աղբար, ու երբեմն նաև՝ «Ան բարձր լեռնեն ի վարձ հիանալի երգեր»<sup>226</sup>: Ետ ավելի ճոխ է եղել հարսի զգեստավորումը, որ ավելի կարևոր և երկար արարված մը կկացուցանեն, ինչպես հաստատում է Գարրիբյանը: Այդ արարվածում տարբերվում են երեք տեսարաններ: Առաջինը, որ սկսվել է խնամի կանանցով լեցուն սենյակի շեմին հարսի երեսու պահից իսկ, բովանդակել է ութ խմբական երգեր, որոնց թվում՝ «Ուրբեցար, բուրբեցար, Աղվոր ճամբան մուրբեցար» և «Աղվոր, քեզ ո՞ր մայրն է բերեր գոհարները: Երկրորդ տեսարանը՝ հարսը մտքը գրկից առնելու ինքնատիպ միջնախաղն է, թեկուր, աղվոր աղջիկ, հարս եղար մեզի՜ խմբերգով: Այս աբարավածը շատ պաթետիկ և սրտահույզ է— գրում է Գարրիբյանը: «Թե մայրն և թե աղջիկը դառնապես կարտասվեն, ինչպես ուրիշ մերձավոր արենակիցներ: Վերջապես ավարտվում է հարսի զգեստավորումը, երաժշտականորեն եզրափակվելով՝ «Ման եկուր, աղվոր, ման եկուր» խմբերգով ու դրան հաջորդող՝ «Ա՛յ իմ հարսի դատրիկ» հոյակերտ անու-

նիով, միայնակ (սոլո), կատարմամբ<sup>227</sup>, Բուն պասկի արարողությունը, որից անմիջապես առաջ էլ սհարսնացուին ձեռքը հինա կզնեն նվազարանով»<sup>228</sup>, հարսանիքի զուտ եկեղեցական մասն է: Հաջորդ գործողությունը արդեն բացթյալ ու ավելի ևս թատերականացված: Նրա մի գեղեցիկ նկարագրությունը տալիս է Գույումճյանը ևս, հիշատակելով «հարսնջուրերի»՝ դափի ի ձեռին երգելու հին ու արքայավայել սովորությունը: «Պասկաղություն արարողութենեն հետո, նվազածուներու ընկերակցությամբ, սեփական լուսո, արեղակն արդարաշարականը խմբովին երգելով կվերադառնան սեփակորին» տունը, հոն, հարսնետան քակին մեջ, կըրջապատվին հարսնջուրերու հուլի մը՝ որոնք դափ (դեֆ) ի ձեռին, զվարթ, աշխույժ ու ողորտ խանդավառությամբ կսկսին երգել: «Բարի լույս, աղվոր, բարի լույս...»<sup>229</sup>, Գարրիբյանի ավելի մանրամասն նկարագրությունից տեղեկանում ենք, սակայն, որ այս պահը աչքի է ընկել՝ երգի ու նվազի միախառնումով, մեներգի ու խմբերգի հակադրություններով, պրոֆեսիոնալ երգիչ-նվազածուների և առհասարակ երգող կանանց միջև դերերի բաժանումով ու փոխերգեցողությամբ: «Հարսանյաց ամենեն ուրախ վայրկյանը հասած է: Հարսնետները տանը աղջկի քակը, բացողյա կանգ կառնեն, և հարսն ու փեսան ձեռնուն վրա հեծած կմնան բավական ատեն, երբ տղուն կողմի աղջկաններն և նվազածուները կերգեն փոխն ի փոխ հարսին ուղղյալ «Բարյակ եկար»-ի մաղթանքը: Տողերը կարճ են, բայց լորս անգամ կկրկնվին, այսպես. նվազածուն թե կնվագե և թե կերգե սոլո «Բարի լույս, աղվոր, բարի լույս» և կին երգիչները կկրկնեն նույնը իրրև արձագանք... Այդ նվազածուները տեսակ մը շութակ (քեմենչե) և դափ (դեֆ) կղարնեն, իսկ կիները՝ դափ: Այս արարվածը կես ժամ կամ ավելի կտևե: Անոր գեղեցկությունը աննկարագրելի է: Հայկական հարսանյաց ամենեն սխրալի, ամենեն փառավոր, ամենեն ուրախ դրվագն է, և երգը՝ հարսանեկան երգերուն էն աղվորն է որ կհնչեցնեն հոն ցնծության շեշտերով: Այս պահուն երգ մալ կերգեն, հատկապես տղուն մայրը շնորհավորելու համար. «Թագվորի մայր, դուն դուրս եկուր»<sup>230</sup>, Տոնախմբության հաջորդ փուլը արդեն խրախճանությունն է, «Հարսանյաց երկրորդ օրը՝ ուրախությունը,

<sup>225</sup> Մ. Գարրիբյան, Հայկական հարսանիքը, տե՛ս «Անահիտ», 1911 (ԺԲ դարի), թիվ 3—4, Փարիզ, էջ 57:

<sup>226</sup> Անդ, էջ 58—59:

<sup>227</sup> Անդ, էջ 58—61:

<sup>228</sup> Հեռթյունը Ակնա, էջ 116

<sup>229</sup> Ակն և ակեցիք, Փարիզ, 1952, էջ 481:

<sup>230</sup> «Անահիտ», 1911, թիվ 3—4, էջ 61—62:

խաղն ու խնծիղը դազաքնակետը կհասնին... գինի կխամեն, կխաղան, և վերջապես մեծ հացկերույթը կընեն<sup>220</sup>։ Այս առիթով է, որ, բոլորովին ազատ ընտրութեամբ, կատարվել են Ակնի լավագույն և ամենասիրված երգերը, պարերն ու նշանավոր «խաղերը»։ «Երկու տեսակ է խաղը» — քացատրում է Գարրիելյանը. «թև-խաղ և պար, թև-խաղ կնշանակե դեմ առ դեմ երկու անձանց խաղալը. երբեմն երկու, երեք զույգեր այսպես կկազմվին միահաղույն, ըստ տարողութեան սրահին, կինները, հարսները ավելի կշարժեն իրենց քաղուկները... իսկ այլ մարդիկ թե քաղուկներու և թե սրունքներու շարժումները ավելի եռանդով կկատարեն... Պարը Ակնա մեջ սա կերպ է. կա պարագլուխ մը (հալա-պաշի) որ մեկ ձեռքը թաշկինակ մը կըրնե կտատան և մյուս ձեռքի ճկույթով կկցվի իրեն քովի պարենկերին ճկույթին, այսպես ամբողջ շարքը, ուր կմտնեն այրերն ու կիններ խոռն, Եթե ամտ է եղանակը, տանիքը վրան կկազմեն և հոն կընեն խրախճանութունն ու պարերը։ Պարի երկար շարքը խաղալով կդառնա ու կդառնա, բոլորակ կամ ձուռձե շրջան հորինելով<sup>221</sup>։ Ըստ Հ. Զանիկյանի՝ «պարն՝ ինչպես և թևխաղն՝ սովորաբար նախ ծանր եղանակով մը կսկսին, ապա՝ արագ<sup>222</sup>, որ վերաբերում է և՛ գործիքային պարեզանակներին, և՛ պարերգերին, Վերջիններս երգվել են հայերեն և թուրքերեն, «Խաղի երգերը հայերեն և տաճկերեն են, — վկայում է Մ. Գարրիելյանը և ավելացնում, թե, — այս ավուր ուրախութեանց մեջ է որ շատ մը տաճկերեն երգեր կերգվին — «Այա կյուզերի» և «Մանի» կոչված երգերը մանավանդ, որ Ակնա էն սիրական երգերն են, վասն զի սիրո և պանդխտութեան երգերն են ամենքս<sup>223</sup>։ Այս թուրքերեն կամ պարզապես թրքալեզու երգերի մասին՝ «որոնցմով ևս հարուստ եղած է Ակնա ժողովրդային քանահյուսութունը», խոսք ունի նաև Ք. Ազատյանը, «Այդ երգերեն մաս մը կան, — գրում է նա, — որ հայ ժողովուրդին ստեղծագործութուններն են, և հարսնիքի, ընտանեկան սովորութուններու հետ առնչակից են։ Իսկ կան ալ որ հասարակաց են և թուրք ու հայ կերգեն հավասարապես, Այս վերջինները Ալակոյզյու, Մենի անունը կրող մեներգերն են ընդհանրապես, և նվագի ընկերակցութեամբ կերգվին հավաքույթներու, տոնախմբութուններու ատեն կամ անջատա-

բար»<sup>224</sup>։ Ակնցիների նվագարանների մասին տեղեկություններ տալիս է դարձյալ Հ. Զանիկյանը։ Ըստ որում նա դրանք բաժանում է՝ հիների և ճորեի, քայց երևում է, թե վերջիններիս «նոր» անունը լոկ պայմանական է։ «Ակնա հին նվագարանքն են՝ չուֆակ (քեմանչե) և ձեռաց միակողմանի թմբուկ (դեֆ), և մեծ շնկյուռ (սաղ)։ նաև տավիղ (սանթուռ), մեծ թմբուկ և փող (ղավուլ զուռնա), նորերն են՝ նորածե չուֆակ (քեմանչե), նորածե տավիղ (քանոն) և արմոնիկ<sup>225</sup>։ Մոկարիանը սրանց վրա ավելացնում է՝ «Բուլկարիան» (սաղի փոքր տեսակը) և ծնծղաշար դափը ու քացատրում, թե արմոնիկը՝ «ձեռամբ կրելի, փոքրագիր, փքավոր դաշնակարան»<sup>226</sup> է, որ է ասիլ՝ հնագույն տիպի երգհոն։ Ինչպես տեսնում ենք՝ Ակն թափանցած շեն եղև եվրոպական երաժշտական գործիքները։ Առավել կարևորը ու, առաջին հայացքից նաև դարմանալին այն է՝ սակայն, որ Ակնի հարսանիքում, մասնավորապես, տեղ չեն ունեցել այստեղ ընդհանրապես քաջ ծանոթ դավուլն ու զուռնան ևս։ «Տաճկաց հարսանյաց մեջ սովորաբար դավուլ զուռնան, քեմանչե, սաղ, սանթուռ և փոքր թմբուկն կգործածվի. իսկ հայոց մեջ՝ քացի դավուլ զուռնային՝ մյուսներն կգործածվին, դայց հաճախ գործածական է քեմանչե կամ քեմանե, դեֆ և սաղ»<sup>227</sup>, — վկայում է Զանիկյանը։ Իսկ Մ. Գարրիելյանը նույնը ասում է ավելի հստակ. «Հայկական հարսանյաց մեջ դավուլ զուռնա չեն գործածվիր, այլ քեմանչե, դափ, սանթուռ... և սաղ»<sup>228</sup>։ Քանի որ լավ հայտնի է, թե դավուլն ու զուռնան առաջնագույն հատկանիշներն են հայկական գյուղական հարսանիքի, վերոբերյալ փաստը նորից ցույց է տալիս Ակնա հարսանիքի կապը՝ հայկական միջնադարյան քաղաքային կենցաղի ու ազնվականության բարքերի հետ։ Վերջապես հարսանեկան քննարկվող խրախճանութեանց ընթացքում էլ երգվել են նաև անտունիներ, որոնք, ինչպես արդեն ակնարկել ենք, Ակնա երգերի մեջ, իրենց քացատիկ կարևորութեամբ, առանձնահատուկ տեղ են զբաղում։ Ավելին. «Երվանդակ հայ ժողովրդական քանաստեղծության մեջ, — գրում է Վ. Գուլումեյանը, — ... Եթե կա սեռ մը՝ որ ամենեն ավելի հայեցի ըլլա իր արվեստով,

<sup>220</sup> Անդ, էջ 63.  
<sup>221</sup> Անդ, էջ 62—63.  
<sup>222</sup> Հեթումաբ Ակնա, էջ 424.  
<sup>223</sup> Բնահատ, 1911, թիվ 3—4, էջ 62—63.

<sup>224</sup> Ք. Ազատյան, Ակն և ակնցիք (ազգագրական ու կենսագրական հիշատակարան), Իսթանբուլ, 1943, էջ 27—28.  
<sup>225</sup> Հնությունք Ակնա, էջ 423—424.  
<sup>226</sup> Արևմտահայ աշխարհ, էջ 82.  
<sup>227</sup> Հնությունք Ակնա, էջ 423.  
<sup>228</sup> Բնահատ, 1911, թիվ 3—4, էջ 63.

լեզվով ու ոճով, որ ամեննն ավելի բարձր  
 քլլա իր հղացումով... ամեննն ավելի ճոխ,  
 պատկերալից ու բնական, այն ալ, ապահո-  
 վաբար, Անտունին է՞»<sup>227</sup>։ Եվ սրա մեջ ճշմար-  
 տության մեծ բաժին կա։ Ի՞նչ է, սակայն,  
 «անտունին»։ Եթե մի կողմ դնենք այս ան-  
 վան՝ Անտունի (—կարծեցյալ մի հեղինակ)  
 կամ Անտունի (—տուն շունեցողի, պանդուխ-  
 տի)<sup>228</sup>, դարձյալ անտունի (ոտանավորի  
 տուն-տուն բաժանված շիինելու)<sup>229</sup> հետ կապ-  
 ված երկրորդական բացատրությունները,  
 ապա պիտի ընգտնենք, որ Գույումճյանի  
 խոսքերով ասած՝ «Անտունին կրնա քլլալ  
 դերազանցապես սիրավեպ... և դարձյալ  
 օրոր և լաց կամ մահերգ» (և կամ՝ հնարա-  
 վոր է ավելացնել՝ պանդուխտին վերաբերող  
 երգ, թեև հենց նույն սիրավեպը, լացն ու  
 մահերգն էլ կարող են ընդդրկել նաև այս  
 վերջին իմաստը—ն. Թ.)։ «Իր զխավոր  
 հատկանիշն է, առաջին՝ իր լեզուն, որ պատ-  
 կառուի հնության մր զրոշմը կկրե... երկ-  
 րորդ՝ իր շափք, բուն հայկական տաղաչա-  
 փությունը»<sup>240</sup>, «Հայկական տաղաչափու-  
 թյուն» ասելով Գույումճյանն այստեղ հաս-  
 կանում է մեր միջնադարյան սեպարեմենտի  
 տաղաչափությունը (7+8)։ Արդ՝ զարգացնե-  
 լով այս միտքը, Մ. Արեղյանն էլ գիտակա-  
 նորեն հիմնավորում է մի տեսություն, ըստ  
 որի՝ այն դեպքում, երբ «Ակնի ավազանում,  
 սեպարեմ» բառը «կորցնելով իր հին նշա-  
 նակությունը՝ ստացել է ընդհանրապես  
 սերգ» բառի իմաստը», «անտունին» խոսքը,  
 իր նշանակությամբ ընդարձակվելով նույնա-  
 ցել է սեպարեմ» բառի հետ, և որ իրոք, Ակնի  
 անտունիններում հարատևել է հայրենների,  
 որպես՝ մի կողմից, հին գուսանական երգի  
 տեսակներից մեկի, և մյուս կողմից, հայկա-  
 կան միջնադարյան բազմակառուցյալ և  
 բազաբազույթյան բանաստեղծությունների»  
 նյութը, լեզուն, ոճն ու արվեստը<sup>241</sup>։ Արդարև,  
 հենց սրանումն էլ կայանում է Ակնի անտու-  
 նիների հզակա արժեքը, Հատկապես նշելի  
 մի պարագա էլ այն է, որ Ակնում, ըստ բո-  
 լոր տվյալների, անտունիների հետ միասին  
 որոշ շափով գոյատևել են հին գուսանական  
 կատարողական արվեստի ավանդույթները  
 ևս, Եվ նախ՝ նույնիսկ ժողովրդի մեջ։ Այդ

մասին կարելի է դատել թեկուզ և նրանից,  
 որ Ակնում հասարակ քաղաքացիք անգամ,  
 սսենք՝ կանայք, երգել են անտունիներ, Ոչ  
 միայն օրորներ, որոնց ստեղծողներն իսկ  
 եղել են Ակնի հայ մայրերը, և որոնք խար-  
 բերդի նահանգի և առհասարակ հայկական  
 օրորների լավագույններից են, Մի կողմից  
 ունենք Գույումճյանի վկայությունը, թե՛  
 «անտունին Ակնի մեջ պարզ, սովորական,  
 զվարճացնող խաղ մը լէր»։ այն «չէ երգված  
 թեթևորեն և հասարակ առիթներով», այլ  
 «վերապահված է եղեր խիստ հանդիսավոր  
 պարագաներում...»<sup>242</sup>, Եվ մյուս կողմից՝ Գար-  
 բիելյանի արձանագրած փաստերը, որոնց  
 համաձայն, վերևում հիշատակված «Ա՛յ իմ  
 հարստի դատրիկ» անտունին, օրինակ, հար-  
 սի զգեստավորումից հետո երգում է խնամի  
 կանանցից մեկը, այն էլ հետևյալ ինքնատիպ  
 կերպով։ «Եղանակը բաշ է, դաշն և մեղմ, և  
 երգիչը դափ կղարնե նույն ատեն շատ մեղ-  
 մով, մանր մանր մատի արագ հարվածներ  
 տալով»<sup>243</sup>, Երևույթը հասկանալի է դառնում,  
 երբ մտաբերում ենք Մ. Արեղյանի դիտողու-  
 թյուններն այն մասին, թե միջնադարյան  
 գուսանական երգերն ու հայրենները ապրել  
 ու հարատևել են ժողովրդական մի կյանքով  
 ևս, մանավանդ քաղաքացույթյան շրջաննե-  
 բրում։ Անկախ սրանից, սակայն, Ակնում  
 մինչև վերջերս էլ ապրել ու գործել են մեր  
 հին գուսանների տիպի ժողովրդա-պրոֆե-  
 սիոնալ երգիչ-նվագածուներ։ «Զարազու  
 Տղաքը, Հաճի Արիկենց Տղաքը, Թուխմանի  
 Տղաքը և Անկրակենց Միրական Աղբարը  
 մասնավորապես, վարպետ գուսաններու և  
 նվագածուներու... Համբավ ունեին... որոնք  
 կհրավիրվեին երգելու, խաղ կանչելու ու  
 նվագելու հարսանեկան հանդեսներու և այլ  
 ուրախ հարկերու միջոցներուն»<sup>244</sup>, Մրանց  
 բոլորի երկացանկը կազմված է եղել, հիմ-  
 նականում, անտունիներից (վերջիններիս  
 հատուկ ժանրային ողջ բազմազանությամբ  
 հանդերձ), և բոլորի նահապետն հանդիսա-  
 ցել է անտունիի լավագույն կատարողներից  
 «Փյուփիլի» անվամբ մի գուսան։ «Եմ քա-  
 ղած տեղեկություններու համաձայն,— հա-  
 զորդում է Գույումճյանը,— Ակնցի նուագա-  
 ծու երգիչ մը, որուն բուն անունն ու մակա-  
 նունը ինձի անծանոթ են, և որ կանցիներեն  
 կհորջորջվի եղեր «Փյուփիլի» ... ունի եղեր ի  
 ձեռին «դեֆթեր» մը՝ որուն մեջ գրված են  
 Անտունիները։ «Փյուփիլի» իր հետ կպտըտ-  
 ցրեն եղեր այդ դեֆթերը, ամեն անգամ

<sup>227</sup> Ակն և ակնցիք, Փարիզ, 1952, էջ 397.  
<sup>228</sup> Գ. Սովետական, Համով հոտով, Կ. Պոլիս,  
 1894, էջ 295.  
<sup>229</sup> Զ. Ջանիկյան, Հնությունը Ակնա, Թիֆլիս, 1895,  
 էջ 427.  
<sup>240</sup> Ակն և ակնցիք, Փարիզ, 1952, էջ 400.  
<sup>241</sup> Մ. Արեղյան, Հին գուսանական ժողովրդական  
 երգեր, Երևան, 1981, էջ 184—242.

<sup>242</sup> Ակն և ակնցիք (Փարիզ), էջ 411.  
<sup>243</sup> «Անահիտ», 1911, թիվ 3—4, էջ 64.  
<sup>244</sup> Ս. Սոցիլյան, Արևմտահայ աշխարհ, էջ 83.

որ տեղ մը կհրավիրվի նվագելու և երգելու... Քյուփեյի մահեն հետո որո՞ւ ձեռք անցավ այդ թանկագին հավաքածուն... Քանի որ Անտունիի լավագույն ու ամենեն ավելի գնահատված երգիչին մասին խոսեցանք, հիշենք նաև ուրիշ երգիչներ, զեթ անոնց հիշատակը անմոռաց պահելու համար։ Իմ պատանեկության շրջանին, Ակնա լավագույն նվագածու երգիչները կհամարվեին «Չարազու տղաքը», հրեք երիտասարդներ, ամենայն հավանականությամբ Քյուփեյի աշակերտներ և հետևողներ, որոնք իրենց նվագարաններով, սազ, ֆեմինչի և Ղենֆ, հարսնիքներու առթիվ ամենեն փնտոված նվագածուներն էին։ Այս Չարազու տղաքն ալ զոհ պացին համիտյան 96-ի կոտորածներուն։ Ասոնց մահեն հետո, իրենց գործը շարունակողներն եղան «Կարմրկպու տղաքը», որ գեշ-աղեկ կկատարեին իրենց վրա ինկած պարտականությունը<sup>245</sup>։ Այս երգիչ-նվագածուներից րացի, Ակնում ապրելու գործել են նաև աշուղներ, որոնց ստեղծագործությունն ու կատարողական երկացանկը բոլորովին այլ մի հունի մեջ է։ Ակնցի ամենանշանավոր աշուղն է՝ երգիչ, չուփակահար ու սաղ ածող (ինչպես նաև այդ գործիքների վարպետ) Ազարակցյան Թըրմանը<sup>246</sup>, որի ստեղծագործությունները ընդհանուր ճանաչում են գտել ու տարածվել՝ «Թըրման աղզը» անվան տակ, և որը միաժամանակ եղել է նաև Ակնա վերը նկարագրված տիպի գուսաններից մեկը։ Բնիկ ակնցի է Աշուղ Արթինը ևս, ինչպես տեղեկացնում է Տրդատ եպ. Պալլանը<sup>247</sup>, Կան ուրիշներ էլ, որոնք բոլորն էլ հիմնականում հորինել են աշուղական ձևերով թրքալեզու երգեր։ «Առցա քանաստեղծական մասն»-գրում է Ջանիկյանը, — յուրանց եղանակներովն հանդերձ՝ սովորաբար նվագածուաց և քանաստեղծից (շվարա) ծանոթ են, որք են. Դիվան (էրզրում), Քոշմա, Դյուբեյթ, Ջերեմ, Քուրբանի, Ղարիբ, Սեմայի, Դասիթան, Քյոթ-օղլու, Դիվան (Տիարպեքիբ), Յարըմ Յուրֆանի, Թեքնիս, Սաղըր Քոշմա, Քալենդերիի նաև Ղազել, Փեշրեֆ և այլն<sup>248</sup>, Բայց հիմնալի է, որ Ակնա հայ աշուղները ստեղծել են աշուղական ձևերով հայերեն երգեր ևս, «Հայ քանաստեղծից (շայիր կամ

աշուղ) կողմանն ևս րացի րազմաթիվ տաճկերեն շիրերու՝ ինչ ինչ հայերեն Սեմայի կամ այլ երգեր ևս գրված են...»<sup>249</sup>։ Ակնա ժողովրդական և ժողովրդա-պրոֆեսիոնալ բոլոր երգերից ձայնագրված է մի փնչիկ միայն։ Դա՞ 2. Ջանիկյանի նախածնունդով ժամբ աշուղությունը Ակնա-ին կցված և Կոմիտասի վարպետ ձեռքով կատարված «Շար Ակնա ժողովրդական երգերի» ժողովածուն է<sup>250</sup>, որ ունի ճանաչողական րացատիկ նշանակություն ու գեղարվեստական մեծ արժեք, և որպես այդպիսին էլ գնահատված է մեր երաժշտագիտության մեջ<sup>251</sup>։ Ցավալիս լուկայն է, թե սույն երգերը քանակապես շատ քիչ են. ընդամենը 25 անուն, այդ թվում սոսկ մեկ «Օրորը», մեկ «Անտունի» (երկու տարբերակով), մեկ «Քաշ հարեն», մեկ «Ալեկյոզլու» (երեք տարբերակով), ոչ մի հատ «Մենի», որի եղանակը, Գարրիելյանի ասելով՝ «հուշակալոր» է, ու աստիճան թունդ հանող և զգայուն հոգիները հարուստ շարժող... զոր կարծե ձայնագրելու<sup>252</sup> և այլն։ Միսիթարիչ և նույնիսկ հուսադրող պարագաներ եթե կան, այն էլ հետևյալներն են. Նախ՝ հիշյալ ժողովածուի երգերը ընդհանուր առմամբ կապված են Ակնա հարսանիքին կամ որևէ առնչություն ունեն հարսանեկան խրախճանության հետ, ինչպես նշված է գրականության մեջ էլ<sup>253</sup>։ Այնուհետև՝ թեպետ ձայնագրված է միայն մեկ անտունի, րայց գոնե հավաստվում է, թե նրա եղանակը «հիմնապես «Օրորին», «Առավոտուն կելնես», «Եկուր աղվոր աղջիկ» կամ «Քարի լուս, աղվոր, քարի լուսին» եղանակաց կնմանի, թեև ծանր»<sup>254</sup>։ «Ալեկյոզլու» երեք տարբերակով է ձայնագրված ասացիքը, և հայտնի է թե այն իրոք ընդամենը «արտաշարժ 2—3 տեսակ եղանակ ունի», որի մասին «կրթի թե հեղինակն՝ 40 տարի հառաջ՝ հայ կին մէ եղեր»<sup>255</sup>, իսկ Ակնա «հայրենները», Գուլումճյանի վկայությամբ, որպես երգ,

<sup>245</sup> Ակն և ակնցիք (Փարիզ), էջ 412—413։  
<sup>246</sup> Ք. Ազարտյան, Ակն և ակնցիք (Իսթանբուլ), էջ 84։  
<sup>247</sup> Հայ աշուղներ, ժողովրդական երգիչներ և տաղասաններ, հատ. Ա, 1911, էջ 267։  
<sup>248</sup> Հնությունը Ակնա, էջ 455։

<sup>249</sup> Անդ.  
<sup>250</sup> Ձայնագրեց Կոմիտաս վրդ. Գևորգյան, էջ 11-12-ին, 1886 (հայկական ձայնախիշներով. տե՛ս նույնը՝ եվրոպական նիշերով՝ Կոմիտասի «Ազգագրական ժողովածուի» մեջ. Երևան, 1931)։  
<sup>251</sup> Ա. Շամվելդյան, հայ երաժշտության պատմության ակնարկներ, Երևան, 1959, էջ 381—382, X. Кушнарева, Вопросы истории и теории армянской монодической музыки, Ленинград, 1958, стр. 5.  
<sup>252</sup> «Անահիտ», 1911, թիվ 3—4, էջ 65—66։  
<sup>253</sup> Մ. Գուհեյան, Ք. Ազարտյան, Հնդարձակ Տարեգրություն, Երբ շրջան, Գ տարի, 4. Պոլիս, 1928, էջ 81։  
<sup>254</sup> Հ. Ջանիկյան, Հնությունը Ակնա, էջ 428։  
<sup>255</sup> Անդ, էջ 461։

զրեթե նույնն են եղել, ինչ որ «Այակյոզլու-ները»<sup>260</sup>, Ամփոփելով Ակնի վերաբերյալ աս-վելիքը, հարկ է նշել, որ այստեղ անտեսված չի եղել նաև երաժշտա-կրթական գործը: Ակնցիք ունեցել են ազգային երկսեռ այն-պիսի վարժարաններ, ինչպիսիք են՝ Վերի թաղի նարեկյանն ու Վարի թաղի ներսեսյա-նը, և կրթական ու մշակութային այլևայլ կազմակերպություններ ևս: Իպրոցներում դասավանդվել են մեր ազգային երգերը՝ բո-լորին, իսկ եկեղեցական երգեցողությունը՝ «հարմարավորաց»<sup>261</sup>, ինչպես գրում է Ջա-նիկյանը: Ակնում և նրա անմիջական շրջա-պատում պաշտոնավարել են ազգային ու հոգևոր երգ-երաժշտության փորձված ուսուցիչներ և ճանաչված երաժշտագետ-երա-ժշտապետներ՝ Ստեփան Ավադյանն ու Մկրտիչ Գալենտերյանը<sup>262</sup>, Ակնցիք ունեցել են Լրկու փառահեղ եկեղեցիներ՝ Ս. Աստվա-ծածին և Ս. Գևորգ, ու մի քանի սիրված ուխ-տավայրեր, ինչպես՝ Ս. Փրկչի վանքը, Ս. Նրից Մանկանց վանքը, նարեկ կամ Արե-կա վանքը և այլն<sup>263</sup>, «Երգող քաղաք մը եղած է Ակն, հին դարերի իվեր: Ակը, նոր Գողթան մը», — ասում է Մոցիկյանը: «Ակնցիք քնա-կան երգիչներ են... մարդոց ձայնը... բամ-բաշեշտ... կանանց ձայնը փափուկ ու զգալ-նոտ, աղու ու մեղվանուշ և քնարական ե-րանգ մը ունի առհասարակ»<sup>264</sup>, նվ այս բո-լորը գիտակցել են հենց իրենք՝ ակնցիք ևս, ու մեծ ոճիրից հետո հորինել իրենց կարայի երգը. «Ակն ավեր է եղեր, այ սոխակը չի եր-գեր...»<sup>265</sup>:

Բուն հարբերողը նույնպես, իր ավանդա-պահ հայերով, հայախոս ստորիններով, եղի-գիներով, հույներով, քուրդերով ու թուրքե-րով, ազդագրական տեսակետից մի ուշա-գրավ միջավայր է ներկայացրել իրենից: Բայց նրա ժողովրդական բանահյուսությունը հարկ եղած ուշադրության չի արժանացել: «Եփրատի մոտիկ վայրերում, — գրում է Մ. Արեղյանը, — հարբերող, Զմշկածաղ, Ակն, Ա-րարկիթ՝ դեռ պահված է եղել մինչև վերջերս հայերեն բառը «հարեն», «հերեն», ձևերով, երգի իմաստով, և որ գլխավորն է՝ այդ կող-մերում դեռ կենդանի ապրելիս են եղել իրեն

ժողովրդական երգեր շատ հայրեններ, ասն-տունիս անունով: Բայց քաղմաթիվ այդ-պիսի երգեր ժողովրդած և հրատարակված են միայն Ակնում և շրջակա գյուղերում»<sup>266</sup>, Վա-հե Հայկի վկայությամբ՝ «ժողովրդային քա-նահյուսությունը հարբերողի շրջաններում մեջ կարելի չէ փոփոխված վիճակ մը կենդան-յացնեք: Եվ անշուշտ ճիշտ է նա, երբ ասե-լացնում է, թե «մեր կրոնական երգերը, զեղչկական պարերը, պանդուխտի կարոտ-ները, մահվան եղերերգությունները... կրնան շատ հետաքրքրական արժեքներ զուրս բե-րել»<sup>267</sup>, Ս. Մոցիկյանը հարևանցիորեն հի-շատակում է խարբերողների հարսանեկան երգերն ու պարերը, խրախուճանությունց առ-թիվ կատարված «կրոնական և ազգային եր-գերը», «ասնվանց տոնախմբությունները», տաղավարական տոների (Մնունդ, Զատիկ, Վարդավառ, Աստվածածին, Խաչ) ու նաև Կաղանդի և Բարեկենդանի ուրախությունե-րը և այլն<sup>268</sup>: «Խարբերողի ամբողջ շրջանակի դաշտն ունի մոտ 450 գյուղեր, որոնց բնա-կիչներու մեջ Հայք կարևոր բանակ մը կկազ-մեն: ... Թուրք գյուղերի դատ կան նաև խել մը քյուրտ գյուղեր, որոնց բնակիչ քյուրտերը ժամանակին հայ եղած են, և վերջը, բռնու-թյան ներքև մահմեդականացած»<sup>269</sup>, Բայց այդ գյուղերից դուրս հայաբնակների երգ-երաժշտության մասին իսկ շատ քիչ բան գի-տենք: Թ. Հերոյանը հիշատակում է՝ «կախե-րուն վրա երգող դատեմցիներուն ձայնը, պարերը, նոր տարվան և Զատիկվան առթիվ եղած խրախուճանները, երիտասարդներուն գոտեմարտը, Վարդավառը և նավասարդյան ուրիշ խաղեր...»<sup>269</sup>, նշանավոր է եղել Դա-տեմի ս. Աստվածածին վանքը, որը «ստու-գիվ եղած է «մեծահույս ուխտ»<sup>267</sup> և առհա-սարակ խարբերողների սիրված ուխտավայ-րերը, ինչպես, ասենք, «հույսված» Արղմսե-հի կամ Զարդարիչի վանքը<sup>268</sup>, գտնվել են հենց շրջակա գյուղերում: Այնուհետև, Ա. Գ. Պողոսյանը առաջ է բերում Բաղմաշենի ժո-ղովրդական մի շարք երգերի (լաց, հար-սանեկան, համբարձման) գրական տեքստե-րը, ակնարկում է տեղի «Մայա» անուն խա-

<sup>260</sup> Ակն և ակնցիք (Փարիզ), էջ 413:  
<sup>261</sup> Չնութություն Ակն, էջ 41:  
<sup>262</sup> Ք. Ազատյան, Ակն և ակնցիք (Իսթանբուլ), էջ 95:  
<sup>263</sup> Չ. Ոսկյան, Անբաստիայի, հարբերողի, Տիարպե-րի և Տրապիզոնի նահանգներում վանքերը, Վիեննա, 1962, էջ 61—72:  
<sup>264</sup> Արեղյան, աշխարհ, էջ 13—14:  
<sup>265</sup> Անդ, էջ 68:

<sup>266</sup> Մ. Արեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էջ 204:  
<sup>267</sup> Վահե Հայկ, Խարբերող և անոր սովորները, Նյու-Յորք, 1958, էջ 1304:  
<sup>268</sup> Արեղյան, աշխարհ, էջ 266—267:  
<sup>269</sup> Անդ, էջ 253:  
<sup>270</sup> Ք. Հերոյան, Մեր գյուղը Գատեմ, Ռոստոն, 1958, էջ 197:  
<sup>271</sup> Չ. Ոսկյան, էջ 14, աշխ., էջ 89:  
<sup>272</sup> Անդ, էջ 80:

ղերին և այլն<sup>266</sup>, Այստեղ առավել հետաքրքիրն, ըստ երևույթին, այն է, որ դատելով բնրված տեքստերից, Բազմաշենում ևս ժողովրդական որոշ երգեր հայերենից թուրքերենի վերածվելու իրենց ընթացքի մեջ մի ինչ-որ տեղ կանգ են առել: Օրինակ՝ Համբարձման այն երգը, որի Ա տունը՝ թուրքերեն, իսկ Բ, Գ, և Դ տուները՝ հայերեն են<sup>270</sup>, Խարբերդի աշուղների մասին էլ լուր ընդհանուր մի տեղեկություն ունենք, Այն՝ թե նրանք երգել են և հայերեն և թուրքերեն, սեպարեթը թրքախոս գավառ մը չէր հայերուն համար. բայց մեր աշուղներեն շատեր այդ լեզվին ալ տիրապետած են<sup>271</sup>, Խարբերդցի աշուղներից Գ. Լևոնյանը հիշատակում է Արիստակեսին<sup>272</sup>, Հապուտի գյուղում ճանաչված աշուղ է եղել Մարկոս Բոյաջյանը, որը ստարիներով երգած է սազի վրա, երեւելիներու ներկայութեան. հարգված է ամենեւեմ, և որը ի վերջո զո՛հ է գնացել: 1895-ի թրքական բարբարոսութեան<sup>273</sup>, Ճիշտն ասած, եթէ սույն և նման տեղեկությունները պնդի մանրամասն էլ լինեին, ժողովրդական բանահյուսութեան բնագավառում Խարբերդը դարձալ պիտի չկարողանայինք համատեղել մասնավորապես, Ակնի հետ, ինչպես արդեն ակնարկել ենք: Իմանալի է, սակայն, որ Խարբերդն էլ, ի տարբերութիւն Ակնի, եղել է նույնանուն ողջ նահանգի և նույնիսկ առհասարակ գավառի կրթական, և հետևապես, նաև երաժշտա-կրթական կենտրոնը: Երոզուցութուն էր, ինչպես ըսինք,— պնդում է Ճիզմեճյանը,— որ Պոլսեն հետո, գավառին մեջ, իրեն իմացական ու կրթական կեդրոն՝ Խարբերդը ճանչցված էր...<sup>274</sup>, Ե՛հարանակերտ, Ուրֆա, Հալեպ, Արարկիր, Մալաթիա, Սեբաստիա, Ակն, Պիթիս, Վան, Կարին և այլ բազմաթիւ գյուղեր և քաղաքներ որակավոր դաստիարակներ ունեցան Խարբերդեն<sup>275</sup>,— ավելացնում է Վահե Հայկ:

Մի կողմ թողնելով հիշված հետազոտողներն ու շեները, երաժշտա-կրթական տեսակետից Խարբերդի դրական ազդեցութեան մասին կարող ենք դատել և այն փաստերից, որոնք վերաբերում են նրա մոտակա գյուղերին, ասենք՝ Հապուտի գյուղին: «Հապուտի լուսավորչական վարժարանին» «Ճեմարանին» մեջ կալանդվեն հետևյալ դասերը... Շարաթ օրերը՝ քառեր հեղելու մրցում, եկեղեցական շարականներ երգելու,— գպրութեան,— ազգային երգերու և փոխասացութեան պահերը: Հապուտի եկեղեցին ունեցած է կանոնավոր պարաց դաս՝ գլխավորութեամբ Կարապետ և Հովակիմ վարժապետներու: Առանձնապես կհիշվի Պաղտասար Տոնիկյան, որ լավ տիրացու և ձայնավոր եղած է...: Նույնքան գեղաձայն եղած է նաև Տեր Մատթեոսի տղան, որ գյուղին զարաց դասին ղեկավարն էր...: Այսպես, իր նվիրված քահանաներով ու ուղիներով Հապուտի Հայաստանյայց եկեղեցին ծաղկած վիճակ մը ուներ, մինչև որ 1915-ի համայնակուլ եղեռնը, վայրագ թուրքին ձեռքով, եկավ հիմնովին քանդելու զայն...<sup>268</sup>: Հապուտում ջութակի դասեր է տվել՝ կույնջավարտ, ամասնագետ ֆրանսերենի և չուֆակի: Անդրանիկ Բոյաջյանը, մինչև և քսոթվելն ու կախարակ բարձրանալը<sup>276</sup>, Բազմաշենում էլ կատարվել են, մանավանդ 1887-ական թվականներին և ավելի ուշ, մեր ազգային-հայրենասիրական երգերը, որոնցից հիշատակվում է՝ «Իմ հայրենյաց փափուկ հողեր, արլան գետակ են դարձեր» տաղը<sup>277</sup>: Այս փաստերի լուսի տակ առավել խոստուն է դառնում բուն Խարբերդի մասին թեկուզ և ընդհանուր առմամբ ասվածը, թե այնտեղ «Հայք կազմակերպված էին ազգային ու հասարակական տեսակետներով: Ունեին կրթասիրական... և այլ մշակութային ընկերություններ»: Եվ կամ, թե «Հայոց եկեղեցյաց թիվը կհանգեր վեցի... Հայք ունեին հինգ զպրոց: Աստուծոց կարմիր կույնք և Մեղրեի կեդրոնական անվանվածներն ազգային գլխավոր վարժարաններն էին: Սմբատյանը՝ աղջկանց հատուկ վարժարան մըն էր»<sup>278</sup> և այլն: Բայց Խարբերդում եղել են երաժշտա-կրթական հատուկ ծառայություններով աչքի ընկած հաստատություններ ևս, որոնցից գլխավորներն են՝ Մեղրեի ֆրանսիական կույնքը և մանավանդ նշանավոր Եփրատ կույնքը: Ֆրանսիական կույնքի երաժշտական

266 Ա. Գ. Պողոսյան, Բազմաշենի ընդարձակ պատմությունը, Բուստան, 1980, էջ 55, 77, 128, 131, 198—199.  
 270 Անդ, էջ 108—107.  
 271 Վառն Հայկ. Եզգ. աշխ., էջ 1304.  
 272 Գ. Լևոնյան, Հայ աշուղներ, Ալեքսանդրապոլ, 1903, էջ 51.  
 273 Հապուտի գյուղին պատմությունը (Հրատարակություն Հապուտի գյուղի հայրենասիրաց ընկերություն), Բուստան, 1983, էջ 25.  
 274 Մ. Ճիզմեճյան, Խարբերդ և իր գավառները, Յրեզեւ, 1955, էջ 419.  
 275 Վառն Հայկ, Խարբերդ և անոր սակեղեն գաղտը, Նյու-Յորք, 1959, էջ 319.

276 Հապուտի գյուղին պատմությունը, էջ 34 և 29—30.  
 277 Անդ, էջ 26.  
 278 Բազմաշենի ընդարձակ պատմությունը, էջ 146.  
 279 Ս. Մոլիկյան, Արևմտահայ աշխարհ, էջ 381—382.

ոգին մարմնացած է եղել՝ Յրեր Յեր-  
դինանտ անունով հանազված հայասեր  
ու լուսավորչալ մի գործչի անձնավոր-  
ության մեջ: Նա հարբերդում ստեղծել է  
փողային նվագախումբ, ու ձայնագրելով  
հայկական ազգային հայրենասիրական եր-  
գերից ամենասիրվածները, դրանք մշակել է  
նույն նվագախմբի համար: ԵՅրեր Յերդի-  
նանտ ինքն էր որ առաջին անգամ հարբերդ  
Մեզրեի մեջ կազմեց նվագախումբ (Ֆան-  
ֆար) մը, 25—30 հոգիե բաղկացած, Տոնա-  
կան օրերու, մասնավորապես թրքական  
սահմանադրութենեն ետք՝ հրապարակային  
հանդեսներու՝ Յրեր Յերդինանտ կամանակ-  
ցեր իր նվագախումբով: Պարզվում է, որ  
այս երաժիշտը իր նվագախմբով կատարել  
է՝ ժամ փորոտանա, սեղանեցեք տղերք, ժ-  
ճարվորիկա և նման երգերի մշակումները<sup>260</sup>,  
ինչ վերաբերում է Եփրատ կուլիչին, ապա  
այն նախ եղել է հարբերդի և նույնիսկ առ-  
հասարակ գավառի կրթական մեծագույն  
հաստատութուններից մեկը: ԵՂայաստանի  
գավառներուն մեջ մտավորական մեծ կեդ-  
րոն մը եղած է հարբերդ, շնորհիվ գլխավոր-  
աբար Եփրատ կուլիչի<sup>261</sup>, նիստ հատկա-  
նշական մի փաստ է, որ այս կուլիչին ա-  
նունն առաջ եղած էր Արմենիա, որ հետո  
թուրք կառավարության հրամանավր փոխ-  
ված ու կոչված է Եփրատ: Առավել կարևոր-  
ը, սակայն, հետևյալն է, սՄույն Եփրատ կո-  
լիչը կարելի է համարիլ հայկական հաստա-  
տություն մը, իրոք: հարբերդու հայ դաշ-  
տաշխարհին ու շրջակա մտավոր ու հեռա-  
վոր քաղաքներու լուսաբաշխ փարոսն էր ա-  
նիկա, և սերունդներ կրթած: ... Մենք հայ-  
կական անվանեցինք այդ պատվական հաս-  
տատությունը, զի ոչ միայն անոր մեջ պաշ-  
տանավարող ամերիկացի վարիչները հայա-  
սեր մարդիկ էին, այլ նաև նույն հարկին տակ  
դասախոսությունք հայերեն լեզվով կատար-

ված, և դասախոսող ուսուցչապետներն ալ,  
առ հասարակ, եղած են հայ...<sup>262</sup>, Եփրատ  
կուլիչը ունեցել է տղաների և աղջիկների եր-  
կու հարկաբաժիններ, ու երկուսի մեջ էլ ե-  
րաժշտությունը արժանացել է ամենալուրջ  
վերաբերմունքի: ԵՅրաժշտությունը երկու  
հարկաբաժիններուն մեջ ալ առաջ կտարվե-  
ր առանձին ուշադրությամբ: Աղջիկներ՝ երգի,  
դաշնակի կամ երգեհոնի դասեր կստանային  
կամուրջին և համախ կունենային երգահանդես-  
ներ և խմբական երգեր: Առանձին դաս առ-  
նելու շանքեր ալ կըլլային, տաղանդ ունեցող  
ուսանողուհիներ բավական հառաջդիմու-  
թյուն կցուցնեին...: Մանչերու հարկաբաժ-  
նին մեջ ալ երաժշտական դասերը առաջ  
կտարվեին: Ավելի գործնական երաժշտու-  
թյան հետևողներ շատ կային, որոնք իրենց  
նվագախումբը ունեին, առաջնորդությամբ  
Անդրեաս Տեր-Ղազարյանի և Խաչ. Պուճի-  
քանյանի: Երաժշտական գործիքներուն մեջ  
կային ջութակ, մենդոլին, դաշնակ, քանոն,  
տրմպակ, և այլն, ընդամենը 20—25 հոգի...:  
Այս նվագախումբը նորեր կառնեք իր մեջ...:  
Մինչև վերջին տարին պահեց իր օգտակար  
ծառայությունը և հանդիսավոր օրերու և պա-  
րագաներու՝ երաժշտական վայելքներ հրամ-  
ցուց հանրության, մինչև որ վայրենի թաթը  
հասավ և փշրեց ջութակն ալ, ջութակահարն  
ալ...<sup>263</sup>: Այդ սփռվածներին մեջ առնվազն ե-  
ղել են և նոր հիշատակված հաշտուր Պու-  
ճիքանյանը, ըստ Սոցիկյանի վկայության<sup>264</sup>,  
և Գևորգ Քելեջյան անուն հայ զարգացած մի  
երաժշտագետ, որի մասին ևս մի-երկու տող  
բան գտանք Ապրիլի 11-ի հուշարձանում:  
Այս վերջին աղբյուրի համաձայն, Գևորգ Քե-  
լեջյանը փաստաբան է տեղացի (իմա խար-  
բերդցի), 40 տարու, նաև ուսուցիչ, երաժշ-  
տագետ...<sup>265</sup>:

<sup>260</sup> Վահե Հայկ, հարբերդ և անոր սպեղեն դաշտը,  
Նյու-Յորք, 1959, էջ 415 (այստեղ, էջ 416-ում, կա մի  
նկար էլ, որից երևում է, որ նույն Յրեր Յերդինանտը  
ղեկավարել է մի լարային նվագախումբ ևս):  
<sup>261</sup> Ս. Սոցիկյան, Արևմտահայ աշխարհ, էջ 270.

<sup>262</sup> Անդ, էջ 259.  
<sup>263</sup> Պահե Հայկ, հարբերդ և անոր սպեղեն դաշտը,  
էջ 333—334 (այստեղ, էջ 334, տե՛ս նաև հիշյալ նվա-  
գախմբի նկարը):  
<sup>264</sup> Արևմտահայ աշխարհ, էջ 273.  
<sup>265</sup> Հուշարձան (Ապրիլ տասնմեկի), Կ. Պոլիս,  
1919, էջ 59.



## ԳԵՎՈՐԳ ԱԲԳԱՐՅԱՆ

### «ԾԻՆՈՒՄՆ ՏԱՃԱՐԻՆ ՀՈՒՓՍԻՄԵԱՅ»

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1912 ձեռագրում (ընդօրինակված 1220 թ.), ինչպես նաև 1456 թ. ընդօրինակված № 993 ձեռագրում պահպանվել է Հռիփսիմեհին և նրա անունը կրող տաճարին վերաբերող մի հատված, որի մասին վաստակավոր հայագետ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը գրում է. «Այս վկայաբանության և Սեբեոսի մեջ նկատվում է գրական մեծ առնչություն, պատմական մասով՝ բառացի, գրեթե նույն: Ուշադրության արդյունք է նաև, որ կցված է Լուսավորչի վկայաբանությանը»:

Այս հատվածի բաղդատությունը «Սեբեոսի Պատմության» համապատասխան հատվածի հետ՝ իրավունք է տալիս ենթադրելու, որ հատվածն սկզբնապես գտնվել է «Սեբեոսի Պատմության» կազմում, ապա այն տեղից քաղված և ընդօրինակված է այլ ձեռագրերում, որպես Հռիփսիմեհի նշխարներից վերաբերող առանձին հատված:

Կարելի էր նաև հակառակ ենթադրությունը հանգել, այսինքն՝ հենց սկզբից գոյություն է ունեցել որպես առանձին հորինված մատենագրական միավոր և հետո է մտել «Սեբեոսի Պատմության» կազմի մեջ: Այսպիսի ենթադրության համար, սակայն, հիմքեր չկան, որովհետև մի շարք փաստեր խոսում են այն մասին, որ հատվածը հանդի-

սանում է «Սեբեոսի Պատմության» հարագատ մասը և հորինված է նույն հեղինակի կողմից:

Այդ փաստերն են: Առաջին, հատվածը «Սեբեոսի Պատմության» մեջ առնչվում է իրեն նախորդող բնագրի հետ: Երկրորդ էլ նկատված են Կոմիտաս կաթողիկոսի գործերին: Երկրորդ, «Սեբեոսի Պատմության» հեղինակը վեցերորդ դարի վերջին տասնամյակից սկսած մինչև հաջորդ դարի երկրորդ տասնամյակի ընթացքում տեղի ունեցած դեպքերը նշում է պարսից խոսրով Ալպըրվեզ թագավորի իշխան տարիների ժամանակագրական համադրությամբ: Այդպես է նաև քննարկվող հատվածը, որն սկսվում է այսպես. «Եւ եղև յամի ԻԸ-երորդի թագաւորութեանն Ապրուեզ խոսրովու քակեաց կաթողիկոսն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքին»: Երրորդ, հատվածում օգտագործված է Ագաթանգեղոսի մի դարձվածք, որի կեսը գտնում ենք «Սեբեոսի Պատմություն»-ից առանձին կատարված ընդօրինակություններում, իսկ մյուս կեսը պահպանվել է այդ Պատմությունը պարունակող ձեռագրերում:

«Սեբեոսի Պատմության» հնագույն ձեռագրում հատվածը նույնիսկ խորագիր չունի և նախորդ բնագրի հետ միաձուլ է: Մյուս ձեռագրերում և տպագիր հրատարակություններում հատվածի խորագիրն է. «Շինումն տաճարին Հռիփսիմեայ»: Մաշտոցի Մատենադարանի № 1912 ձեռագրում հատվածը ունի հետևյալ խորագիրը. «Գիւտ նշխարաց Սրբոյն Հռիփսիմեայ», իսկ № 999 ձեռագրում՝ «Յաղագս գիտի նշխարաց սրբոյն Հռիփսիմեայ կուսին»:

<sup>1</sup> Գարեգին Ա. կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց. Հ. Ա., Անթիլիաս, 1851, էջ 82:

<sup>2</sup> Սեբեոսի Եպիսկոպոսի Պատմութիւն: Բաղդատութեամբ ձեռագրաց, հանդիքձ առաջաբանի եւ ծանօթագրութեամբք ի ձեռն Մաղխասեանց, Երևան, 1898, էջ 89:

Առանձին ընդօրինակված հատվածներում քացակայում են «Սեբեոսի Պատմության» ձեռագրերում պահպանված երկու բնագրական միավոր:

Առաջինն է «երից հաւատարմաց երրորդ մատանեաք» արտահայտությունը, որը վրիպել է ընդօրինակող գրիչների աչքից հետևյալ պատճառով: Արտահայտությունից առաջ և հետո բնագրում հանդիպում է «մարգարիտ» բառը: Ընդօրինակող գրիչն սկզբի «մարգարիտ»-ն ընդօրինակելուց հետո կրկին բնագրին նայելիս տեսել է վերջին «մարգարիտ»-ը և չնկատելով, որ դա իր ընդօրինակածը չէ, շարունակել է ընդօրինակել այդ «մարգարիտ»-ից հետո եկող բառերը, քաց թողնելով առաջին և վերջին «մարգարիտ»-ների միջև գտնվող «երից հաւատարմաց երրորդ մատանեաք» արտահայտությունը: Մեր ասածն ակնհայտ դարձնելու համար քերևքը բնագիրը, որն ընդօրինակվող ձեռագրում ունեցել է հավանաբար հետևյալ տեսքը՝

- 1 . . . . . Եւ կըն-
- 2 քեաց իրով ևս մատանեալ,
- 3 որ արժանի իսկ էր կըն-
- 4 քել զայսպիսի մարգարիտ
- 5 երից հաւատարմաց երրորդ
- 6 մատանեաք: Ով մարգարիտ,
- 7 որ ոչ ծովածին, այլ մար-
- 8 գարիտ, որ ծնեալ ի թագա-
- 9 տրական ազգէ և սնեալ
- 10 ի գիրկս սրբութեան և նու-
- 11 իրեալ Աստուծոյ...

№ 1912 և 993 ձեռագրերում քաց են թողնելով 5-րդ և 6-րդ տողերը, որի հետևանքով 4-րդ տողից աճմիջապես հետո հաջորդում է 7-րդ տողը.

- 1 . . . . . Եւ կըն-
- 2 քեաց իրով ևս մատանեալ,
- 3 որ արժանի իսկ էր կըն-
- 4 քել զայսպիսի մարգարիտ
- ...
- 7 որ ոչ ծովածին, այլ մար-
- 8 գարիտ, որ ծնեալ ի թագա-
- 9 տրական ազգէ և սնեալ
- 10 ի գիրկս սրբութեան և նու-
- 11 իրեալ Աստուծոյ...

Մարգարիտն այնպիսին էր, որ արժանի էր կնքել երեք կնիքով (Գրիգոր Լուսավորչի, Սահակ և Կոսմիտաս կաթողիկոսների): Կորած բառերի հետևանքով աճհատ է մնացել, թե ինչպես էր արժանի կնքել այդ մարգարիտը:

«Սեբեոսի Պատմության» ձեռագրերից դուրս ընդօրինակված հատվածում պակասող երկրորդ տեղեկությունը հետևյալն է. «վերացոյց և զփայտայարկս սրբոյ կաթողիկէին, նորոգեաց և զխախտտ որմոյն. շի-

նեաց զքարայարկս: Այս եղև յամս Յովհաննական վանաց երիցու սրբոյ կաթողիկէին»: Այս կտորը, որը գտնում ենք «Սեբեոսի Պատմությունում» և որը պակասում է առանձին ընդօրինակված բնագրում, ինչպես տեսնում ենք, չի վերաբերում Հռիփսիմի մեծ ճշխարաց գյուտին, այդ պատճառով էլ դուրս է մնացել բնագրից: Ասացինք, որ առանձին ընդօրինակված հատվածը ի տարբերություն «Սեբեոսի Պատմության» (որտեղ հատվածն ունի «Ծինումն տաճարին Հռիփսիմեայ» խորագիրը) վերնագրված է «Գիտմշխարաց սրբոյն Հռիփսիմեայ», ուրեմն այս վերնագրի տակ սլետք է գետեղվելին միայն Հռիփսիմեի մշխարհի գյուտին վերաբերող նյութերը: Եվ քանի որ մեր նշած տեղեկությունը չի վերաբերում դրան, այդ պատճառով էլ դուրս է մնացել բնագրից:

«Սեբեոսի Պատմությունից» առանձին ընդօրինակված ձեռագրերում, քննարկվող գլուխը միաժամանակ ունի բավական ընդարձակ հավելումներ, որ չենք գտնում «Սեբեոսի Պատմության» մեզ հասած բնագրում: Այդ հավելումների հիման վրա «Սեբեոսի Պատմության» նախնական բնագիրը պետք է վերականգնել ստորև քերվող ձևով:

Բնագիրը վերականգնում ենք տպագիր բնագրի, Մաշտոցի Մատենադարանի № 1912 (թ. 175բ—178ա, արևելյան հից բորոգիր) և № 993 (թ. 511բ, բորոգիր, ընդօրինակված 1456 թ.) ձեռագրերի հիման վրա: «Սեբեոսի Պատմության» ձեռագրերում և տպագրերում քացակայող հատվածները ցույց տալու համար ընդգծում ենք այդ մասերը, որոնք վերականգնում ենք նշված ձեռագրերի միջոցով: № 1912 ձեռագիրը պայմանականորեն նշում ենք A, № 993-ը՝ B, տպագիրը՝ C տառերով:

**Ծինումն տաճարին Հռիփսիմեայ՝**

Եւ եղև յամի ԻԸ-երորդի<sup>2</sup> թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովու քակեաց կաթողիկոսն Կոսմիտաս գմատուոն սրբոյն Հռիփսիմեայ՝ ի վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած՝ և մթին էր շինուածն<sup>3</sup>, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց կաթողիկոսի, որդւոյն սրբոյ Ներսիսի<sup>4</sup>:

Արդ՝ մինչդեռ քակէին գորմն մատրանն պատահեցան՝ յանկարծակի՝ զանձին<sup>5</sup> ծածկելոյ յագարակի ըստ տէրու՝ նեան<sup>6</sup> ձայնին, որ էր գանձ թղորաւէր, յուսարո<sup>11</sup> և<sup>12</sup> չքնաղագիտ<sup>13</sup> արքունական մարգարիտն<sup>14</sup>, այսինքն կուսական մարմին<sup>15</sup> սրբոյ տիկնոջն Հռիփսիմեայ<sup>16</sup>: Եւ քանզի անդամ անդամ յաւշեցին զնա՝ յաղեալ ի միմեանս<sup>17</sup> գյաւշուած սնդա-

մոցն մեծի ճարտարապետին երանելոյն քահանայապետին սրբոյն Գրիգորի մերոյ յուսառոշի: Եւ կայր գլուխն հերովն հանդերձ ի վերայ պարանոցին իւրոյ և եղեալ անդեալ<sup>16</sup>: Նոյնպէս եւ զքազուկսն ուտովքն հանդերձ եւ զքարձսն եւ բոլորովին իսկ զամենայն փորտտին, ի ներքոյ կողմիցն ամփոփեալ, եւ յարմարեալ զամենայն անդամսն զստորածասցն<sup>17</sup> ըստ կարգի իւրում: Եւ վար արկեալ զամենայն<sup>20</sup> վերուստ ի վայր չուանագ: Եվ կային թաթը ձեռացն եւ մատուցք<sup>21</sup> ի վերայ լանջացն զարէն մեռելոյ: Նոյնպէս եւ ծունկը սրբոյն եւ ոտքն եւ մատուցքն ոտիցն եւ զամենայն մարմինն երիզապընդդեա<sup>22</sup> կտաւաք: Հանդերձ նորուն պատառոտուն հանդերձին<sup>23</sup> վար արկեալ վերուստ մինչեւ<sup>24</sup> ի վայր: Եւ կնքեալ մատանեաւ երանելի սրբոյն Գրիգորի<sup>25</sup> եւ մատանեաւ երանելոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի<sup>26</sup>, զոր նա ոչ համարձակեցաւ բանալ<sup>27</sup>: Եւ կնքեաց<sup>28</sup> իւրով եւս մատանեաւ, որ արձանի իսկ էր և ի դէպ էր<sup>29</sup> կնքել զայսպիսի<sup>30</sup> մարգարիտ երից հատարմաց երրորդ մատանեալք<sup>31</sup>:

Ով մարգարիտ<sup>32</sup>, որ ոչ ծովածին, այլ մարգարիտ, որ ծնեալ<sup>33</sup> թագաւորական երանաց<sup>34</sup> և սնեալ ի գիրկս սրբութեան և նոյրեալ Աստուծոյ:

Ով մարգարիտ, որ ոչ ի թագս թագաւորաց<sup>35</sup> երկրի յարիմեաւ փայլիս, այլ ի բոլորս փայլակնացալս պսակին Աստուծոյ, կազմեալ յարիմիս նմա:

Ով<sup>36</sup> մարգարիտ, զոր ոչ արծեն տիեզերքն ամենայն եւ ոչ բովանդակին ի գինս քո ամենայն զանձը թագաւորաց:

Ով<sup>37</sup> մարգարիտ, որ առտել եւս պատուականագոյն քան զամենայն ականս պատուականս, որ ի Հնդկային աշխարհին. եւ<sup>38</sup> իբրեւ զկաւ համարեալ է առաջի քո տպագիտնն եթովպացոց<sup>39</sup>:

Ով<sup>40</sup> մարգարիտ պատուական, որ առտել զեղեցկագոյն, քան զվարսագեղ Արուսեակն<sup>41</sup> ծագեալ պայծառանայ<sup>42</sup> յերկրի հանդերձ բազմութեան դասոց<sup>43</sup> առաւատին<sup>44</sup> աստեղացն<sup>45</sup>:

Ով<sup>46</sup> մարգարիտ, որ<sup>47</sup> զարէն բազմութեան<sup>48</sup> եզիպտական ցորենոյն յըշտեմարանս ամբարեալ, կերակրես ի ժամանակի սովոյս այսօրիկ գերկիրս<sup>49</sup> Թորգոմայ<sup>50</sup>: Տախտակ<sup>51</sup> լուսեղէն, նկարեաւ մատամբն Աստուծոյ եւ եղեալ ի տապանակի<sup>52</sup> սրբութեան, որում փակագէտից<sup>53</sup> տեսանել՝ զքեզ արդարք<sup>54</sup> և խանդակաթ էր ի սէր քոյ երանելին Կոմիտաս<sup>55</sup>:

Եւ չտի հասակի երանեալ կուսից էր ինն թիզ եւ առ չորս մատունս<sup>56</sup>: Եւ ամենայն երկիր կողմսնցն հիւսիսային դր-

ղըրդեալ<sup>57</sup> գային յերկրպագութիւն<sup>58</sup>. Եւ բազում ախտածեսաց լինէր բժշկութիւն ամենայն ցաւոց<sup>59</sup>:

Շինեաց զեկեղեցին, և զերանելին եթող ի բացեայ վասն զիջութեան<sup>60</sup> որմն<sup>61</sup>, մինչև ցամաքել կրոյն առ վայր մի գայն պատեհագոյն համարեալ: Եւ<sup>62</sup> ալպա ամփոփեալ ծողովեաց<sup>63</sup> ի կայեանս իւր<sup>64</sup>: Վերացոյց և զփայտալարկս<sup>65</sup> սրբոյ կաթողիկէից. նորոգեաց և զխախտստ որմոյն, շինեաց զքարալարկսն: Ասւ եղև յամբս Յովհաննական վանաց երիցոս սրբոյ կաթողիկէին<sup>66</sup>:

«Սեբեոսի Պատմության» հեղինակն այս գլխում կրկնել է Ազարթանգեղոսի, «իբրև զմարգարիտս պատուականս գրոյորասէրն, գրուստորն, զչքնաղագիտն» արտահայտության վերջին երեք բառերը, որոնցից առաջինը (բոլորասէր) պահպանվել է «Սեբեոսի Պատմության» ձեռագրերից անջատ կատարված ընդօրինակություններում, իսկ նրան հաջորդող երկու բառը զտնտն ենք նաև Պատմությունն ընդգրկող ձեռագրերում: Այսպիսով «բոլորասէր» բառը միաժամանակ հանդիսանում է առանձին ձեռագրերում և «Սեբեոսի Պատմությունում» պահպանված բնագրերը շաղկապող մի բառ և ցույց է տալիս, որ դրանք սկզբնապես հարազատ մասերն են միևնույն բնագրի և կազմում են իրար շարունակությունը:

«Սեբեոսի Պատմության» ձեռագրերում բացակայող մասերի հետևանքով տպագիր բնագրի որոշ հատվածներ անհասկանալի են մնացել: Այսպես, օրինակ, ըստ տպագիր բնագրի՝ կնքվել է Հոփսիսմեի անդամագատված մարմինը: Այնինչ մեր վերականգնած բնագրից երևում է, որ մարմինը հավաքվել և երիզապատյալ է եղել կտավով և ալպա նոր կնքվել է կտավը և ոչ՝ մարմինը:

Տպագիր բնագրում արտառոց է նաև միայն մեկ անգամ հանդիպող «ով մարգարիտ» ոգեշունչ գովքը: Դա չի համապատասխանում մնացած բնագրին, որը արձակ մի շարադրություն է, իսկ վերականգնվող մասում հինգ անգամ կրկնվում են Հոփսիսմեին ուղղված «Ով մարգարիտ»-ները, որոնց կազմում նոր իր բնական տեսքն է ստանում տպագիր բնագրի «ով մարգարիտը»:

Հրատարակվող հատվածի միջոցով հասկանալի է դառնում նաև Կոմիտաս կաթողիկոսին վերաբերող այս արտահայտությունը. «Որ նա ոչ համարձակեցաւ բանալ»:

Տպագիր բնագրում որոշակիորեն հայտնի չէ, թե ինչին է վերաբերում այս պատմությունը: Իսկ հրատարակվող բնագրում, ինչ-

պես տեսանք. հայտնվում է, որ Հոփսիմեի անդամագատված մարմինը Գրիգոր Լուսավորչի կույմից միացված և երիզապնդված է եղել կտավով, որը և Կոմիտասը «ոչ համարձակեցա՜ր բանալ»:

Այսպիսով ակնհայտ է դառնում տպագիր և հրատարակվող բնագրերի նույնությունը:

Այժմ ներկայացնենք գրչական տարբերքերվածքները, որոնք տպագրական դժվարությունների պատճառով հնարավոր չէ զետեղել բնագրի հետ զուգընթաց:

Տ Ա Ր Ը Ն Թ Ե Ր Ծ Վ Ա Մ Ն Ե Ր

<sup>1</sup> A Գիտ նշխարաց սրբոյն Հոփսիմեայ B Յուզագս Գիտի նշխարաց սրբոյն Հոփսիմեայ կուսին

<sup>2</sup> AB շսաներորդի ութերորդի (չիք թագաւորութեանն)

<sup>3</sup> C Կոմիտաս զմատուռ Հոփսիմեի

<sup>4</sup> A ցած էր B նստուկ էր (փխ. ցած)

<sup>5</sup> AB և մթին շինուածն

<sup>6</sup> AB շինեալ էր ի Սահակայ կաթողիկոսէն (փխ. շինեալ էր սրբոյն Սահակայ Ռայրապետի Հայոց կաթողիկոսի, որոյտ սրբոյն Ներսիսի):

<sup>7</sup> A հանդիպեալ պատահեցան B պատահեցին

<sup>8</sup> AB չիք յանկարհակի

<sup>9</sup> B գանձի C չիք գանձին ծածկելոյ և շարունակությունը մինչև «գանձ քյորուսէր» բառերը ներառելով:

<sup>10</sup> B տրումեան

<sup>11</sup> AB լուսաւորիչ

<sup>12</sup> AB չիք և

<sup>13</sup> A չքնադագեղ

<sup>14</sup> AB մարգարտին

<sup>15</sup> AB մարմնոյն

<sup>16</sup> C Հոփսիմեի

<sup>17</sup> C լաւշեալ ի միմեանց C չիք զյաւշուած անդամոցն մեծի ճարտարապետին և շարունակությունը մինչև վար արկեալ վերուստ մինչ ի վայր բառերը ներառելով:

<sup>18</sup> A պնդեալ և եղեալ:

<sup>19</sup> B չիք զառդուածացն

<sup>20</sup> B վայր առեալ զամենայնն

<sup>21</sup> B մատուցց

<sup>22</sup> A երիզապատեալ

<sup>23</sup> B հանդերձի:

<sup>24</sup> A մինչ

<sup>25</sup> C Եւ երանելի սրբոյն Գրիգորի կնքեալ մատանեալ իւրով AB մատանեալ (չիք երանելի) սրբոյն

<sup>26</sup> AB երանելոյն սրբոյն Սահակայ կաթողիկոսի C կաթողիկոսի

<sup>27</sup> AB ոչ (չիք նա) համարձակեցաւ (B սա) բանալ

<sup>28</sup> C եւ կնքեալ (փխ. կնքեաց)

<sup>29</sup> AB չիք որ AB իսկ (չիք էր) B դէպ (ոչ՝ ի դէպ)

C չիք և ի դէպ էր

<sup>30</sup> B լայնպիսի

<sup>31</sup> AB չիք երից հատարմանց երրորդ մատանեալ

<sup>32</sup> AB չիք ով մարգարիտ

<sup>33</sup> AB ճնեալ (չիք որ)

<sup>34</sup> C ազգէ (փխ. երանաց)

<sup>35</sup> C չիք ով մարգարիտ, որ ոչ ի թագս թագաւորաց... մինչև ի տապանակի սրբութեան բառերը ներառելով:

<sup>36</sup> A ո (փխ. ուլ)

<sup>37</sup> A ո (փխ. ուլ)

<sup>38</sup> A չիք եւ

<sup>39</sup> A հոթվպացի

<sup>40</sup> A ո (փխ. ով)

<sup>41</sup> A Արասեակն

<sup>42</sup> B պայծառանաւ

<sup>43</sup> B դասուցն

<sup>44</sup> A առ առաւաւտին

<sup>45</sup> B աստեղաց

<sup>46</sup> A ո (փխ. ով)

<sup>47</sup> A չիք որ

<sup>48</sup> B քաղմութեանց

<sup>49</sup> A զերկիր

<sup>50</sup> B Թորգոմեալ

<sup>51</sup> B տախտակդ

<sup>52</sup> A ի տախտակի (փխ. ի տապանակի)

<sup>53</sup> C ցանկացեալ էին (փխ. փափազէին)

<sup>54</sup> A արդարքն

<sup>55</sup> C Կոմիտաս

<sup>56</sup> C չափ հասակի էր երանելոյն ինն թգաւ եւ չորս մատուն A երանելոյն Հոփսիմեալ (փխ. երանեալ կուսին) A եւ չորս (չիք առ)

<sup>57</sup> C Եւ դրդեալ ամենայն կողմն հիւսիսոյ B դլորդեալ

<sup>58</sup> C գայր յերկրպագութիւն

<sup>59</sup> AB բժշկութիւնք լինէին (փխ. լինէր բժշկութիւն ամենայն ցաւոց)

<sup>60</sup> A խոնաւութեան (փխ. գիշութեան)

<sup>61</sup> C որմոցն

<sup>62</sup> C չիք առ վայր մի գայն պատեհագոյն համարեալ: Եւ

<sup>63</sup> C ամփոփեցաւ (փխ. ամփոփեալ ժողովեաց) B անփոփեալ

<sup>64</sup> A ի կայէանս իւր արտահայտութեանը հաջորդում է գրչի հիշատակարանը՝ «Փառստորելով զհայր եւ զորդի եւ զսուրբ եզին այժմ եւ միշտ եւ յափտեանս յափտեցինք: Ամէն: B փառստորելով զամենատուրք զերրորդութիւն յափտեանս յափտեցինք:

<sup>65</sup> AB չիք վերացոյց եւ զփառայարկս... մինչև գլխի վերջը:



## ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

**Երևանի 2750-ամյակը.**—Այս տարի մեծ հանդիսավորությամբ պիտի տոնվի մեր գեղատեսիլ մայրաքաղաքի՝ Երևանի հիմնադրման 2750-ամյակը: Երբ-վանի հիմքն է դրել ուրարտական հզոր թագավորի՝ Մենուայի հզոր որդի Արգիշտի Ա-ը, 782 թվականին մ. թ. ա.: Նա գրավելով Արաքս գետի ձախ հովիտը, այնտեղ կառուցել է Էրեբունի քերդ-ամրոցը, որը հանդիսանում էր Ուրարտուի հյուսիս-արևելյան սահմանները պաշտպանող ամենահզոր ռազմակայանը: Ահավասիկ այն արձանագրությունը, որը քերդի կառուցումից հետո Արգիշտին կանգնեցրել է այնտեղ. «Նաղդյան մեծությամբ Արգիշտին Մենուայի այս քիրդը հողակապ կառուցեց, կոչեցի քաղաք Էրեբունի անվամբ, որպես հիայնա երկրների փառք, թշնամի երկրներից ի սարսափ»:

Երևանի 2750-ամյակը արժանավայել կերպով նշելու համար՝ Հայկական ՍՍՀ Միջինստրաների սովետի որոշմամբ կազմվել է մասնավոր հանձնաժողով:

Հանդիսությունը տեղի է ունենալու 1888 թվականի երկրորդ կեսին:

**«Ջեմիրե» օպերայի վերանուսերը.**—«Ջեմիրե» օպերան Տ. Չուխաջյանի բարձրարվեստ ստեղծագործություններից մեկն է, սակայն այն մինչև այժմ չէր ներկայացվել երաժշտաբեմի հայ ունկնդրին: Մեկ անգամ միայն այն կատարվել է Պոլսում, 1881 թվականին ֆրանսիական խմբերից մեկի կատարմամբ:

Եվ ահա շուրջ 80 տարիներ լռելուց հետո, այն ծանոթացվեց Երևանի երաժշտաբեմերին: «Ջեմիրե» օպերան Երևանի ռադիոյով կատարեցին Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախումբը, օպերային թատրոնի երգչախումբը՝ դիրիժոր՝ վաստակավոր արտիստ Յուրի Գալստյանի ղեկավարությամբ: Գլխավոր դերերը երգեցին ՍՍՀՄ ժողովրդական արտիստներ Գոհար Գասպարյանը, Նար Հովհաննիսյանը, հանրապետության ժողովրդական արտիստներ Գոհար Գալստյանը, Միհրան Երկաթը, Արշավիր Կարապետյանը, վաստակավոր արտիստու-

հի Իզարեյա Ադինյանը, արտիստ Տիգրան Լևոնյանը: Ռադիոներկայացման մասը կատարեցին Վարդուհի Վարդերեսյանը, Գեղամ Հարությունյանը, Գարուշ Խաժակյանը, Սոս Սարգսյանը, Հրաչուհի Զինգյանը: Օպերան կես լուրջ կոմիկական ստեղծագործություն է: Բովանդակության հիմքում ընկած է արաբական մի հեքիաթ: Գործողությունը կատարվում է Արարիսյում:

**Նորահայտ հայատառ ումիներեն ձեռագիր.**—Ռումինիայի Գեռլա քաղաքում վերջերս ումից հայագետ Յոն Պոպսեկուն հայտնաբերել է հայատառ ումիներեն մի ձեռագիր: Հարգելի հայագետը հրատարակել է նաև մի ուսումնասիրություն՝ նվիրված այդ արժեքավոր ձեռագրին: Չորս էջանոց այդ ձեռագիր-պատահիկում զետեղված չափածո գործերի վերնագրերը գրված են հայերեն. «Երգ Օլաեսնակ (իմա՝ մուղավացիների)» մարմնոյ և արեան Տեառն:

Ձեռագիրը ունի լեզվաբանական-գրականագիտական և ֆոլկլորային մեծ արժեք:

Գեռլա քաղաքը հիմնադրվել է 1700 թվականին և պատմությանը հայտնի է «Արմենոպոլիս» կամ «Արմենիքստրադ» անունով: Գաղութի կյանքը եղել է շատ աշխույժ: Այստեղ զարգացած են եղել արհեստագործությունն ու արվեստները: Գործել են նաև հայկական հեղինակավոր դպրոցներ և մի շարք դեմքեր:

Գեռլայում այժմ պահվում են շատ հարուստ և արժեքավոր ձեռագրեր, որոնց կողքին՝ 1848 թ. Արիմոն գրված մի Ավետարան: Վերոհիշյալ նորահայտ ձեռագիր պատահիկը մի մասն է ֆոլկլորային և կրոնական երգերի մի ժողովածուի՝ գրված 1718 թ.: Գործն է մի հայ գրչագրի, որը տիրապետել է նաև ումիներեն և հունգարերեն լեզուներին:

Այս ձեռագիրը գալիս է մեկ անգամ ևս մեզ համոզելու, որ Մեարոպյան գրերը կատարելապես արտահայտում են հու ումիներենի հնչյունային նրբությունները:

Հին մատենագիրների հրատարակություն.—Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի մի շարք գիտությունաց թվեցածուներ անցյալ տարի լույս են ընծայվել Մաայի Նչեցու «Լեռլուծութիւն քերականութեան», Վապիթ Աննադի «Մեկնութիւն ի վերլուծական Արիւտտեղի» սշխատությունները, «Պատմութիւն Փարեզի և Վեհնայի», «Պատմութիւն Վեհնտիկ քաղաքի» միջնադարյան սիրովիպերը և այլն:

Լույս են տեսել նաև «Միջնադարյան Հայաստանի բնութագրական հուշարձանները» գիրքը և «Բանբեր Մատենադարանի» տարեգրքի 8-րդ հատորը:

Գառնիի թանգարանը.—Գառնիի ամրոցը և հետազոտական տանը արտո Հայաստանի այն պատմա-հնագիտական հուշարձաններից է, որտեղ տանյակ հազարավոր գրասաղքիկներ են այցելում և հիանում մ. թ. ա. Ա դարու կոթողացած այդ կառույցների ամրոցությունը: Եվ այսօր մեր հայրենի կառավարությունը իր հատուկ ուշադրությունը է քննում Գառնիի այդ հնությունների վրա՝ ստեղծելու համար այնտեղ մի շարք դյուրություններ, որոնք հնարավորության կտան այցելուներին ավելի կանոնավոր և մանրամասն պատկերացում ունենալու թերդի մասին, և կապահովվի նրա պահպանությունը:

Այդ նպատակով պիտի կառուցվի այստեղ միակարկ մի շինություն, որը կծառայի որպես թանգարան: Ծեցքը կունենա իր ցուցասրահը 220 ք/մ մակերեսով: Այստեղ կպահպանվեն տարբեր շինությունների մանրամասներ, պեղումների միջոցով հայտնաբերված հնագիտական առարկաներ, որոնք կցուցադրվեն այցելուներին:

Ծեցքը կունենա նաև իր դասախոսությունների 100 տեղանոց սրահը՝ ցուցադրելու համար կարճամետրաժ գիտական կինոնկարներ, և նյութերի մշակման աշխատասենյակներ ու պահոցներ:

Ամրոցում կկառուցվեն նաև անցուղիներ, և մոտքից ձախ կդրվի 2 մետր բարձրությամբ մետաղե ցանկապատ:

Օրական 2—8 հոր գիրք.—1987 թվականին օրական միջին հաշվով հրատարակվել են 2—3 գրքեր: Հայաստանի հրատարակչությունները լույս են ընծայել 770 սնուն գիրք՝ 9 միլիոն ընդհանուր տպաքանակով: Վա մոտ հարյուր անունով և մեկ միլիոն 850 հազարով ավելի է նախորդ տարվա համեմատությամբ:

Նորություն կիրովականում.—Վերջերս կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանում շահագործման հանձնվեց հորակատույց կենտրոնական աշխատանոցը, որը քառահարկ մի շինություն է՝ շուրջ 3000 ք/մ մակերեսով: Նորակառույցում կան աշխատանոցային տասը բաժիններ՝ իրենց լրիվ հարմարություններով: Այն ունի նաև մեխանիկական, ստուգող-չափիչ սարքավորումների և այլ արհեստանոցներ ու օժանդակ հարմարություններ:

Ապարան.Երևան ջրմուղի կառուցումը.—Այս տարի նախատեսված է մայրաքաղաքի պետքերը բավարարելու համար կառուցել մի հոր ջրմուղ՝ Ապարան-Երևան ջրմուղը, որովհետև այսօր այնտեղ չեն կարող կաթնադրյուրի, Շորշորի, Ջորադրյուրի, Արզնու, Կապույտ լճի պաշարները՝ օր-օրի ավելացող քաղաքի բնակչության պահանջները գոհացնել:

Ջրատարի երկարությունը կկազմի 80 կմ, և քաղաք մուտք գործող ջրի քանակը կավելանա վարկյանում 800 լիտրով:

Բացի այդ, քաղաքի ստորգետնյա կառուցվածքների՝ ջրատարի և կոյուղու ցանցերը պետք է երկարացվեն 30-ական կիլոսետրերով:

Վերոհիշյալ աշխատանքները կավարտվեն առաջիկա երկու տարիների ընթացքում:

